Էջմիածին

ՈՆԴ

ԺԲ. ՏԱՐԻ

Արքիա

ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր

Հայրապետական աթոռոց

Ս. Էջմիածնի

IV

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Սուրբ Հարության պատգամը	3
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ.— Ապրիլյան եղեռնը	6
Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհավորական հեռագիրը բոլոր թեմերին	9
Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի անունով թեմերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	10
Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհավորական հեռագիրը ֆույր եկեղեցիների պետերին	14
Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի անունով ֆույր եկեղեցիների պետերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	15
Եր. Ս. Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրությունը	17
ԴԵՎՈՐԴ Մ. ՎՐԴ. ՎԱՐԴԱՆ.— Լույսի ճաղրանակը	24
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Մեսրոպ Մաշտոց	26
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Նոր տվյալներ հայ ազատագրական շարժումների մասին 18-րդ դարի առաջին երեք տասնամյակներում	32
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	43
Հոգեշնորհ Տիրայր աբեղա Մարտիկյան	46
ՃԵՄԱՐԱՆԱՍԵՐ.— Կյանքը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում	47
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	50
Լուրեր Հեղկաճայ գաղութից	53
Մանուշյան խումբի անունով փողոցի մը բացումը Փարիզի մեջ	55
Հայերը Մարսելի մեջ և շրջակայքը	56
Ամենայն Հայոց ճանգուցյալ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի օծումն ու թաղումը շարժանկարված ի Ս. Էջմիածին	56
Կալիֆորնիոյ թեմին եկեղեցական ճամգումարները Սան-Ֆրանցիսկոյի մեջ	56
Գերաշնորհ Սիոն եպիսկոպոսի այցը Սանտիագո	58
Ա. Հ.— «Քննություն 1941-ի Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիա «կանոնագրության», Շավարշ վարդապետ Գույումճյան	59
Ռ. Մ.— Հակոբ Արամյան, «Նեղոսի հովտում»	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1955 թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնը Քրիստոնեական եկեղեցու մեծագույն և ամենաժողովրդական տոներից մեկն է, որն իր աստվածային լուսավորությամբ, քրիստոնեական հավատքի ուրախությամբ լցնում է բոլոր քրիստոնյա ու հավատավոր մարդկանց հոգիները:

«Արդարև Քրիստոս յարեա՞ւ ի մեռելոց»:

Ամբողջ աշխարհով մեկ, մի անգամ ևս թնդում են Քրիստոսի հրաշափառ և մեծահրաշ Հարության օրհներգները ու սրտառուչ ալելուիաները:

«Քրիստոս յարեա՞ւ ի մեռելոց...»:

Հարության սո՞ւրբ առավոտ...:

Մեր Փրկչի Հարությունը պատմության մեծագույն հրաշքն է: Ս. Հարության տոնը, կամ ժողովրդական գեղեցիկ բացատրությամբ՝ Զատիկը, քրիստոնեական աշխարհի համար մարդկության փրկության, ազատության, բարոյական և հոգևոր վերածնության ու միաժամանակ ՀԱՎԱՏՔԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՏՈՆՆ է: Հարության, վերածննդյան կենարար շունչն է փչում այս առավոտ ամեն կողմ, և՛ բնության մեջ, և՛ հավատավոր, բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց սրտերում:

Քրիստոսի Հարության հավատքի վրա է խարսխված Քրիստոնեական եկեղեցին: Քրիստոսի Հարության պատմական դեպքը հիմնաքարն է Քրիստոնեական եկեղեցու կյանքի և նրա աստվածաբանության: Այդ դեպքը նոր շարժման և նոր կյանքի հիմքը դրեց պատմության մեջ գալիք բոլոր հավատավոր սերունդների համար: Հին աշխարհում բարոյական, հոգեկան, իմացական սնանկության դուռը հասած մարդկության համար հնչեց Քրիստոսի Հարության մեծ և սփոփարար ավետիքը:

Եվ անա՝ համաշխարհային պատմական այդ մեծ եղելության առաջին վկաներն ու ականատեսները՝ հարուցյալ Փրկչի անմիջական առաքյալներն ու աշակերտները, Հարության մեծ ավետիքը իրենց հետ տարան ժամանակակից աշխարհի բոլոր ժողովուրդներին:

«Արդարև յարեա՞ւ Տէր»:

Հարության մեծահրաշ լույսի առաջ փարատվեց առաքյալների մտքի և հոգու վրա իջած ժամանակավոր տարակուսանքի և թերահավատության բանձր ամպը: Հարության ուրախությունը համակեց առաքյալներին, որոնք մի պահ իրենց սիրելի վարդապետի, Բարեկամի և Ուսուցչի մահվամբ հուսախաբված զգացին իրենց և Քրիստոսի հետ կարծես գերեզման իջեցրին իրենց մեսիական հին հույսերն ու երազները:

Բայց Քրիստոսի հարությամբ, հարությունն է առնում նաև առաքյալների ժամանակավորապես մեռած հոգին. նրանք, Քրիստոսի Հարության ավետիքով վերակենդանացած, անհանգիստ հավատքով և սիրով հարուցյալ Փրկիչը քարոզեցին հռոմեական ողջ կայսրության մեծ ոստաններում՝ նոր կյանք, նոր իդեալներ տալով բարոյապես մեռած, հոգեպես փտած աշխարհին:

Եվ երբեմ պատուհակաեություն չէր այն հանգամանքը, որ առաքյալների ապագա գործունեության, քարոզության հիմնական գաղափարը կազմում էր Քրիստոսի մահն ու Հարությունը, այն աստիճան, որ հեքանոս հին աշխարհը զայրույթով էր լսում Հարության մեծ ավետիքը. «Զայրագեալք վասն ուսուցանելոյ նոցա զմեղուվրդեանն և պատմելոյ Յիսուսի զյարութիւն մեռելոց»:

Քրիստոսի Հարությունը, որպես պատմական անհերքելի փաստ, միաժամանակ գրավականն ու երաշխիքն է մարդկության փրկության և նոր կյանքի տիրացման. «Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք» (Հռովմ., Զ 5):

Դարուը բնության վերազարթոնքի եղանակն է, երբ ձմեռային մռայլ մթությունից, քարացած մեռելությունից կյանքը նորից ճարություն է առնում բնության ծոցում հազար երանգներով, և գարնանային լուսաճաճանչ ու հրճվալից ծաղկման տենդով բռնված՝ վերածնվում է մեն-մի ծառ ու ծաղիկ, թռչի ու մարդ: Իսկ եկեղեցին, Քրիստոսի Հարության պատգամով ու ավետիքով, մշտանորոգ կյանքի և հավերժության անսուտ գրավականն է բերում աշխարհին ու մարդկության:

«Քրիստոս ի վերայ ամենեցուն մեռաւ» (Բ Կորնթ., ե 13):

Քրիստոս մեռավ՝ հարություն առնելու և մարդկանց նոր ու հավերժական կյանք պարգևելու համար: Քրիստոսի Հարությունը այդ մշտանորոգ կյանքի պատգամն էր և երաշխիքը. «Մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Քրիստոս տիեզերքի կենսուրախ աղբյուրն է, կյանքի ստեղծագործ զորությունը հավատացյալի համար:

Քրիստոսի հաղթանակը մահվան վրա, նրա ամենահաղթ Հարությունը գերեզմանից՝ նոր դարագլուխ է բացել, նոր շարժման, նոր կյանքի սկիզբն է դրել պատմության մեջ, հեղաշրջել է պատմության ընթացքը, վերիվայր է շրջել հին աշխարհի բարոյական, հոգևոր, իմացական արժեքների տախտակը, լուսավորել է մարդկության ուղին և հեղաշրջել է կյանքի ըմբռնումը: Նոր կյանքի արշալույսն է ծաթել աշխարհի վրա խավար գիշերվանից հետո և լուսավորել մարդկանց մթամած հոգիները:

Հիսուսի Հարությունը, ամենից առաջ, ԿՅԱՆՔԻ հաղթանակն է ՄԱՀՎԱՆ վրա, ԼՈՒՅՍԻ հաղթությունը ԽԱՎԱՐԻ վրա:

Կյանքում անխուսափելի էր մահը Քրիստոսից առաջ: Մահը իշխում էր իբր անեծք Ադամի ողջ որդիների վրա: Մահը մի անպարտելի բռնավոր է, որը գաղտագողի մտնում է ամեն դռնից ու դարբասից և վրդովում՝ կյանքի խաղաղությունը, բնականոն երջանկությունը: Աշխարհը փոքրու հատիկ է մահվան առաջ. մահն է եղել աշխարհների տերը, ամենազոր ուժը աշխարհում, որն իր մահացու գերանդիով անխնա հնձել է կյանքի կանաչ դաշտերում, չի խնայել ծառ ու ծաղիկ, մոր գրկից խլել է երեխային, որբացրել է մանուկներին: Մահը հազարամյակներով հարվածել է մարդկությանը, և մարդիկ անզոր են եղել նրա հարվածների դեմ:

Միայն Քրիստոս հաղթեց մահվան, «խափանեաց զմահ», և իր նետ բերած շղթայով գերեվարեց աշխարհի այդ հզորին: Փրկիչը, «կապեալ զիշխանն մահաձին», մարդկությանը ազատեց մահվան սարսափներից և իշխանությունից. «Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո»:

Արդարև, ինչքա՜ն տխուր, ծանր ու ողբերգական կլիներ մարդկության հակատագիրը՝ «եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ»: Առանց հարության սրտապնդող գաղափարին և պատգամին, կյանքը իրապես կդառնար, բանաստեղծի խոսքերով ասած՝ «Աստծու ծաղրը» և աշխարհը՝ «արցունքի հովիտ»: Ըստ քրիստոնեական հավատքի՝ մահը սկիզբն է հավիտենական կյանքի, և գերեզմանը՝ հավերժության դուռը, «որ տանի ի կեանս յաւիտենականս»: Քրիստոս Իր կյանքով հաղթեց մահվան և ցույց տվեց, որ գերեզմանից այն կողմ կա մի նոր կյանք՝ անմահության կյանքը, և մահը մի գիշերվա քունն է լոկ, հաջորդ օրը զարթնելու համար հանդերձյալ կյանքում, ողջունելու անմահության պայծառ արշալույսը:

Դարերով մարդկության գերագույն իդեալ է եղել ԱՊՐԻԼ, ԱՊՐԵԼ հավերժորեն, հայել անվախճան կյանքի հորիզոններին...ԿՅԱՆՔ, ԱՎԵԼԻ՜ ԿՅԱՆՔ. «զի զկեանս ունիցիք, առատել ևս ունիցիք»— աճա թե ինչի՜ է ձգտել մարդը:

Արդարև մարդը չի ստեղծվել այս անցավոր, կարճ ու տառապալից կյանքի համար, և գերեզմանով չի վերջանում մարդու կյանքը աշխարհում: Եթե այդպես լիներ, չէր արժի ապրել: Գերեզմանը և այս երկրավոր կյանքը գրավական են հարության: Մարդը ծնվել է՝ հավերժորեն ապրելու և ստեղծագործելու համար: Քրիստոսի գերեզմանի հետ բացվում են բոլոր մեռելների գերեզմանները: Հարուցյալ Փրկիչը կենդանություն է բաշխում բոլորին, որովհետև «Աստուած չէ մեռելոց, այլ՝ կենդանեաց»:

Զատիկը տոնն է հավերժական կյանքի: Իսկ Զատիկը հայության տոնն է գերազանցապես, հայ հավատացյալների ազգային-եկեղեցա-

կան վերածնունդյան տոնը: Քրիստոսի Հարության ամենաջերմ հավատացյալներից մեկը եղել է մեր ժողովուրդը, որը շատ է շարչարվել, խաչվել իր համոզմունքների, իր հայրենի սրբություններ համար, բայց երբեք չի կորցրել իր ՀԱՎԱՏՔԸ ՀԱՐՈՒԹՅԱՆ, ԻՐ ՓԸՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: Հայ ժողովուրդը, իր Փրկչի պես, իր կյանքը զոհաբերել է արդարության դատին, լուսավորության գործին, և հանդիսացել է քրիստոնեության մարտիրոսը և խաղաղության նահատակը: Նա իր սրտի ամենաջերմ զգացմունքներով հավատացել է հարության անսուտ պատգամին և ավետիքին, ու ՄԵՌԵԼ Է ԻՐ ՓՐԿՉԻՆ, ԻՐ ՀԱՎԱՏՔԻՆ ՀԱՄԱՐ, ՈՒ ՄԵՌՆԵԼՈՎ ԱՊՐԵԼ՝ ՀԱՎԵՐԺԱՑԵԼ Է ՈՒ ՀԱՍԵԼ ԱՅՍՕՐՎԱ ՊԱՅՄԱՌ ՆԵՐԿԱՅԻՆ:

Մեր թշամիները շատ հաճախ մեր երկիրը վերածել են համատարած գերեզմանոցի և ցանկացել են մեզ բաղել ողջ-ողջ: Մեր ժողովրդի ոսկորներն են թափվել մեր հայրենի անսահման դաշտերի, ձորերի վրա:

Բայց անա մի երջանիկ առավոտ, երբ Ս. Հարության կենդանարար շունչն էր փչում ամենուրեք, հայ ժողովուրդն ու մեր Հայրենիքը հարություն առան ավերակներից, փյունիկ թռչունի նման. հայ ժողովրդի թափված ոսկորների վրա հարության հզոր շունչը փչեց... մահվան դաշտը վերածվեց կենդանության դաշտի... ոսկորներն իրար եկան, միս ու արյուն հագան, կենդանացան, որովհետև «Եմուտ շունչն ի նոսա, եղեն կենդանի և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ...»:

Իր գերեզմանից, իր ավերակներից այսօր հարություն է առել հայ ժողովուրդը և քայլում է դեպի անմահություն:

«Փա՞ռք հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր...»:

Եվ փա՞ռք հրաշափառ հարության քո, ժողովո՛ւրդ իմ, ժողովո՛ւրդ հայոց:

Ա Պ Ր Ի Լ Յ Ա Ն Ե Ղ Ե Ռ Ն Ը

(Հայկական եղեռնի 40-ամյա տխուր տարելիցի առիթով)

1915 թվականի ապրիլ ամիսը...

Հայկական մեծ եղեռնի սև թվականը, երբ Արևմտյան Հայաստանում խաղաղասեր ու աշխատասեր հայ ժողովրդի արյունով ոռոգվեց երկիրը, երբ մեր ժողովրդի արյունը հոսեց գետի նման այն հողերի վրա, ուր նա հազարամյակներով ապրել, ստեղծագործել, կերտել ու աճեցրել էր...

1915 թվականի ապրիլ ամիսը...

Դա այն արյունոտ թվականն է, երբ Արևմտյան Հայաստանի գյուղերում և քաղաքներում, օր ցերեկով, «քաղաքակիրթ ու հայ ժողովրդի դարավոր պաշտպան» Եվրոպայի «քրիստոնյա» պետությունների աչքի առաջ անխիղճ ձևով մորթոտում էին աշխարհի ամենահին ու կուլտուրական ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, որն իր կուլտուրայով, լեզվով ու գրականությամբ, իր ազատատենչ ու լուսաբաղձ հոգու ձգտումներով քիչ վաստակներ չունի քաղաքակիրթ մարդկության առջև։

Ապրիլ ամսվա մեջ, ուզեցին ողջ-ողջ գերեզմանել հայ ժողովրդին։ Այդ անլուր ոճիրը իր նմանը չունի բարբարոսությունների տարեգրությանց մեջ։ Դիվային ծրագիր էր հղացվել՝ բնաջնջելու ողջ արևմտահայությունը։

Բեռլինի վեհաժողովի 61-րդ մեռած հոդվածը հայության սիստեմատիկ բնաջնջման ղենք եղավ համիդյան բռնակալության ձեռքում։

Եվ ահա, այդ դիվային ծրագրի իրականացման համար, ծով արյուն թափվեց, մի հինավուրց ժողովրդի կեսը բնաջնջվեց, հայկական քաղաքներն ու գյուղերը թաթախվեցին հայ ժողովրդի արյան մեջ, քարուքանդ եղավ հայ աշխատավորի արդար վաստակով կանգնած ու ծաղկած մի ամբողջ երկիր, կործանվեցին ու ամայացան տներն ու այգիները։

Արևմտահայաստանի հրդեհվող քաղաքների և արտերի վրայով, թափված արյան հեղեղի միջով, անթաղ մնացած միլիոնավոր զոհերի վրայով, կործանված պատմական հոյակապ և անկրկնելի հուշարձանների վրայով, այն ամենի վրայով, ինչ գեղեցիկ էր և հայկական, ինչ ստեղծվել էր հայ սերունդների հանճարով, այդ բոլորի վրայով անցավ վայրագության, չարդարարության ու հետամնացության անզուսպ ալիքը։

Արևմտահայությունն ապրեց իր արյունոտ Գողգոթան... և Արևմտյան Հայաստանը, բնության հազար ու մի հրաշալիքներով հարուստ այդ գեղեցիկ երկիրը, ավերակների կույտ դարձավ, համատարած մի գերեզմանոց...։

Թյուրքական սուլթանական բռնակալությունը փոքր ազգերի ոչնչացման քաղաքականություն էր վարում։ Թյուրքիայում ազ-

գային փոքրամասնություններն ապրում էին անասելի տանջանքների, կեղեքումների, ահուդողի, արյունի և արցունքի մեջ։ Թյուրքիայում հայ ժողովուրդը հայակեր քաղաքականության զոհը դարձավ... Թյուրք բռնապետներն աշխատում էին ջնջել հայ ժողովրդի և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան։

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով է դրված սուլթանական Թյուրքիայի այդ անլուր ոճիրը...

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա 1915 թվականի ապրիլյան մեծ եղեռնը։ Մոռանալ նշանակում է մեղսակից դառնալ ոճրագործության... Ամեն մի վերապրող հայ մարդու հիշողության մեջ դեռ թարմ են այսօր էլ ապրիլյան մեծ եղեռնի կրոկրծալի հիշատակը, մեր նահատակված եղբայրների, քույրերի, մայրերի, մեր հարազատների զազանային սպանությունների արյունոտ պատկերները...։ Քանի՞-քանի՞ դագաղներ կան, եղեռնից հրաշքով ազատված յուրաքանչյուր վերապրող հայ մարդու սրտում, դագաղներ սիրելիների, որոնք գերեզման իսկ չունեցան ու ընկա՞ն տարագրության ճանապարհի վրա, ընկան անապատներում, կիրճերում, ջրերի հորձանքներում։ Հայ ժողովրդի ոսկորներն են թափված այսօր նրա պապենական հողերի վրա, մեր անսահման դաշտերի վրա. Եղեկիելյան տեսիլքի նման՝ «և դաշտն այն լի էր ոսկերոք մարդկանով։

Եղեռնի օրերին, հայ ժողովրդի արյունոտ ճակատագիրը հավասար հերոսությամբ բաժանեցին նաև հայ մտավորականությունն ու հայ հոգևորականությունը։ Այդ անհավասար ու հերոսական մարտում ընկա՞ն հայ նորադույն դրականության ներկայացուցիչները, ընկա՞ն հերոսի մահով, ընկա՞ն հայրենի սրբությունների համար, արի՛, աննահա՛նջ, վեհ և անպարտելի՛։

Հայ հոգևորականությունն էլ ապրեցավ իր Գողգոթան, հովվի արյունը խառնվեց իր հոտի արյան հետ, ոճրագործը միասին հնձեց հոտն ու հովվին, որոնցից շատեր «քարկոծեցան, սղոցեցան, սպանվեցան սրոյ մեռան, կախեցան...»

Ու կատարվեց կատարվելիքը... հայության գլխի վրա կախված մեծ աղետը եկավ ու անցավ... Անցան նաև այդ ոճիրը գործող հայ ժողովրդի թշնամիները և փոշիացան։

Պատմությունը սակայն մեր ժողովրդի ճակատին գրել էր ոչ թե մեռնել, այլ ապրել ու բարձրանալ։

Հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել բախտի հարվածներից. նա կրել է բյուրավոր աղետներ, կոտորածներ, և դուրս է եկել այդ զարհուրելի արհավիրքներից, տարերային այդ շարիքներից, մղձավանջներից արյունլվա՛, վիրավո՛ր սրտով ու հոգով, բզքված, բայց ապրելու և ստեղծագործելու անմահ ոգով։ Նա, հայ ժողովուրդը, միշտ ոտքի է կանգնել այդ տարերային փլուզումներից և կոտորածներից, և իր ավերակների վրա նորից է վառել իր հավերժական գոյության խարույկը, և հավերժացրել է իր ապրելու հզոր կամքը, մինչ նրա աչքերի առաջ փոշիացել են աշխարհակալ բռնակալությունները ու բռնակալները, Դարեհները ու Զինդիղ-Խաները, Շահ-Արբասները ու արյունարբու Համիդները...։

Հայ ժողովուրդը երբե՛ք չի մոռանա իր նահատակներին... հայ ժողովրդի սրտում և հիշողության մեջ միշտ թարմ կմնան իր նահատակ եղբայրների և քույրերի զազանային կոտորածների արյունոտ պատկերները։

Վա՛յ այն ժողովրդին, որ կմոռանա իր նահատակներին, Հայրենիքի և ազգի հավերժության համար անձնուրացորեն զոհված մեծ մեռելներին...

1915 թվականի ապրիլյան եղեռնը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկն է, բայց միաժամանակ հայ ժողովրդի անընկճելի կենսունակության, լուսավոր ապագայի նկատմամբ նրա վառ հույսերի և անբեկանելի հավատքի սրտառուչ առհավատչյան։ Մեծ Թումանյանի հոյակապ բնորոշմամբ՝ «Զարմանալի է մեր ժողովրդի կենսունակությունը. ո՛չ մի բռնակալ, ո՛չ մի բարբարոս չեն կարողացել ընկճել, նվաճել հայ ժողովրդի այդ ազգային հատկությունը»։

Եվ ահա համազգային այդ աղետի օրերում էլ, անդունդի եզր հասած հայ ժողովրդի մեծ հոգին շարժվում է հզոր ու աննկուն, ու արյունի, կոտորածի, փլատակների միջից, հեքիաթի փյունիկի նման, «հարյա՛վ հոգին որ հայ ժողովրդի»։

Հայ ժողովրդի այդ ծանր, մղձավանջային օրերին օգնության ձեռք մեկնեց ռուս ազնիվ ժողովուրդը, ոտքի կանգնեցրեց նրան և սկսեց բուժել նրա վերքերը. ռուս ժողովուրդը փրկեց և կյանքի կոչեց հայ ժողովրդին, որը կանգնած էր գերեզմանի եզրին։ Կատարվեց Եղեկիելյան տեսիլքը. «Եվ ասաց ինձ. Մարդեա՛, սա ամենայն տունն Իսրայելի է. ահա ասացին. Չորացան մեր ոսկրքն, եղեն հեղեղանի և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ... և ահա բացից զգերեզմանս ձեր, և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց...»։ Ռուս ժողովուրդը ոտքի կանգնեցրեց հայ ժողովրդին, կյանք, օր, արև և ճանապարհ տվեց նրան. նրա պատմության և կյանքի համար ստեղծված մռայլ ու ծանր օրերին։ Եվ ցավի ու մոխիրների տակից վերածնվեց հայ ժողովուրդը։ Նա աճում է և զարգանում իր հայրենի հողի վրա, ոգևորված ու լցված աշխատանքային մեծ կենսունակությամբ, քաջերից լույս և կյանք է կերտում իր և դալիր բոլոր սերունդների համար։

Հայ ժողովրդի համար նվիրական է ապրիլյան եղեռնի զոհերի խնկելի հիշատակը։

Եղուր լի անցել նրանց նահատակությունը, հայ ժողովրդի և Հայրենիքի համար նրանց թափած սուրբ արյունը։

Երախտագետ հայ ժողովուրդը, դալիք հայ սերունդները մեծ գուրգուրանքով կպահեն իրենց հոգում հայ զոհերի սուրբ հիշատակը, որոնք ընկան հանուն հայ հավատքի, հանուն հայրենի սրբությունների, հանուն Հայրենիքի, հանուն ազատության և քաղաքակրթության։

Վերջնական հաղթանակն ու արդարությունը կլինեն մեր նահատակների կողմը։

Ա՛յդ է հայ ժողովրդի խորը հավատքն ու համոզմունքը։

Հավերժական փա՜ռք մեր ժողովրդի նահատակներին։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ»
ԱՄՍԱԳՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԵԼՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՎ,

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԹՈՂՈՒՄ ՊԵՄԲԵՐԻՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՏԻՐՈՋ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼՈՎ ՁԵՐ ԵՎ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՏԻԿԸ ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՏԵՐՆ ԻՐ ՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԱՆԴԱՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Ջատկի առթիվ ընդունեցեք անկեղծ շնորհավորություններ և բարեմաղթություններ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱԳԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝
ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋՍՊԱՀՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ս. Ջատկվա առթիվ Ձերդ Ամենապատվության և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին մատուցում ենք մեր ամենասրտագին շնորհավորությունները: Աղոթում ենք ամենակարող Աստուծուն, որ հաստատուն և անսասան պահի մեր եկեղեցին:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱԳԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Ս. Ջատկի առթիվ ընդունեցեք ամենէին շնորհավորանքը և մաղթանքը՝ Մայր Աթոռի պայծառության և անսասան պահպանման համար:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝
ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ջատկական սուրբ տոնի առթիվ ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ Ձեզ, Մայր Աթոռ անսասանության, Գերագույն Հոգևոր Խորհուրդին և Հայրենիքի ժողովուրդին:

Առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի հայոց՝
ՄԱՄԻՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՊԱՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Քրիստոսի Հարության տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երկար կյանք, հաջողություն և երջանկություն:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ մաղթում եմ Ձերդ Սրբազնության առողջություն և եռանդ՝ տանելու այդ ծանր ու պատասխանատու գործը, որ Հայ եկեղեցին Ձեզ է վստահել: «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Խոնարհ որդի՝

Առաջնորդական տեղապահ Շիրակի թեմի՝
ԳԵՎՈՐԳ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐԺՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Վրաստանի թեմական խորհուրդը և հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են Ձեզ Ձատկական տոնի առթիվ: Աղոթում ենք Ամենաբարձրյալին՝ Իր Հարությամբ շնորհելու բաղձալի խաղաղություն հանյալ աշխարհին: Ցանկանում ենք ամբողջ միաբանությանը առողջություն և երկար կյանք:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵԻՑ

Ընդունեցեք մեր ջերմ շնորհակալությունները Ձեր սիրալիր հեռագրի համար և բարեբաստիկ Ձատկվա մեր փոխադարձ անկեղծ մաղթանքները: Աղոթում ենք խաղաղության և մեր Մայր Հայրենիքի բարօրության համար:

Առաջնորդ Եգիպտահայ թեմի
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ ընդունեցեք Ռումինահայ թեմի և մեր ստորագին մաղթանքները Ձերդ Սրբազնության արևշատության, Մայր Աթոռի անսասանության, Մայր Հայրենիքի բարօրության և խաղաղության համար:

Առաջնորդ Ռումինահայ թեմի
ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Տյառն մեր Հրաշափառ Ս. Հարության տոնը կփութամ ստորագին շնորհավորել Ձեր Սրբազան Եղբայրության, պատկառելի Գերագույն Հոգևոր խորհուրդին և Մայր Աթոռ միաբանական ուխտին, հանդերձ Ճեմարանի պատվարժան ուսուցչական կազմին և սիրելի աշակերտության, բարեմաղթելով աշխարհին խաղաղություն, Մայր Աթոռ և նվիրապետական Աթոռներուն անսասան հաստատություն՝ արժանավոր գահակալներու ընտրությամբ, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո պայծառ ամրություն, և Ձեր Սրբազնության բաշառողջ արևշատություն ու Տերամբ կարողություն, Ձեր դժվարին պաշտոններուն մեջ:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Ձատկվա առթիվ մատուցում ենք ջերմագին շնորհավորություններ: Սրտագին բարեմաղթություններ, բարօրություն Հայոց եկեղեցուն:

Հայրապետական պատվիրակ Եվրոպայի թեմի՝
ՍԵՐՈՎԲԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Մեր Տիրոջ Հրաշափառ Հարության բարեբաստիկ տոնի առթիվ և հանուն մեր հոգևորականության, թեմական ժողովի և եկեղեցական խորհուրդների, կանանց և երիտասարդական կազմակերպությունների, բոլոր թեմական մարմինների, ի դեմս մեր եկեղեցու հավատացյալի, ցանկանում ենք Ձեզ երջանիկ Ձատիկ: Աղոթում ենք աշխարհի խաղաղության և էջմիածնի Մայր Աթոռի հաջողության համար:

Առաջնորդ Կալիֆորնիոյ հայոց՝
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը և անձամբ ես շնորհավորում ենք Ձեզ Փրկիչ Քրիստոսի լուսապայծառ Հարության և Զատկի տոնի առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար կյանք և հովվական բեղմնավոր գործունեություն՝ ի բարօրություն հայ ժողովրդի և եկեղեցու: Թո՛ղ հաղթանակի խաղաղությունն աշխարհում: Համբուրում ենք Ձեր աջը:

Ադրբեջանի հայոց թեմի թեմական առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՌՈՍՏՈՎԻՑ

Քրիստոսի Հարության մեծ Զատկի առթիվ մենք, հոգևոր խորհուրդը և հավատացյալները հղում ենք անկեղծ շնորհավորանքներ և լավագույն ցանկություններ: Աղոթում ենք Ամենաբարձրյալին՝ շնորհելու խաղաղություն համայն աշխարհին, սեր և բարեկամություն բոլոր ժողովուրդների միջև:

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր Ս. Զատիկ: Քրիստոսի Հարության շնորհիվ՝ մաղթենք բարին հաղթանակ՝ երկիրն և Մայր Աթոռը բարգավաճին խաղաղությամբ և սիրով:

ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Զատկվա առթիվ սրտանց մատուցում ենք մեր շնորհավորություններն ու լավագույն բարեմաղթությունները:

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Լավագույն մաղթանքներով շնորհավորում ենք Փրկչի Հարության տոնը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԹԱՎՐԻԶԻՑ

Ատրպատականի հայոց թեմական ժողովի և խորհրդի կողմից, քահանայից դասի և համայն ժողովրդի հետ միասին շնորհավորում ենք Փրկչի Ս. Հարության հրաշափառ տոնը, մաղթելով, որ հարուցյալ Փրկիչը անսասան և հարատև պահի Հայրապետական Աթոռը նամբարում ընդ երկայն ավուրս:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Փառապանծ Ս. Զատկվա առթիվ մատուցում ենք շնորհավորություններ, աղոթելով Ամենակարողին, որ հաստատուն պահի Հայոց եկեղեցին և Հայրապետական Աթոռը:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Հարգանոք տեղեկացնում ենք Ձեզ Ձատկվա Ձեր սիրալիր պատգամի ստացումը: Ընդունեցեք հնդկահայերի կողմից փոխադարձ ջերմ շնորհավորություններ:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԴԱՄԱՍԿՈՍԻՑ

Շնորհակալություններ և շնորհավորություններ Ձատկի տոնի առթիվ:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅՈՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ

ԼՈՆԴՈՆԻՑ

Պարոն Գալուստ Կյուլպենկյանի կողմից ինձ հանձնարարված է տեղեկացնել Ձեզ ստացումը Ձատկվա առթիվ շնորհավորությանց և բարեմաղթությանց Ձեր սիրալիր հեռագրի, ջերմագին շնորհակալություն հայտնել Ձեզ այդ մասին, որը նա շատ է գնահատում և խնդրում է Ձեզ՝ ընդունել իր փոխադարձ անկեղծ բարեմաղթությունները:

ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ

Փրկչի լուսապայծառ Հարության առթիվ շնորհավորում ենք Ձեզ բարձր Սրբազնությանը, ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկար կյանք՝ ի բարություն Հայոց Առաքելական Եկեղեցու և Հայրենիքի:

ՊԱՐԳԵՎ ԱԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ,
ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ,
ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցու հավատացյալ ժողովուրդը, եկեղեցու միաբանությունը և հոգևոր հովիվ Տ. Հարությունն քահանա, շնորհավորում ենք Քրիստոսի Ս. Հարությունը: Մենք ևս Ձեզ հետ միասին աղոթում ենք տիվ և գիշեր և կրկնում Քրիստոսի խոսքը՝ «Խաղաղություն ամենեցուն»:

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐՈՒԱՆՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: — «Ձեզ և մեզ մեծ աւետիք»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Փոխադարձում ենք Ս. Ձատկվա շնորհավարություններն ու բարի ցանկությունները: Երախտագիտությամբ ձայնակցում ենք Ձեր աղոթքներին:
Անկեղծ մեծարանքներով՝

ՌՈՄԱՆ ԵՍԱՅԱՆ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒՐՅԱՆ ՏՈՆԻՉԱՌԻՎ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ԳՈՒՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

ԱԿՆԱԾԱՆՔՈՎ ՇՆՈՐՀԱԿՈՐԵԼՈՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՀԱՐՈՒՅՑԱԼ ՓՐԿԻՉԸ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՐԳԵՎԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԵՋ ԱՐԵՎՇԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԱՆԴԱՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՏԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՐԻԼԻՍԻՑ

«Քրիստոս յարեա՛ւ»:

Սրտանց շնորհավորում եմ Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ամբողջ հոգևորականությունը և ամբողջ հայ ժողովրդին Քրիստոսի Հարության ուրախալի տոնի առթիվ, և թո՛ղ այդ տոնը բերկրանք բերի համայն աշխարհին և խաղաղության հաստատումն ամբողջ աշխարհում:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ՍՈՖԻԱՅԻՑ

«Քրիստոս յարեա՛ւ»:

Ժամանակը, որ մոռացության ոգով է պատում մարդկային կյանքի բազմաթիվ նշանակալից անցքեր, բոլորովին անզոր է մթագնելու հիշողությունները առավածային անցքերի մասին: Ընդհակառակը, նա առավել պայծառ կերտով է փառաբանում այդ անցքերը: Տարեցտարի, սերնդից սերունդ հնչում է ավետիքը Քրիստոսի Հարության մասին, և դարերը ոչինչ չեն կարող խլել այդ փառապանծ հրաշքի անբառում բարմությունից, հրաշք, որը իմաստ է տալիս մարդկային գոյությանը և քաղցր հույսերով համակում հավիտենական կյանքի ձգտող մարդկային սիրտը:

Մենք մեծ երջանկություն ենք զգում ի Քրիստոս, որ կարողանում ենք շնորհավորել Ձեզ բարձր Սրբազնությանը բերկրալի ողջույնով՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ւ»: Մտաբերելով, թե ինչպես հաղթականորեն գիրեզմանից հարություն առած մեր Փրկիչն ասաց Իր հավատարիմներին հուզիչ խոսքերը՝ «Ողջ է» (Մատթ., ԻԸ 9) և «Ողջոյն ընդ ձեզ» (Յովհ., Ի 19), մենք հաստատ հույսով ու հեզաբար ապրում ենք հարուցյալ Կենսատուին՝ թո՛ղ Նա խնդություն և խաղաղություն շնորհի երկրային բազմաչարչար մարդկությանը և թո՛ղ հաղթանակի կյանքը մոնվան դեմ:

Ողջագուրելով Ձեզ սիրով ի Տեր, մենք երջանիկ ենք զգում, որ Քրիստոսի Հարության առթիվ Ձեզ շնորհավորում ենք Հույսարական Ուղղափառ եկեղեցու օրբազան Սինոդի անունից և իմ անունից, և ցանկանում ենք Ձեզ, Ձեր օրհնյալ կղերականներին և Ձեր բարեպաշտ հոտին՝ ուրախություն և խաղաղություն ի Քրիստոս, որ «յարեաւ ի մեռելոց»:

«Քրիստոս յարեա՛ւ»:

ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԿԻՐԻԼ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Փոխադարձաբար, եղբայրական սիրով ի Քրիստոս, շնորհավորում եմ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը՝ Քրիստոսի Հարության փառապանծ տոնի առթիվ:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ՆԻԿՈԼԱՅ

ՌԻԳԱՅԻՑ

«Քրիստոս յարեա՛ւ»:

Ընդունեցեք, Տեր, իմ սրտագին ողջույնը Քրիստոսի Հարության մեծ տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ բարեհաջողություն և բազում հոգեկան բերկրանքներ:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ՝

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ձերդ Սրբազնություն, սիրեցյալ եղբա՛յր ի Քրիստոս.

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ: Ալէլուիա» (Թուղթ առ Հռովմայեցիս, Զ 9):

Քրիստոսի ամբողջ խորհրդավոր Մարմինը, որի մեջ ընդգրկվում են ամեն դարերից բոլոր նրանք, որոնք «Քրիստոս» են (Թուղթ առ Հռովմայեցիս, ԺԲ 5), բաժին ունի մեր Տիրոջ Հարության այն հաղթանակի և փառքի մեջ, որ մենք հերկայիս տոնախմբում ենք Զատիկին՝ ցնծությամբ և շնորհակալությամբ: Մեր սրտերը ուրախանում են բերկրությամբ, որ Քրիստոս հաղթել է մահվան, և բացել է մեզ համար հավիտենական կյանքի դուռը:

Հարության մեջ մեր ընկերակցությամբ կոչված լինելու եղբայրներ, տարբեր ավանդություններով հրիստոնյաներ կարող են զգալ հոգու միություն, որ վերացնում է ժամանակի և տարածության բոլոր պատնեշները, որովհետև մենք բոլորս անդամներն ենք այն մեկ Մարմնի, որ փրկված է Հիսուս Քրիստոսի արյամբ. և որ ընտրված է յուրաքանչյուր ժողովրդի կողմից:

Երբ Զատկվա օրը երկյուղածությամբ մենք ողջունում ենք մեր հարուցյալ Տիրոջ և կրկին լսում Նրա խոսքերը՝ սպասող առաքյալներին՝ «Խաղաղութիւն ընդ ձեզ», մենք աղոթում ենք, որ այս խաղաղությունը և Զատկվա ցնծությունը լցնեին յուրաքանչյուր հավատացյալ հոգի, և շողշողային աշխարհին իբրև ջահ, որն այնքան խիստ կերպով հարկավոր է՝ փրկվելու մեր հրիստոնեական հույսի վստահությամբ:

Թո՛ղ Հարության զորությունը լինի Ձերդ Սրբազնության, Ձեր միաբանության և Ձեր հավատացյալ ժողովրդի հետ, զորացնելու Ձեզ մեր Տիրոջ համար Ձեր ամեն վկայության մեջ, և թո՛ղ Նա հեղու Ձեր եկեղեցու վրա իր առատ օրհնությունները:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ՝

ՋԵՈՖՖՐԻ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մոսկվայի Հոգևոր Ճեմարանը, Քրիստոսի Հարության լուսապայծառ տոնի առթիվ, հանձին Ձերդ Բարձր Սրբազնության, շնորհավորում է հնագույն Հայոց եկեղեցին և ցանկանում է բարգավաճում՝ ի շահ մեր մեծ Հայրենիքի:

«Քրիստոս յարեա՛ւ»:

Մոսկվայի Հոգևոր Ճեմարանի
ռեկտոր՝ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՌՈՒԺԻՑԿԻՑ
տեսուչ՝ ՊՐՈՖԵՍՈՐ ԴՈՆՏՈՒՍՈՎ



ԵՐՋԱՆԿԱՀԻԾԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Նորընտիր Վեհափառ Հայրապետը գահ բարձրացավ հայ ժողովրդի պատմության նշանակալից շրջաններից մեկում, երբ դրված էր բովանդակ հայ ժողովրդին Մայր Հայրենիքի շուրջը համախմբելու հարցը։

Վեհափառ Հայրապետի այս նորագույն շրջանի գործունեության առանցքային մասն են կազմում Նրա վիթխարի ջանքերը՝ կազմակերպելու ներգաղթի վեհ ու սրբազան գործը և դրա հետ անմիջապես առնչվող աշխատանքները։

1945 թվականի դեկտեմբերին էր, որ մամուլում հրատարակվեց ներգաղթի մասին կառավարության կայացրած պատմական որոշումը, «Նկատի ունենալով,— ասված է այդ հաղորդագրության մեջ,— արտասահմանում ապրող հայերի դիմումը՝ Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար նրանց թույլտվություն տալու մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ղեկավար մարմինների միջնորդությունը, ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշում է ընդունել արտասահմանից հայերի Հայրենիք վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին» («Էջմիածին», 1944 թ., նոյեմբեր-դեկտեմբեր)։

Ս. Էջմիածինը խանդավառ կերպով արձագանքեց այս որոշմանը։

Հայրենասեր Գեորգ Վեհափառի փայփայած հույսերը սկսում էին իրականանալ։ Դեռևս Իր անդրանիկ աշխարհաբար կոնդակում Վեհափառը գրում էր. «Պիտի տեսնե՞մ արդյոք օտարության մեջ ցաք ու ցրիվ ընկած հայությունը համախմբված իր հայրենի երկրում՝ Խորհրդային Հայաստանի իշխանության ներքո, որ աչքս խաղաղ գոցեմ, հոգուս ու մարմնիս հանգիստ տամ և հայ ժողովրդի ողորմիսը լսեմ» («Էջմիածին», 1946 թ., ապրիլ-մայիս)։

Ու այնուհետև հայրենասեր Հայրապետը սկսեց հանդես գալ Իր պատմական կոչերով, հարազատ թարգմանը լինելով Իր ժողովրդի իղձերին ու ցանկություններին։

1946 թվականի Նրա ռադիո-ելույթը լավագույն փաստն է Նրա հայրենասիրական վառ զգացումների։ «Աղոթում եմ Ամենաբարձրյալին,— ասում է այդ ելույթում Վեհափառ Հայրապետը,— որ Իր հովանին սփռե գաղութահայ կարոտակեզ ժողովրդի վրա և առաջնորդե նորան իր պատմական հայրենի հողը, որտեղ ցնծությամբ և գորովով սպասում են նրան Մայր Հայաստանի ժողովուրդը, Աստվածային այս օրհնության միացնում եմ նաև Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետության օրհնությունը ու սրտալի բարի գալուստ մաղթում» («Էջմիածին», 1946 թ., հունվար)։

Նույն օրերում լույս տեսավ նաև հայրենասեր Հայրապետի շրջաբերականը ուղղված արտասահմանի առաջնորդներին, «Սովետական Հայաստանում կազմակերպված Ներ-

---

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № VII—VIII-ից, X-ից և 1955 թվականի № III-ից։

Երջանկահիշատակ Հայրապետը Վեհարանի ընդունելության սրահում

գաղթի կոմիտեն,— գրում է Վեհափառն Իր այդ կոչի մեջ,— հրահանգել է տեղերում կոմիտեներ կազմակերպել, որպեսզի ներգաղթը կանոնավոր, արագ և հաջող կատարվի։ Հատկապես առաջնորդներիդ վրա պարտականություն կա Ձեր հեղինակությամբ, ճարտար լեզվով և ազդու խոսքով՝ աջակցելու հիշյալ կոմիտեների հաջող կազմակերպմանը, առաջ քաշելով հեղինակավոր, գործունյա և ներգաղթի գաղափարին նվիրված անձանց» («Էջմիածին», 1946 թ., հունվար)։

Վեհափառը հորդոր է կարդում բարեգործական ընկերություններին և ազգային մեկենասներին, որ սիրով ու առատաձեռնությամբ մասնակցություն բերեն ներգաղթի սուրբ գործին։

Վեհափառ Հայրապետը, սակայն, ուներ մեծ ու հավատավոր մարդկանց հատուկ հավատք՝ սկսված արդար գործի բարի արդյունքների մասին։ Եվ մեծանուն Հայրապետը աշխատել է մարմին տալ Իր սկսած գործերին, հաճախ ամենադժվարին պարագաներում։ Լավատեսությունը Վեհափառի նկարագրի ամենահիմնական գծերից մեկն էր։

Միաժամանակ այս օրերին էր, որ ըուռն թափով շարունակվում էր հայրենադարձ քարավանների ժամանումը Մայր Հայրենիք։ Հայրենի հարազատ պետությունը ո՛չ մի միջոց, ո՛չ մի ջանք չէր խնայում ներգաղթողներին կազմակերպված ձևով տեղավորելու և բնաշխարհի հայությունը գրկաբաց ընդունում էր իր տարագիր եղբայրներին և քույրերին։

Այդ օրերին հանգստություն չուներ նաև Վեհափառ Հայրապետը։ Նա Սիմեոն ծերունու նման «խաղաղությամբ ալեօքն», տեսնելով իր հոտի դարավոր երազներից մեկի՝ հայրենադարձի իրականացումը, երբ հեռավոր հորիզոններից երամ առ երամ Հայրենիք էին գալիս հայրենաբաղձ քարավաններ, ապրելու հայրենի հողի վրա, Ս. Լուսավորչի Աթոռի շուրջ, լինելու համար իրապես «մի հօտ և մի հովիւ»։

Վեհափառ Հայրապետը, իր ազգու կոչերովն ու հորդորներովը, խրատում էր իր հոտի բոլոր անդամներին՝ յուրովսանն սատարել համազգային, պատմական նշանակություն ունեցող ներգաղթի աշխատանքներին, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես։

Սփյուռքը իր ազգային-եկեղեցական մարմիններով, մամուլով սրտագին արձագանքում էր Վեհափառի հայրենասիրական կոչերին և գցում էր իր լման համազգային դանձանակի մեջ։

Ուշագրավ է այդ առիթով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի գրությունը ուղղված Վեհափառին, որով շնորհակալություն էր հայտնվում Սփյուռքի հայության հայրենասիրական վառ զգացմունքների համար ներգաղթի օժանդակության ասպարեզում։

Մեծագործ Հայրապետի արծվատես նայվածքից չէր վրիպում երբեք ժողովրդին և Հայրենիքին անսահմանորեն և անշահախնդիր կերպով նվիրված անձնավորությունների, կազմակերպությունների անունն ու հայրենասիրական գործը։ Այս առթիվ նա շատերին արժանացրեց իր հայրապետական բարձր գնահատության, նրանց մատուցած հայրենասիրական գործերի համար։ Այսպես, Վեհափառը, բարձր գնահատելով պարոն Բագրատ Պագալյանի հասարակական աղգոգուտ գործունեությունը ներգաղթի գործում, հայրապետական կոնդակով շնորհեց նրան Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան։ Պարոն Բագրատ Պագալյանի անվան տրված հայրապետական կոնդակում Վեհափառը հետևյալն է գրում ներգաղթի մասին.

«Ներգաղթը ներկա հայ կյանքի խոշորագույն երևույթներից գլխավորն է. նա մեր անցյալ թշվառ կյանքի անվի թեքումն է դեպի բախտավոր կյանքը. նա ազգահավաքման սկիզբն է դնում հայրենի երկրում, որը պիտի նպաստե հայ ժողովրդի աճման, զորացման և նրա կուլտուրական վերելքին։ Յուրաքանչյուր հայ ազգասեր և հայրենասեր մարդու բնական ու բարոյական պարտքն է նպաստել այդ ազգային շարժմանը։

Իսկ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անունով գրված նամակ-կոնդակում Վեհափառը գրում է.

«Հարգարժան նախագահ՝ Վսեմաշուք Առաքել Նուպարին, Կեդրոնական վարչության նախագահ՝ արդոյապատիվ Արշակ Գարագյոզյանին, Վարիչ-պատվիրակ՝ արժանապատիվ Վահան Մալեզյանին և Միության պատվարժան ու երախտաշատ ղեկավարներին.

«Մեծ է Ձեր երախտիքը հայ Սփյուռքի ազգապահպանման գործում։ Ազգասիրական Ձեր այդ աղնիվ գործունեության լավագույն և նորագույն օրինակը տվեցիք այսօր ևս՝ մեծագույն ոգևորությամբ ու հաջողությամբ դլուխ բերելով մեկ միլիոն դոլարի հանգանակությունը՝ ի պետս բազմահազար հայրենադարձ հարազատների։

Հայրապետական բարձր գնահատության են արժանացել ոչ միայն անհատ անձնավորություններ և առանձին կազմակերպություններ, այլ նաև Սփյուռքի ողջ հայությունը՝ ներգաղթի նկատմամբ ցուցաբերած բոլորանվեր ու սրտագին վերաբերմունքի համար։

Այս առթիվ գրված հայրապետական կոնդակները թանկագին մարգարիտներ են իրենց քրիստոնեական շնչով, հայեցի մտայնությամբ, հայրենասիրությամբ, լեզվական բարձր կուլտուրայով. ներգաղթի առթիվ գրված յուրաքանչյուր տողի մեջ հայրենասեր Հայրապետը ներդրել է Իր սիրտը, Իր հոգու քաղցրությունը, հավատի կրակը, Իր մտքի ու զգացմունքների սրտագրավ պատգամները։ Միաժամանակ հայրական Իր սաստն ու վրդովմունքը ներգաղթի բոլոր թշնամիների և չարակամների դեմ։ «Ով բացահայտ թե գաղտնի, դավեր է լարում հայ Սփյուռքի հայրենադարձի դեմ, նա կամա թե ակամա դուրս

է մնում հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնությունից»,— գրում է Վեհափառը։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մեր ազգային-եկեղեցական պատմության նորագույն շրջանի ամենակարևոր երևույթներից մեկն է։ Նա դժվար ու բարդ պայմաններում բարձրացավ Հայրապետական Գահ, բայց իր բարձր անձնավորության բարոյական ու հոգեկան հազվագյուտ բարեմասնություններով, անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու առաքելավանդ կանոնների պահպանմամբ և նախանձախնդրությամբ, մի գլուխ բարձրացրեց Մայր Աթոռի հմայքը, և Ինքը անձամբ հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական միասնության սրտառուչ խորհրդանշանը։ Մեր օրերում նրանից բացի ոչ ոք թերևս չպիտի կարողանար այնքան բարձր պահել Ամենայն Հայոց Հայրապետության բարձրագույն հեղինակությունը, Հայաստանյայց եկեղեցու ուղղափառությունը, հավատքն ու ոգին։ «Հայ մարդ,— գրում է Վեհափառը,— հավատարիմ մնա քո երանելի նախնյաց ավանդներին և բարձր ու անվթար պահպանիր ազգանվեր եկեղեցուդ վեհիրավությունն ու գերիշխանությունը արտաքին թե ներքին ամեն մի ոտնձգությունից և զգույշ եղիր գառնազգեստ գայլերից, որոնք փորձում են առերևույթ շահաստացության սին խոստումներով գայթակղեցնել քո միտքը, խռովել քո հոգին և ոստայնել քո խիղճը»։

Եկեղեցասեր մեծ Հայրապետը, հավատարիմ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրական սկզբունքներին, կոչ էր անում Իր հոտին է՛լ ավելի ամրացնելու Ազգային եկեղեցու միասնականության սրբազան սկզբունքը։ «Հայաստանյայց Առաքելական, Ազգային Եկեղեցու ազնիվ զավակներ,— գրում էր նա,— հավատարիմ ձեր առաքինաշատ նախնյաց սրբալույս հիշատակին՝ միասիրտ ու միակամ ծառացեք այն բոլոր անպատասխանատու կենտրոնախույս ուժերի դեմ, որոնք հատվածական իշխանակալության, անհատական փառատենչության հոռի տրամադրություններից կուրացած, մոլեգին փորձեր են անում հիմքերը փորելու Ազգային Եկեղեցու սրբազան միասնության և քակելջլատելու ազգային-կրոնական դարավոր ուխտն ու հոգևոր դաշինքը։ Եվ նա սրտի խորը կսկիծով էր լսում ամիլիոնավոր հայ նահատակների նվիրական արյամբ սրբագործված Ազգային Եկեղեցին քաղաքական ճամարտակությամբ ըմբշավայր-հանդիսարանիս վերածելու բոլոր հիվանդագին ձիգերի մասին։

Գեորգ Զ. Կաթողիկոսի օրով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայրենի հարազատ պետության փոխահարաբերությունները եղել են ավելի քան սերտ ու բարեկամական։ Վեհափառ Հայրապետն Իր հեռատես ու իմաստուն վարչագիտությամբ նվաճել է ոչ միայն բովանդակ հայության սերն ու երախտագիտությունը, քրիստոնեական քույր եկեղեցիների բարեկամությունն ու անխարդախ համակրանքը, այլ նաև հայրենի պետության աջակցությունն ու բարեկամությունը, որպես Հայրենիքի առաջին և հավատարիմ քաղաքացին։ Ամենայն Հայոց Հայրապետության դիրքը Գեորգ Զ. Կաթողիկոսի օրով դեպի մեր Սովետական կառավարությունն ու Հայրենիքը եղել է միշտ օրինական, ուղիղ, ազնիվ, ըստ տերունական պատվերի՝ «Տուք ոչայսերն կայսր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։ «Ով անկեղծորեն սիրում է մեր Ազգը և պաշտում մեր Հայրենիքը, նա պարտավոր է զորավիգ հանդիսանալ հայրենի պետության՝ Սովետական Հայաստանին»,— գրում է Վեհափառը։ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, իր դարավոր ու պատմական կենտրոն Ամենայն Հայոց Հայրապետության գլխավորությամբ, կանգնած է եղել իր հարազատ պետության և սեփական ժողովրդի կողքին՝ սրբությամբ կատարելու իր հայրենասիրական պարտքը Հայրենիքի նկատմամբ։

Վեհափառ Հայրապետին խորթ է եղել միշտ կրոնական միապետական ոգին։ Նա հանդիսացել է համայն հայ ժողովրդի Հայրն ու Հովվապետը։ Վեհափառի համար ազգային միասնության հարցում դավանանքի խտրությունը որոշիչ ազդակ չի հանդիսացել։ Վեհափառը նույն անաչառ Հոր աչքով է նայել քաղաքական ու տնտեսական տխուր պայմանների հարկադրանքով հայ ազգի միասնությունից և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ընդհանրությունից բաժանված, բռնի պոկված իր հայ կաթոլիկ և հայ բողոքական զավակների վրա։ Վեհափառի սրտի ամենաջերմ իղձն էր տեսնել Հայրենի հողի վրա, Մայրենի Եկեղեցու գիրկը վերադարձած իր կաթոլիկ և բողոքական զավակներին։

Գեորգ Զ.ի կաթողիկոսության տարիներին լավագույն հարաբերությունները մշակվեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի և մյուս նվիրապետական Աթոռների միջև։ 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական մեծ ժողովը, որը բացառիկ երևույթ էր մեր եկեղեցական պատմության մեջ, սրբագործեց և կանոնականացրեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության սրտագին հարաբերությունները, և ուր մի անգամ ևս հաստատվեց ի

լուր աշխարհի, որ մի է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, և մի է Հայոց Հայրապետությունը:

Գեորգ Չ.ը և Գարեգին Վեհափառը, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի գրասեղաններից, իրար հետ կապվել էին մեծ բարեկամությամբ, այնպես ինչպես կարող են կապվել երկու մեծ հոգիներ։ Տարիների հետ միասին աճել ու ամրապնդվել է նրանց սրտառուչ մտերմությունը, երբ պարտականության, կոչման ձայնը նրանց հրավիրեց հայ ժողովրդի հոգևոր սպասի բարձրագույն ծառայության։ Գեորգ Չ.ի և Գարեգին Վեհափառի բարեկամությունը ավելի քան երբեք ամրապնդվել է նրանց Հովվապետության տարիներին։

Գեորգ Չ.ը շատ բարձր է գնահատել Գարեգին Վեհափառի Էջմիածնի նկատմամբ ունեցած հետևողական քաղաքականությունը. «Անհնարելի չպիտի անցնի ու ընդգծելի է Ձեր գործունեության և այն գիծը, որ Դուք՝ Ձեր գործողությունների բոլոր ասպարեզներում, միշտ հավատարիմ եք մնացել Ձեր վանական ուխտին, ամբողջովին նվիրվել Ս. Էջմիածնին, որ Մայրն է հայ եկեղեցիների, որ հայ ժողովրդի պատմական դաստիարակն է ազգային, կրոնական և մշակութային ասպարեզներում»։ Իսկ Գարեգին Վեհափառը գրել է. «Մենք, իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալը, պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնել ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ»։

Խրիմյան Հայրիկի և Սահակ Բ. Խապայանի օրով երկու Աթոռների միջև սկսված ցանկալի հարաբերությունը Գեորգ Չ.ի և Գարեգին Վեհափառի որով վերածվեց սրտառուչ մտերմության և անքակտելի եղբայրության։

Հանգուցյալ Հայրապետի գահակալության տարիների ամենակարևոր ձեռնարկումներից մեկը հանդիսացավ նաև Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը։ Ճեմարանը իր վերաբացման առաջին իսկ օրերից Վեհափառի սրտի ամենամոտիկ հաստատությունն է հանդիսացել։ «Իմ ցանկություններից երկուսն ամենից կարևորն եմ համարում. առաջինը՝ տեսնել Մայր Տաճարը նորոգված և երկրորդը՝ նորաբաց Ճեմարանի շրջանավարտներով ի վիճակի գտնվել ծածկելու Հայաստանյայց Եկեղեցու ասպարեզում եղած բացը»,— ասել է Վեհափառը։

Վեհափառի ցանկության և ծրագրի համաձայն, Ս. Էջմիածնի նորաբաց Հոգևոր Ճեմարանը կոչված էր մեծ դեր կատարելու Հայ Եկեղեցու կյանքում։ Նա հայրական ամենորյա հոգատարությամբ էր շրջապատել Ճեմարանի ուսանողությանը, որպեսզի «Ճեմարանը, Ս. Երուսաղեմի, Մեծի Տանն Կիլիկիո ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի լինեն հայ ժողովրդի հոգևոր-եկեղեցական կարիքներն հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնելու։ Ամեն տարեվերջի քննություններին Ինքը՝ անձամբ Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ միասին ներկա էր լինում, քաջալերում դասախոսական կազմին և ուսանողությանը՝ լավագույնս սովորել՝ արդարացնելու համար հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու՝ նրանց վրա դրած մեծ վստահությունը։

«Լա՛վ իմացեք, կյանքում առաջ կգնան նրանք, ովքեր գիտեն համառ և հետևողական աշխատանք կատարել։ Աշխատանքը գիտության առաջին և հիմնական պայմանն է։ Թերթեցեք բոլոր մեծ մարդկանց, մեծ գիտնականների կենսագրությունները և դուք կտեսնեք, որ գրանք եղել են անդուլ աշխատանքի ցայտուն օրինակներ։ Ձեռք բերվածով հանգստացողները կմնան իրենց տեղում։ Օրե՛ք չհանգստանաք ձեր ունեցածով, աշխատեցե՛ք միշտ նորը ամբարել, միշտ նոր էջեր բաց անել գիտության մատյաններից։ Սովորեցե՛ք և նորից սովորեցե՛ք, որպեսզի ապագայում կատարելագործվեք և դառնաք ազգի համար, մարդկության համար պիտանի անհատներ։ Օրհնում եմ ձեզ և հաջողություններ ցանկանում»։— ահա ամեն անդամ այսպիսի հայրական օգտակար հորդորներ էր կարդում Նա Ճեմարանի ուսանողության։

Վեհափառի հետ այս սրտահույզ հանդիպումների ժամանակ ուսանողությունը և դասախոսական կազմը ձեռք էին բերում նոր լիցք, նոր եռանդ. նրա հայրենասիրական, եկեղեցանվեր շունչը իր բարերար սերմերն էր նետում նորարոդրոջ հայազուն երիտասարդների սրտերում։ Եվ իզուր չէին Վեհափառ Հայրապետի անդուլ ջանքերը. Ճեմարանը տվեց իր անդրանիկ հոգևոր հունձը. Ճեմարանավարտ 12 ուսանողներ ընդունեցին սարկավագական կոչում։

Վեհափառ Հայրապետի ցանած սերմերը բեղուն հողում սկսում էին արդյունավորվել։ Ճիշտ է, համեստ էր այդ հունձը, իբրև սկզբնավորություն, բայց մեծ ու հուսադրիչ էր նրա ապագա հեռանկարը, յուրոյական նշանակությունը։ Մյուս կողմից Ճեմարանը դրամական խոշոր գումարներ պահանջող հաստատություն էր, Վեհափառը մտածում էր տնտեսապես ևս ապահովել նրա գոյությունը։ Եվ գտնվեցին բարերարներ, ինչպես օրինակ՝ տիար Հայկ Գավուքճյանը և ուրիշներ, որոնք իրենց հաշվին Ճեմարանում պահում էին սաներ, թեթևացնելով Վեհա-

փառի ուսերին ծանրացող մտահոգությունը։ Վեհափառի ցանկությունն էր նաև ճեմարանավարտ լավագույն, խոստումնալից սաներից մի քանիսին ուղարկել արտասահման բարձրագույն աստվածաբանական-եկեղեցական գիտությունների մեջ մարզվելու և առաջադիմելու համար։ Բայց անակնկալ մահը նրա այս ծրագրի իրականացումն ևս խանգարեց։

Վերջին տարիներս կանոնավորվեց «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը։ Վեհափառը շատ ճիշտ էր մտածում, որ մեծ ու պատասխանատու դեր է վիճակված մեր կրոնական մամուլին, հայ ժողովրդի ազգային-եկեղեցական դաստիարակության գործում։ «Էջմիածին» ամսագիրը, Վեհափառի ամենօրյա ցուցմունքների և ղեկավարության տակ, հանդիսացավ արդարև Վեհափառի կենդանի խոսքը՝ ուղղված Իր հարազատ զավակներին։ Ամսագիրը պատվով և սրբությամբ կատարեց և կատարում է իր դերը հայ հոգևոր կյանքի ասպարեզում, հանդիսանալով միաժամանակ մեր հայագիտական լուրջ և բովանդակալից ամսագրերից մեկը։

Վեհափառի օրով կանոնավոր ու սիստեմատիկ հարաբերություններ մշակվեցին Մայր Աթոռի և մեր եկեղեցական բոլոր թեմերի միջև։ Ամենայն Հայոց Հայրապետությունն ու մեր եկեղեցական թեմերը կազմում են օրգանական անքակտելի միասնություն։ Մայր Աթոռը, հայրենի երկրից հեռու, Ս. Էջմիածնի անմիջական ու գործուն ղեկավարությունից հեռու գտնվող թեմերին միշտ ցույց է տվել շրջահայաց և հեռատես ղեկավարություն, իր սքանչելի կոնդակներով աշխատել է կապել Սփյուռքի մեր թեմերը կենտրոնական իշխանության հետ, ելնելով այն ազգուտ ոգեշունչից, որ մեր թեմերի համար չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր քան հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու ընդհանրական շահերը, քան մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շահերը։ Պետք է ուրախությամբ արձանագրել, որ մեր թեմերը, իրենց թեմական առաջնորդներով, իրենց թեմական խորհուրդներով, հավատացյալների բազմությամբ, միշտ էլ խորը պատկառանքով և որդիական ամենախոր ակնածանքով լսել են իրենց Գերագույն Պետի՝ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Օծություն S. S. Գեորգ Զ.-ի հորդորներն ու խրատները։

Վեհափառի սրտին մի ժամանակ մեծ վիշտ էր պատճառում այսպես կոչված Կոստանդնուպոլսի հարցը։ Խանգարվել էր Կոստանդնուպոլսի ազգային-եկեղեցական խաղաղ կյանքը, երկպառակություն էր ընկել համայնքում, հրահրվել էին կրքերը, ստեղծվել էր խուճապ և անիշխանություն, և ոմանք, օգտագործելով առիթը, ոտնահարելով Ազգային Սահմանադրությունը, ցանկանում էին ընտրել ապօրինի կերպով նոր Պատրիարք և նիզակ ճոճել Մայր Աթոռի դեմ, աշխատելով Սփյուռքը անջատել Ս. Էջմիածնի գերագույն իշխանությունից։ Բայց ազժուար էր ընդդեմ խթանի ագացել...»։

Կոստանդնուպոլսի եկեղեցական վիճակը անօրինակ խառնակ դրությունից կարողացավ դուրս բերել Վեհափառ Հայրապետն Իր իմաստուն և հեռատես վարչագիտությամբ։ Մանրամասն ուսումնասիրելով Կոստանդնուպոլսի հայ համայնքում տեղի ունեցող իրադարձությունները, Վեհափառ Հայրապետը Իր վերջնական որոշումը կայացրեց բավական ուշ, նույնիսկ հնարավորություն տալով խառնակիչներին՝ հեռու կանգնելու իրենց պախարակելի արարքներից։ Սակայն խռովարարները ուշքի չեկան ու շուտով լսեցին Վեհափառ Հայրապետի հետևյալ խիստ որոշումը. «Մենք, որպես Հայ Եկեղեցու պետ և պահապան նորա դավանական, բարոյական և ծիսական սրբությունների, Մեր հայրապետական սույն կոնդակով հայտարարում ենք Մայր Հայրենիքի և Սփյուռքի բովանդակ հայության, որ կարգալույծ ենք անում խռովարարների պարազլուխն հանդիսացող հետևյալ երեք կախակալներին...»։ Ապա Վեհափառ Հայրապետը թելադրում էր ձեռնարկել նոր Պատրիարքի ընտրության՝ «Հայ Եկեղեցու ընտրական ժողովրդական սկզբունքի և կանոնական այլ սահմանումների ու պատմությամբ սրբագործված ավանդությունների հիման վրա կազմված Ազգային Սահմանադրության համաձայն»։

Հայ եկեղեցու միասնականությանը սպառնացող վերահաս վտանգի այս օրերին, աչալուրջ և իմաստուն Հայրապետը իր ուղղամտությամբ, հաստատուն կորովով և ջերմ հայրենասիրությամբ, շտապողականությունից հեռու, ճշմարիտ վարչարարությամբ կարողացավ Կոստանդնուպոլսում բարձրացնել Մայր Աթոռի վտանգված հեղինակությունն ու դարավոր իրավունքները, իբրև գերագույն Պետը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին լավագույն հարաբերություններ են ստեղծվում նաև քրիստոնեական քույր եկեղեցիների և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջև։ Հատկապես ուշադրավ է Ռուսական Ուղղափառ Եկեղեցու և Հայ Եկեղեցու հարաբերությանց սերտացումը։ Այդ բարեկամական հարաբերությունները ավելի շեշտվեցին, երբ Վեհափառ Հայրապետը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք

Ալեքսիից ստացավ հրավիրագիր՝ որպես պատվավոր հյուր ներկա լինելու և մասնակցելու Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության (ինքնանկախության) 500-ամյակի կապակցությամբ կատարվելիք հանդիսություններին։ Վեհափառը մեծ ուրախությամբ ընդունեց այդ սրտագին հրավերը, շնորհակալություն հայտնելով «Հինավուրց Հայ Եկեղեցու ու նրա Պետի հանդեպ ցույց տրված այդքան մեծ պատվի համար և տվեց Իր հայրապետական համաձայնությունը՝ ներկա գտնվելու տոնակատարություններին։

Շատ չանցած Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական տոնակատարություններին։ Հոբելյանի հանդեսին Վեհափառը հանդես եկավ ողջույնի ճառով, թարգմանը հանդիսանալով Հայ Եկեղեցու, հայ հավատացյալ ժողովրդի սիրո ու անշահախնդիր բարեկամության՝ հանդեպ իր քույր Եկեղեցու և ռուս մեծ և ազնիվ ժողովրդի։

«Մեր թշնամիները,— ասաց Իր ճառում Վեհափառը,— ստահոդ կերպով բարբառում են, իբր թե Սովետական իշխանությունը և Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցին ձեռնամուխ են լինում Հայ Եկեղեցու անկախության ու ազգային ինքնուրույնության վերացմանը, և որ Մոսկվայում, այս եկեղեցական ժողովում, իբր թե ձևակերպվելու է Հայ Եկեղեցու լուծարքը։

«Մենք, Հայաստանյայց Ազգային Առաքելական Եկեղեցու ծերունազարդ Հայրապետը և Գլուխը, չնայած տկարությանս, սիրով ընդունեցինք Մեր սիրեցյալ եղբոր սրտառուչ ու սիրաշատ հրավերը, որպես զի մեր անձնական ներկայությամբ ու ելույթով այս մեծ ժողովում արտահայտենք Մեր խորին ու անկեղծ համակրանքն ու սերը հանդեպ Ռուսաց փառապանծ Եկեղեցու, Սովետական հզոր իշխանության և ռուս մեծ ժողովրդի ու ի լուր ամենեցուն Մեր հայտարարությամբ մերկացնենք այդ նորահերյուրյալ քաղաքական չարախոսությունը ուղղված Սովետական իշխանության և Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու հասցեին և ի չիք դարձնենք Հայ պատմական Եկեղեցու հասցեին ուղղված չարամիտ ամբաստանությունն ու վիրավորանքը։

Նույն ճառում Վեհափառը հանգամանորեն խոսում է հայ ազգային-եկեղեցական կյանքում Ս. Էջմիածնի կատարած պատմական մեծ դերի մասին և նշում է հայ ժողովրդի անձնվեր սերն ու նվիրվածությունը «հանդեպ Ազգային Եկեղեցու և Ս. Էջմիածնի նախամեծար Աթոռի»։

Վեհափառ Հայրապետի թանկագին անունն ու ազգագրտա, եկեղեցաշեն գործունեությունը սերտորեն կապված են խաղաղության համաշխարհային հզոր շարժման հետ։ Խաղաղությունը քրիստոնեական կրոնի ամենահիմնական անկյունաքարերից մեկն է և մեր Եկեղեցին, որպես աշխարհի ամենահին ուղղափառ եկեղեցիներից մեկը, միշտ աղոթել է ողջան խաղաղության ամենայն աշխարհի։ Խաղաղության թեման մեր հին մատենագրության ամենաշատ և ամենասիրելի թեմաներից մեկն է եղել։ Դարերով, հազարամյակներով մեր ժողովուրդը զուրկ է մնացել խաղաղությունից։ Եվ Գեորգ Զ.-ը խաղաղությունը բնական ու տրամաբանական հետևանքն է համարում Հայ Եկեղեցու ժողովրդանվեր ոգու, մեր ժողովրդի հավատքի։ «Հայ Եկեղեցին իր սրբազան պարտքն է համարում միանալու ազնիվ ձգտումներին բոլոր նրանց, ովքեր առկոչում են ժողովուրդներին միավորվելու հանուն խաղաղության ընդհանուր պաշտպանության,— գրում է Վեհափառը։

«Մարդասիրություն, ճշմարտություն և արդարություն, սոքա են այն խարիսխը, որի վրա պիտի հիմնվի աշխարհի ապագա տևական խաղաղությունը, ազգերի անվտանգությունը և նոցա համերաշխ գործունեությունը»,— գրում է Վեհափառը, ելնելով այն համոզումից, որ այսօր խաղաղությունը ամենօրյա հացի, ջրի, արևի նման անհրաժեշտություն է աշխարհի և մարդկության համար։ Խաղաղության անվեհեր մարտիկը նշում է, որ բազմաթիվ եկեղեցիների պետեր ու սպասավորներ լռեցին Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների օրերին՝ դեմ գնալով իրենց խղճին, իրենց դավանած քրիստոնեական վեհ ու սրբազան սկզբունքներին և պաշտպանեցին պատերազմի քաղաքականությունը, «Մակայն մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համարյա ամբողջ մարդկության դավանած կրոնների սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին ու շահերին...»։

(Շարունակելի)

ՔԱՐՈԶ

ԴԵՎԻԴ Ե. ՎԻԴ. ՎԱԹՅԱՆ

(Առաջնորդական փոխտնօրդ
Շիրակի բեմի)

ԼՈՒՅՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Քրիստոսի հրաշափառ և Ս. Հարության տոնը, իմ հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, պատմության մեծագույն հրաշքն է, որի վրա խարսխվել է Քրիստոնեական Եկեղեցին։

Մեր ազգային-եկեղեցական տոների մեջ Ս. Հարության տոնը ամենաժողովրդական ու սիրելի տոներից մեկն է, որի համար մեր ժողովուրդը ստեղծել է «Զատիկ» բառը, որովհետև «Քրիստոս զատիկ մեր զենաւ»։ Քրիստոսի հարությունը մարդկային ազգի փրկության, ազատության, հոգևոր վերածնության տոնն է առավելապես։

Քրիստոս խաչի վրա մահացավ՝ հարություն առնելու համար, և մարդկանց հավիտենական կյանք պարգևելու համար։ Մեր Փրկչի Հարությունը կյանքի հաղթանակն է մահվան դեմ, լույսի հաղթանակը խավարի դեմ. «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»։

Մահը կյանքում իրականություն է. նա օրինաչափություն և անխուսափելիություն է կյանքում։ Մահը ամեն տեղ է. մահ կա բուսական և կենդանական աշխարհում, մահ կա կյանքում. մինչ մարդու հոգում Աստված դրել է անմահության իղձը, մարդը տենչում է չմահանալ, ձգտում է անմահական կյանքի, ուզում է ապրել հավերժորեն... բայց մահը կրնկակոխ հետևում է նրան. մտնում է նա՝ մահը ամեն դռնից ու լուսամտից, վրդովում մեր ընտանեկան խաղաղությունն ու երջանկությունը։ Նույնիսկ աշխարհը փոշու մի հատիկ է ամենազոր մահվան դիմաց։ Այսպես դարեր շարունակ, մահը հարվածել է մարդկության, ու մարդկությունը անզոր է եղել կռվելու և հաղթելու մահվան հզորության դեմ։

Բայց ահա մի երջանիկ օր, կյանքում գտնվեց մի ուժ, մի լույս, մի կյանք, որը խորտակեց մահվան սարսափները և մարդկանց ազատեց մահվան կապանքներից։ «Ես եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ ինձ, թէպէտ և մեռանի՝ կեցցէ»։ Մեր Փրկիչը իր աստվածային ծննդյամբ, իր հետ բերել էր մի շղթա՝ կապելու աշխարհի այդ հզորին՝ մահվան։ Միայն Քրիստոս հաղթեց մահվան, ու ցույց տվեց, որ քրիստոնեական մահը սկիզբն է հավիտենական կյանքի, գերեզմանը նախադուռն է հավերժության, որ, քրիստոնեի մահը իրական մահ չէ, այլ մի նինջ, մի քաղցր ու երկար քուն, որից նա զարթնելու է օրհնված հարկանի փողնով։ Գերեզմանը քրիստոնյա մարդու համար անհուության և ունայնության մի փոս չէ, այլ մի նոր կյան-

քի նախադուռ, մի լուսամուտ՝ բացված հավերժության նոր կյանքի վրա։ Ահա թե ինչու մեր Փրկչի ամենահաղթ Հարությունը մի նոր ու լուսավոր դարաշրջան բացեց պատմության մեջ, ու շրջեց մահվան ու կյանքի փոխհարաբերությունները և մարդկության ու աշխարհի վրա ծագեց նոր կյանքի արշալույսը և լուսավորեց մահվան ճիրաններում ահաբեկված մարդկանց հոգիները։

Բայց արդարև, կա՞ կյանք գերեզմանից հետո... թե մարդն ստեղծվել է այս անցավոր, կարճ ու տառապանքներով լեցուն կյանքի համար միայն...

Հիսուսի պատմական Հարությունը դրական պատասխան է տալիս այս հարցին, բազմաթիվ վկաների հավաստումով, եկեղեցու բազմափորձ իմաստությամբ պաշտպանված, այն աստիճան, որ քրիստոնեության առաջին դարում ապրող Ս. Պողոս մեծ առաքյալը հարցը դնում է այսպես. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»։

Ս. Հարության ամեն մի տոնի, նորից ու նորից հարություն է առնում մեր Փրկիչը իր եկեղեցու կյանքում, հավատացյալների հոգում։ Քրիստոսի Հարությունը լոկ պատմական իրողություն չէ, այլ նաև անսպառ հավատքի, հույսի, սիրո մի անսպառ աղբյուր, որ քրիստոնյա մարդուն մղել է ու կմղի դեպի առաքինություն, դեպի ճշմարտություն, դեպի պարտականություն։ Հիսուս իր Հարությամբ նոր ճանապարհ բացեց մարդկանց և աշխարհի առաջ, որ էլ չխարխափեն մեղքի ու անորոշության մեջ, մահվան ստվերոտ ուղիներում, և կյանքը լուսավորեց իր լույսով և իմաստով։

Մեր Փրկչի Հարությունը հաղթանակն է լույսի, սիրո, ճշմարտության և անմահության։

Դարեր շարունակ Քրիստոսի Հարության ամենաջերմ և առաջին հավատացողներից մեկը եղել է հայ հավատացյալ ժողովուրդը։ Զատիկը, Ս. Հարության տոնը, առնն է նաև հայ ժողովրդի ազգային-եկեղեցական վերածնության, որովհետև հայ ժողովուրդը, Քրիստոսի Լույսի Հայաստանում ծաթելու առաջին իսկ օրերից, շարչարվել, տառապել է իր հավատքի համար, իր հայրենի սրբությունների համար, և իր կյանքը զոհաբերել է արդարության, ճշմարտության, Լույսի հաղթանակին և դարձել է քրիստոնեության մարտիրոսը Արևելքում։

Հայ ժողովուրդը հավատաց Քրիստոսի Լույսին և կյանքին, Նրա Հարության անսուտ ավետիսին, շարչարվեց, խաչվեց, իր արյունոտ Գողգոթան բարձրացավ խաչը ուսին, մեռավ Քրիստոսի համար ու մեռնելով ապրեցավ Քրիստոսի նման ու հավերժացավ։

Հայ ժողովուրդը, Քրիստոսի Հարության տոնի ու խորհրդի մեջ, իր կյանքի ու ապագայի խորհուրդն է տեսել և հենց դրա համար էլ իր հավատքի ողջ կրակով, իր հոգու բոլոր թելերով կապված է եղել Հարության գաղափարին, Հարության Լույսին։

Մեր ժողովուրդը լույսի, գիտության կարոտ ժողովուրդ է եղել. նա իր հոգու լուսամուտները լայնորեն բացել է Քրիստոսի գերեզմանից ճառագած հավերժական լույսին, և իր հայրենի հողի վրա կանգնել է Լույսի խորան Ս. Էջմիածինը, որպեսզի հայության հոգում և հայ երկնակամարի վրա շողա կյանքի, ճշմարտության, արդարության լույսը։

Արդարև, «Քրիստոս յարեա՞ւ ի մեռելոց...»ն Քրիստոսի նման իր գերեզմանից «յարեաւ և՛ հայ ժողովուրդը, որն իր հայրենի հողի վրա ապրում է և ստեղծագործում։

Աղոթենք, իմ հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, որ Ս. Հարության Լույսը միշտ պայծառ պլպլա և՛ մեր սրտերում, և՛ մեր սուրբ տաճարներում։ Ամեն։

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

§ 9

Վերևում քննեցինք այն հարցը, թե ո՞ւր էր գտնվում Հռուփանոս, Սամոսի՞ մեջ ըստ Խորենացու, թե Սամուսատ ըստ Կորյունի. բայց այս քննությունը կապ չուներ հայերեն գրերի գյուտի հետ։ Հայերեն գրերի գյուտի տեղը այնպես պարզ կերպով հիշված է Կորյունի մեջ, որ զարմանում ենք, թե ի՞նչպես նոր քննիչները սրա վրա տարակարծիք են։ Ստ. Նազարյան («Հիսիսափայլ», 1860 թ., էջ 240) չի կարողանում որոշել՝ Ամի՞դ թե Եդեսիա։ Իսկ երբ Իս. Հարությունյան («Հայոց գիրը», էջ 360—367) առանձին մի գլուխ է նվիրում հայերեն գրերի գյուտի տեղը որոշելու համար և զանազան տեղեր թափառելուց հետո, վերջապես Սամոսատն է հարմար գտնում, անշուշտ Կորյունի խոսքերը լավ չհասկանալուց է։ Բայց այսպե՞ս պիտի վարվեին նաև մյուսները։ Սխալների և թյուրիմացության գլխավոր պատճառներից մեկն էլ այն կույր վստահությունն է, որ ունեն շատեր Խորենացու նկատմամբ։ Արդարև, Խորենացին ինքը ամենից առաջ խաթարելով Կորյունի պատմությունը, Մեսրոպին տանում է Սամոս կղզին և այնտեղ տեսիլքի մեջ գրերը գտնել տալուց հետո՝ ներկայացնում է Հռուփանոսին, այս արտագրիչին ընծայելով վերջնական հեղինակությունը։

Բայց, ինչպես նախորդ քննություններից գիտենք, Մեսրոպ Հռուփանոսին գտնելուց շատ առաջ գտած էր արդեն հայերեն գրերը և ամեն ինչ վերջացրած։ Կորյունի «անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր» խոսքը չանացինք ցույց տալ, թե վերաբերում է Մեսրոպի աշակերտներին և ո՛չ թե Մեսրոպին։ Բայց մինչև իսկ եթե այս խոսքը Մեսրոպին վերաբերած լիներ, «գումարէր— պատրաստվում էր» ձևը թույլ չի տալիս ընդունել, թե Մեսրոպ հեռացել էր այն քաղաքից, ուր գտնվում էր (Եդեսիա)։ Հետևարար Կորյունի հաջորդ պատմությունները, Մեսրոպի աշխատանքները, աստվածային օգնությունը և գրերի գյուտը, բոլորն էլ տեղի են ունեցած նույն Եդեսիա քաղաքում։ Այս բանը ցույց է տալիս նաև Կորյուն երրորդ անգամ, երբ գրերի գյուտը պատմել վերջացնելուց հետո՝ ասում է. «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրրոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց»— այն սուրբ եպիսկոպոսներն են Բարիլաս և Ակակիոս, և Մեսրոպի թողած քաղաքն է Եդեսիա։

Մարկվարտ էլ (էջ 26—29) ուշիշ սխալի մեջ է ընկնում։ Լավ չհասկանալով Կորյունի պատմությունը և շփոթվելով այն բանից, որ Կորյուն նույն հատվածում երկու անգամ ասում է, թե Մեսրոպ գնաց Սամուսատ («անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր... իջանէր ի քաղաքն Սամոստացւոց»), կարծում է, թե Կորյուն «գրերի գյուտի մասին պայծառ գաղափար չուներ», թե այս մասին «երկու տարբեր տեղեկություններ էր ստացել, որոնք անհարմար կերպով կպցրել է իրար»։ Այս մտածությամբ, Մարկվարտ Կորյունի երկու էջը՝ սկսած «իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն...», մինչև «հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան», կտրատում է երկու մասի, այն ձևով, որ մեկի մեջ մտնում է մի Սամուսատը, մյուսի մեջ՝ մյուս Սամու-

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № XI-ից և XII-ից և 1955 թվականի № № I-ից, II-ից և III-ից։

սատը։ Այսպիսով երկուսի էլ ընդհանուր եզրակացությունը այն է լինում, որ դրերը Նարվեցին Սամուսատում։ Բայց դա սխալ է։ Կորյունի համար չի կարելի ասել, թե նա պայծառ գաղափար չուներ դրերի գյուտի մասին, որովհետև Մեսրոպի աշակերտ, գեպքերին ականատես, ով դիտե քանի՞ անգամ լսել էր Մեսրոպի պատմածները իր համբորդության մասին, կամ եթե Մեսրոպը չէ՝ իր դասընկերներ Հովհանից ու Հովսեփից և շատ պայծառ գաղափար ուներ տառերի գյուտի բոլոր հանգամանքների մասին. իսկ եթե մի բոպե ենթադրենք էլ, թե այսինչ կամ այնինչ կետը չգիտեր, դասընկերներից կիմանար։ Սխալ է նույնպես ա՛յն՝ թե Կորյուն երկու տարբեր տեղեկություն էր ձեռք բերել դրերի գյուտի մասին. ուղղղը կարող է բանալ Մարկվարտի 26—29 էջերը և կարդալ երկու տարբեր սյունակներով դրված տեղեկությունները և պիտի տեսնի, որ այդ երկուսը ո՛չ թե տարբեր բաներ են, այլ միմյանց շարունակություն են կազմում և իրար են լրացնում։ Տարբեր տեղեկություններ լինելու համար տարբեր բաներ պատմած պիտի լինեին։ Բայց այդ երկուսի մեջ ո՛չ մի հակասական բան չկա և երկուսն էլ պատմում են Մեսրոպի արածները Եդեսիայում և այնտեղից էլ Սամուսատ գնալը։ Ընդհակառակը, անհասկանալի է դառնում պատմությունը, երբ այսպես երկուսի է բաժանվում և միմյանց միջև եղած կապը կտրվում է։ Մարկվարտ ճիշտ պիտի ըմբռներ իրերը և այս ավելորդ կտրատման կարիք չպիտի զգար, եթե մի քիչ ավելի խորհրդածեր գումարել բառի իմաստի վրա։

Մարկվարտի նման Ակինյանն էլ («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 515—516) խրտնում է այն բանից, որ Կորյունը երկու անգամ է հիշում Սամուսատը և նրանից խուսափելու համար ուրիշ անպատեհության մեջ ընկնում։ Նա սրբագրում է Սամոսատական բառը և դարձնում Մամուեստական։ Այսպիսով Մեսրոպին տանում է Մամեստիա քաղաքը (Կիլիկիա), ներկայացնում Թեոդորոս եպիսկոպոսին, որի խորհուրդներում և օգնությամբ Մեսրոպ հնարում է հայերեն դրերը, հետո իջնում Սամուսատ՝ Հոուփանոսի մոտ։ Այսպիսով հայերեն դրերի գյուտի վայրը դառնում է ո՛չ Եդեսիա, ո՛չ Սամուսատ, այլ Մամեստիա (Կիլիկիա)։ Ակինյան ասում է, թե Կորյուն դիտմամբ չի հիշել Թեոդորոսի անունը, որովհետև ավելի ուշ նա նեստորական դարձած լինելով՝ նրա անունը խոտելի էր։

Ահա այն անտեղությունները, որ ծադում են այս սրբագրությունից.

1) Կորյուն պատմում է, թե Մեսրոպ ունաց Ամիդ, և Եդեսիա. այստեղ իր աշակերտներին երկուսի բաժանեց, մի խումբը դրավ ասորոց դպրոցը (Եդեսիա, ուր էր) և մյուսը ուղարկեց (գումարեալ) Սամուսատ։ Ակինյան գումարել բայը շեղոք մաքով առնելով՝ Մեսրոպի համար է հասկանում. այս դեպքում և նորա բառերը անտեղի են դառնում։ Իսկ եթե վերցնենք ներգործական (ուղարկեց), շատ հարմար են դալիս։

2) Աշակերտների առաջին խումբը պահեց Եդեսիա, իսկ երկրորդ խումբը եթե Սամուսատ շուղարկեց ո՞ւր ուղարկեց։ Ակինյան իրանից ավելացնում է «յԱմիդ». ո՞վ իրավունք տվեց այս կամայական հավելվածն անելու։

3) Բայց Մեսրոպ և աշակերտները, ըստ Կորյունի, Եդեսիայումն էին, երբ բաժանումը և առաքումը եղավ. ուրեմն Մեսրոպ աշակերտների երկրորդ խումբը նորից հետ ուղարկեց Ամիդ, որտեղից մեկնել էին։ Ջե՞ր կարող Մեսրոպ Ամիդում եղած ժամանակ խումբը բաժանել և պահել այնտեղ. ի՞նչ կարիք կար Եդեսիա տանելու և այնտեղից նորից հետ ուղարկելու։

4) Ակինյան ասում է, թե բաժանումը «հավանորեն ճանապարհին» եղավ. սրանով շատ ծիծաղելի դրության մեջ է դնում Մեսրոպին։ Երևակայեցեք նրանց, որ Ամիդից գնում են Եդեսիա։ Հանկարծ ճանապարհին Մեսրոպ կանգնեցնում է աշակերտներին, բաժանում նրանց երկուսի, մի մասը հետ ուղարկում Ամիդ, մյուս մասը հետը տանում Եդեսիա։

5) Ակինյան ասում է, թե Կորյուն պիտի ասեր «ի Սամուսատացոց քաղաքն» (ինչպես ասում է երկրորդ անգամին) և ո՛չ թե «ի Սամուսատական քաղաքն»։ Եթե այդպես է, ուրեմն և չպիտի ասեր «Մամուեստական»։ Կորյուն երկու ձևերն էլ գործածում է (հմմտ. «Կոստանդինական քաղաքն», էջ 27 և 33)։

6) «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց»... ի՞նչ եպիսկոպոսներ են սրանք։ Կորյուն այն սովորությունն ունի, որ երբ Մեսրոպին տանում է մի քաղաք, նախ ծանոթացնում է նույն քաղաքի եպիսկոպոսի հետ, մեկնելու ժամանակ էլ նրանից հրաժեշտ է առնում։ Այսպես Ամիդ, Եդեսիա, Սամուսատ, Վրաստան, Աղվանք, Պոլիս, նույնիսկ Մելիտինե։ Իսկ այստեղ՝ Մամեստիայի եպիսկոպոսներով հետ ծանոթացում չկա, բայց հրաժեշտ կա. որով և Եդեսիայի եպիսկոպոսների հրաժեշտը չնջվում է։

7) Ակինյան հրաժեշտ տված այն եպիսկոպոսների համար ասում է, թե «հավանորեն Կիլիկիո եպիսկոպոսները կակնարկեն, որոնց հանդիպած է ճանապարհին, գլխավոր հանդրվաններու մեջ»։ Ջե՞ր է առել մեջ Ակինյանը...։

8) Եթե Մամեստիա քաղաքը հիշված լիներ Կորյունի մեջ, անկարելի է, որ Խորենացին չհիշատակեր իր պատմության մեջ, նա՝ որ քաղաք է որոնում մեն ածելու համար Մեսրոպին մինչև Սամոս։

Այսպիսով կջնջվի եկամուտ Մամեստիան և հայերեն գրերի վայրը նորից կմնա Եդեսիա։

Այստեղ գուցե առարկվի, որ եթե Մեսրոպ Եդեսիայում արդեն գտավ հայերեն գրերը, հապա ինչո՞ւ նույն միջոցին իսկ չներկայացրեց եպիսկոպոսներին և Սամուսատից դարձին միայն ուսաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր։ Բայց սրա պատասխանը շատ պարզ է։ Մեսրոպի առաջին անգամ կազմած ցուցակը անգեղարվեստական հասարակ մի բան էր և անարժան՝ ներկայացնելու եպիսկոպոսներին։ Իսկ երբ Հռուփինոս գեղագրեց այն գրերը և պատրաստեց վայելուչ մի պնակիտ, այն ժամանակ Մեսրոպ արժանի տեսավ մատուցանելու եպիսկոպոսներին։ Պետք է ավելացնել, թե Մեսրոպ պնակիտի հետ ցույց տվեց նրանց նաև Առակաց գրքի հայերեն թարգմանությունը, որ իր գյուտի արժանավորության միակ գրավականն էր. ապա թե ոչ, ի՞նչ մեծ բան էր անշունչ տառերի մի ցուցակ։

§ 10

Վերջացնելուց հետո Խորենացու ընծայած տարբերությունների քննությունը, անցնենք մյուս պատմագիրներին, որոնք շատ ավելի համառոտ լինելով՝ թվով էլ նվազ տարբերություններ են պարունակում։

Փոքր-Կորյուն այնպես է սեղմում և կրճատում դեպքերը, որ մեր երկու գլուխներում (երրորդ և չորրորդ) պատմածները նիշտ իր երկու փոքրիկ էջերում ամփոփելով՝ անճանաչ մի բանի է վերածում։ Առանց պատմելու համագումար ժողովը, որ տեղի ունեցավ գրերի գյուտին նպաստելու համար, Վռամշապուհ թագավորին տալիս է ընախանձայոյզ լինելը (այսինքն եռանդով հարել) այս գործին և Սահակի հետ միանալով՝ Մեսրոպին իր աշակերտներով միասին ուղարկում է Ասորոց Միջագետքը։ Մեսրոպ ման է գալիս բոլոր այն քաղաքները, ուր լսում է, որ հռչակավոր մի իմաստուն կա. «Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր գիտութիւնս (էջ 9)։ Մի օր էլ պատահաբար հանդիպում է Դանիել անուն ասորի առաքինի մի եպիսկոպոսի, որ հայտնում է, թե կարող է ցույց տալ իր ցանկացած գրերը։ Բայց ձերկար աշխատություններից, քննություններից և ուսումնասիրություններից հետո, Մեսրոպ անհույս է մնում Դանիելից, որովհետև նրա գրերը հայերեն բառերն ամբողջ չէին կարող ներկայացնել։ Այն ժամանակ դիմում է Աստուծուն և Խորենացու տեսիլքով գտնում է հայերեն տառերը, որ ձևել է տալիս Ռուփինոսին (=Հռուփանոս)՝ Սամոսի մեջ։

Ինչպես տեսնում ենք, Փոքր-Կորյունի մեջ ո՛չ միայն Վռամշապուհի տեղեկությունը և Վահրիճի ու Հաբելի մասնակցությունն է հապավված, այլև Դանիելի կարևոր մասնակցությունը, Դանիելյան նշանագրերի երկամյա գործածությունն ու խափանումը, Մեսրոպի ճամբորդությունը Ամիդ, Եդեսիա և Սամուսատ, և վերջապես իր աշխատանքները Եդեսիայում։ Այս բոլորը մի հետին դրդի չափաղանց համառոտախոսության անճարակ արդյունքը լինելով՝ չենք ուզում ավելի ևս ծանրանալ այստեղ։

§ 11

Ավելի տարօրինակ է Փարպեցին, ուր ամբողջ մեր ներկա չորրորդ գլխի նյութը և ոչ իսկ մի տառով չի նշանակված։ Ըստ Փարպեցու, Դանիելյան նշանագրերն են սկիզբ և վերջ ամեն բանի։ Երբ Հաբել քահանան բերավ այն գրերը, Մեսրոպ և Սահակ ուրախությամբ ընդունեցին և դրին գործածության. Սահակ և սրա նշանակած չորս հունագետ քահանաները (Հովհան Եկեղեցացացի, Հովսեփ Պաղնացի, Տեր Խորենացի և Մուշե Տարոնացի) լրացրին այն գրերի պակասությունը հունարենի միջոցով և Մեսրոպին սովորեցնելով, եղան հիմնադիր հայ այբուբենի։ Ահավասիկ Փարպեցու ամբողջ պատմածը՝ իր բառերով. «Իսկ արքային Հայոց սուրբ կաթուղիկոսաւն Սահակաւ ե երանելեաւն Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէ՝ ուրախ լինէին։ Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս և այլ արս բանիբունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա, որպէս երանելին Մաշթոց, մերձաւորեալք ի յունարէն հոգենայսն. որում առաջնոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին Յովսէփ՝ ի Պաղանական տանէն, և երրորդին Տէր՝ ի Խորձենոյ, և չորրորդին Մուշէ՝ ի Տարօնոյ։ Որոց օգնելով զօրէր երանելին Մաշթոց, հանդիպեցուցանէր զհայերէն աթուիայսն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթուղիկոսէն Սահակայ զաթուիայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին։ Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի՝ առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ

աուցեալ անցուցանէր վարժիւք դրաղում դիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երդոդական տաղիցն և հռետորական յորդասաց յայտնարանութեան. ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր» (Փարպեցի, էջ 39—42)։

Սրա հետ միացնելով նաև այն խոսքերը, որ Փարպեցին դնում է Սահակի բերանը (տե՛ս վերը գլուխ երրորդ, § 6), կտեսնենք, թե չափազանց նվաստացած է այն երևելի անձի արժանիքը, որ մեր հայ մատենագրության հայրն ենք ճանաչում։ Եւ արդարև, ի՞նչ է մնում Մեսրոպին, եթե հայկական նշանագրերը Դանիելի ուղարկած գրերն են, որոնց թերությունքն էլ Սահակ և այն չորս քահանաներն են լրացրել։ «Այսպիսով բավական մեծ փոփոխության է ենթարկվում հայ գրերի գյուտի պատմությունը,— ասում է Միաբան («Արարատ», 1901 թ., էջ 547),— ավելանում է Դանիելի բաժինը, պակասում է Մաշթոցինը, որ լավ կշռված բառերով արտահայտում է Ղազարը՝ «և այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն և այլնս։ Բայց թե մի Ղազարի ընդհակառակը չիշռված խոսքերը ամենին բավական չեն այսպիսի մի ստորացում։ Հասցնելու Մեսրոպին՝ հայտնի է ամենքին, որ գիտեն, թե ի՞նչ է պատմական քննադատությունը։

Ղազարի այս հատվածների քննությամբ ու հերքումով մանրամասն զբաղվել է Գրիգոր Խալաթյան, «Ղազար Փարպեցի և գործք նորին» (էջ 66—73)։ Այս գրքի ինչ-ինչ մասերը թեև այժմ հնացած են Ղազարի հայտնի հատվածի հապավմամբ և նորենացու ժամանակի հետևությամբ, բայց ընդհանուրը մնում է միշտ նույնքան ուժեղ և նույնքան փաստական, ինչքան էր իր նոր գրված ժամանակ։

Խալաթյանի հերքումը հետևյալ փաստերի վրա է կայանում համառոտիվ.

ա) Կորյուն լինելով Մեսրոպի կենսագրության լիակատար աղբյուրը, իսկ Ղազար ո՛չ աշակերտ և ո՛չ իսկ ժամանակակից, բնական է, թե առաջինի տված տեղեկություններն ավելի վավերական են. Ղազար քաղում է Կորյունից, և եթե Կորյունի համար գրերի գյուտը այնքան էլ հեշտ բան չէր, ինչպես Ղազարն է կարծում, և եթե այս գործի մեծագույն և գրեթե միակ բաժինը Մեսրոպին է տրվում Կորյունի մեջ, անշուշտ այս է միայն ճշմարիտ։

բ) Որտեղի՞ց է առնում Ղազար այն տեղեկությունը, թե Սահակ սովորեցրեց, առաջնորդեց և դյուրահնար ճանապարհ ցույց տվեց Մեսրոպին, կամ թե այն չորս քահանաների օգնությամբ կարողացավ Մեսրոպ հարմարել գրերը, եթե ուրիշ աղբյուրներ այսպիսի բան չեն հիշում։

գ) Մեսրոպին նվաստացնելու չանքը անշուշտ Ղազար գործ է դնում բարձրացնելու համար Սահակի արժանիքը, որ այսպիսի ներբողյանի կարիք չունի բարեբախտաբար։

դ) Եթե այսպես հեշտ և ոչինչ բան էր գրերի գյուտը, ինչպես Ղազար ասել է տալիս Սահակին, ի՞նչ պետք կար համագումար ժողովի, երկար ճամբորդության, քաղաքից քաղաք թափառելու և զբաղում աշխատությանց։ մի անգամից Սահակ կհնարեր, վերջացավ գնաց։

Այս չորս առարկությանց վրա մեր կողմից ավելացնում ենք և հետևյալ երեքը.

ե) Ղազար (էջ 33) Մեսրոպի համար ասում է, թե մանկության ժամանակ սովորել էր հույն լեզուն. «զի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն ոյոյն»։ ուսեալ բառը և հետո էլ Մեսրոպի քարտուղարը լինելու հանգամանքը ցույց են տալիս, թե անշուշտ բավական հունարեն գիտեր Մեսրոպ, այնքան, որ Հռուփանոսի, Ակակիոսի և վերջն էլ հունաց կայսեր հետ հարաբերության մտնելու ժամանակ թարգմանի կարիք չէր ունեցած։ Նույնպես, ըստ Կորյունի, Մեսրոպ Հունահայաստանի քարոզության ժամանակ հավաքեց բազմաթիվ հույն հայրերի գրքերը. «և բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալս»։ Եթե այս գրքերը հավաքեց Մեսրոպ, անշուշտ ո՛չ թե մեջի պատկերները նայելու համար էր, այլ կարդալու և իր քարոզության նյութ գտնելու համար, ինչպես որ Կորյուն էլ ասում է, թե այդ գրքերով «ծովացուցանէր զվարդապետութեանն պտորութիւն»։ Արդ՝ տարօրինակ չէ՞, երբ Մեսրոպի նախապես խոստովանված այս աներկբայելի հունագիտությունը հետո դառնում է միայն «հունարեն տառերը մի քիչ ճանաչելու պես մի բան լինելը». Ղազարի բառերով՝ «որք էին սակաւ մի և նոքա որպէս երանելին Մաշթոց մերձաւորեալ ի յունարէն հեգենայսն»։

զ) Մեսրոպին իբրև օգնական նշանակված չորս անձերից երկուսը (Հովհան Եկեղեցացի և Հովսեփ Պաղնացի) ըստ Կորյունի (էջ 10) Մեսրոպի աշակերտներն էին և տարօրինակ չէ՞, որ սրանք են սովորեցնում Մեսրոպին գրերի հարմարությունը։

է) Ղազար գրերի գյուտի համար ասում է, թե սովորել է Կորյունից՝ քանի-քանի անգամներ կարդալով նրա գիրքը. «Եւ դայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելւոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա և զիւր հայրէն նշանագրացն, թէ ե՞րբ կամ ո՞ւր և կամ յո՞յր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին Հայոց Վռամշապհոյ ջերմեռանդն խնդրելով...։ Զոր կարդեաց դրելով ճշմարտապէս

յառաջագրեալ այրն հոգեոր Կորիւն, ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեաւ» (Փարպեցի, էջ 35)։ Եթե Ղազար Կորյունից է սովորել և Կորյուն ճշմարտապես է գրել, ուստի պիտի ասենք, թե Ղազար լավ չի սովորել։

Իր փաստաբանություններից հետո, խալաթյան նկատի ունենալով. Ղազարի առաջաբանական մի քանի խոսքերը, որով Ղազար ցույց է տալիս պատմագրի պարտականությունները, ինչպես «չլաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից, չնուազեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել, բանիւբ անփութութեամբ. այլ զբնաւ ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն...» (էջ 17), երկրորդ՝ նկատի ունենալով այն հակասությունները, որ կան Ղազարի պատմության և էջ 39—41 (այժմ արդեն անգոյ) հատվածի մեջ, հետևցնում է, թե չէր կարող Ղազար այնպես աղճատել պատմությունը. ուստի և ենթադրում է, թե հետին գրիչներ խաթարել են այն։ Խալաթյանի կարծիքը, ինչպես ցույց տվինք, փառավորապես ստուգվեց, բայց դժբախտաբար ա՛յնպես, որ Ղազարի անհեթեթությունները պարունակող մասը ավելի հարազատ դարձավ, իսկ ճիշտ երևցածները ջնջվեցին։ Բայց սրանով ո՛չ թե վերի փաստերն էլ ջնջվեցին, այլ միայն երկու հատվածների միջև հակասություն կաղմող մասը։ Ընդհակառակը վերի յոթը փաստերի վրա ավելացավ նոր ու երևելի մի փաստ, այն է Մեսրոպի ճանապարհորդությանց, Եդեսիայում կատարված աշխատանքի և Հռուփանոսի փոքր մասնակցության շնչումը և Դանիելի բարձրացումը։ Այս պարագաները բացարձակորեն հակասելով պատմության, բացարձակապես ցույց են տալիս, թե սխալ են Ղազարի տված տեղեկությունները։

Ղազարի տված տեղեկություններից օգտված է նաև Ասողիկ, որ իր համառոտության մեջ անգամ իր աղբյուրը մատնանշում է։ Ահա իր բառերը. «Մաշտոցն երանելի... ի ձեռն Վռամշապհոյ և մեծի հայրապետին Սահակայ Դանիէլեան նշանագրօք զդպրութիւն ըստ հայումս յօրինէր ընկերօք ոմամբք, տուելովք նմա ի Սահակայ»։ Բայց ինքն էլ նկատելով մի այսպիսի պատմության անհարմարությունը, իսկույն ավելացնում է սրա մոտ. «Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդումն նորին Վռամշապհոյ... վերստին աստուածատուր նշանագրօք զնոյնս յեղանակեալ յօրինէր, որովք և դպրութիւնք և գիրք աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպէս պատմեն և Կորիւն և Ղազարոս (էջ 74)։

§ 12

Փարպեցու հարցով զբաղված է նաև Խաչատուրյանը («Հայոց գիրը», դլուխ ԺԲ)։ Հեղինակը նպատակ ունի հերքել այն պատճառաբանությունները, որ մեջ է բերում Խալաթյան, և ապացուցել, թե Փարպեցին այս մասերի մեջ ավելի ճշմարտախոս է քան Կորյուն և Խորենացի։ Ահավասիկ իր տրամաբանության ընթացքը.

ա) Կորյուն, անմիջական աշակերտ Մեսրոպի, ոգևորված իր վարդապետի անձով և գործով, ավելորդ չափազանցության է հասցնում այս սուրբ անձի գործը. մինչդեռ Փարպեցին, ավելի հեռու և չեզոք անձ, պատմում է ճիշտ չափավորությամբ և քննադատական ոգով։ Եթե սրա մեջ կան մասեր, որ հակասում են Կորյունին կամ չկան նրա մեջ, դա չի նշանակում, թե սուտ են կամ ինքնահնար, այլ քաղված են Սահակի և Մեսրոպի ժամանակակից անձերի պատմությունից։ «Եթե Փարպեցին պետք է ամբողջովին յուր նախորդների ասածները բառացի հառաջ բերեր յուր պատմության մեջ, այլևս ի՞նչ հարկ կար գրելու. աղբյուրը մատնացույց կաներ և այդչափ բավական կլիներ»։

բ) Երբ Մեսրոպ Սահակին դիմելով առաջին անգամ, հայտնեց հայերեն գրեր հնարելու մտադրությունը, ըստ Փարպեցու, Սահակ պատասխանեց, թե այդ գործը շատ հեշտ է, ուր որ Մեսրոպ նեղություն կրէ, ինք կարող է լրացնել առանց դժվարության։ Ցարությունյան մտածում է, թե տարօրինակ չի թվի այս պատասխանը, երբ նկատենք, որ Սահակ գիտեր, թե կան Դանիելյան նշանագրերը, որոնց մասին լսել էր Վռամշապուհից և մտածում էր նրանցով լրացնել ամեն բան։ Անշուշտ Սահակ չէր կարող նախապես գուշակել, թե այդ գրերը չպիտի հարմարեին հայերենին։

գ) Մինչդեռ Կորյուն և Խորենացի պատմում են, թե Մեսրոպ իր ճամբորդության ժամանակ թարգմանած էր Հին և Նոր Կտակարանները, Փարպեցին գրում է, թե Մեսրոպ և իր ընկերները չէին համարձակվում բնավ այսպիսի մի գործի ձեռնարկել, որովհետև հունարենի տեղյակ չէին։ Այս կետում անշուշտ Փարպեցին ունի իրավունք, քանի որ Մեսրոպ չէր կարող այդչափ կարճ ժամանակում և առանց կաթողիկոսից հավանություն ստանալու՝ թարգմանել Ս. Գիրքը։ Զարմանալի չէ լսել, թե Մեսրոպ և իր ընկերները լավ տեղյակ չէին հունարենի, քանի որ Խորենացին էլ պատմում է (Գ, կա), թե Սահակի և Մեսրոպի անհմտության պատճառով Ս. Գրքի վերջին թարգմանությունը

նույնպես մի բազում մասանց թերացեալ գործն գտանէր, որի համար Խորենացին ուղարկվեց Աղեքսանդրիա, այնտեղ կրթվելով վերադառնալու և թարգմանության թերությունները լրացնելու։

դ) Գրերի գյուտը այնպիսի մեծ գործ էր, որ կարելի չէ վերագրել միայն Մեսրոպին. «կատարված պատմական նշանավոր իրողությունը մի անձի ուժից վեր գործ էր»։

ե) Սահակ կաթողիկոս էր և Հայ Եկեղեցու պետը. մինչդեռ Մեսրոպ պարզ մի վարդապետ էր և չէր կարող առանց իր պետի հրամանի գործել։

զ) Սահակ կարող էր Մեսրոպին գործակից, մինչև իսկ առաջնորդ լինել, որովհետև ընտիր կրթություն էր ստացած Հունաստանում. մինչդեռ Մեսրոպ Հայաստանումն էր սովորած։

Այս բոլոր պատճառաբանությունները այնքան թույլ, այնքան անարժեք են, որ ամենևին պետք չկար նշանակություն տալու նրանց, եթե մտադրված չլինեինք Մեսրոպի ամբողջական և լիակատար կենսագրությունը պատրաստելու։

ա) Եթե Փարպեցին սխալ կամ չափազանցյալ գտած լիներ Կորյունին, ի՞նչպես կարող էր ընթերցողին ուղարկել նրան, տեղեկանալու համար գրերի գյուտի բոլոր հանգամանքները, և կոչել նրան «այր ցանկալիս, «գիտել հաւատեաւ», «գրելով ճշմարտապէս»։

բ) Եթե Սահակ Դանիելյան գրերն ուներ ի նկատի, ի՞նչ պետք կար չորս օգնականների և իր օգնության. Մեսրոպին կուղարկեր Դանիելի մոտ և ամեն բան կվերջանար. և զարմանալի է, որ Դանիելյան գրերն ստանալուց և Սահակի «կարգադրությունից հետո էլ այն չորս օգնականները մնում են, որոնց կարոտ է Մեսրոպ՝ գրերը դասավորելու համար։

գ) Կտակարանների թարգմանությունը Խորենացու սխալ տեղեկությունն է միայն, որի վրա ամենևին կարիք չկա հիմնվելու. Մեսրոպ թարգմանեց միայն Առակաց գիրքը. բայց այնքանն էլ բավական է ցույց տալու համար, թե հունարեն գիտեր, իսկ Ս. Գրքի երկրորդ թարգմանության թերություններն ու Խորենացու ճամբորդությունը այնպիսի երևակայական բաներ են, որոնց ո՛չ մի լուրջ բանասեր հավատ չի ընծայում։

դ—զ) Իրոք, որ գրերի գյուտը մեծ գործ էր և շատեր մասնակցեցին նրան՝ ավելի կամ նվազ չափով. բայց մեծագույն դերը ընկնում է Մեսրոպին, ինչպես որ թարգմանության գործի մեջ էլ թեև շատեր մասնակցություն ունեցան, բայց մեծագույն դերը ընկնում է Սահակին։ Սահակի հայրապետ և Մեսրոպի ավելի բարձր լինելը, ինչպես և կրթությունը Հունաստանում (և ո՛չ թե Հայաստանում) ստացած լինելը ամենևին չեն խանգարում, որ Մեսրոպ լիներ ավելի մտածող, բանիմաց ու հնարագետ, առաջին անգամ ինքը մտածեր հայերեն գրեր հնարելու կարիքը և վերջապես իր ուժերով դուրս բերեր այդ դեղեցիկ գործը։

Խալաթյանի և Խ. Հարությունյանի միջին տեղն է բռնում Սարգսյան («Բազմավէպ», 1889 թ., էջ 36), որ Փարպեցու ասածները հաշտեցնելու համար Կորյունի ասածների հետ, ենթադրում է, թե Մեսրոպ հնարեց տառերի ձևը, իսկ Սահակ այդ տառերը շարեց հունարենի շարքով։ Ի՞նչ մեծ գործունեություն Սահակի համար... բայց անմիտ է նաև այս կարկատանը, որովհետև նախ՝ Կորյուն ասում է, թե Մեսրոպ շարեց տառերը և երկրորդ՝ Փարպեցին շատ ավելի մեծ բաներ է վերագրում Սահակին, քան տառերը շարելը։

Ամենից ուժեղն է Մարկվարտ («Պատմութիւն հայ նշանագրերուս», էջ 35), որ Ղազարի այս պատմությունը հետևյալ ձևով է որակում. «Մաշթոցի ասորիք՝ այսինքն Միջագետք ուղեգնացությունը ու հարակից պարագաները կլուռ Ղազար ամբողջովին։ Այս՝ գիտումնավոր փոփոխություն մըն է, որ կապ ունի հարկավ Ղազարա ցույց տված այն չափազանց ջանքին հետ, որով ո՛չ միայն Ս. Գրոց թարգմանության, այլ նաև նույնիսկ հայ գրերու կազմակերպության դիխավոր արդյունքը կգիտե վերագրել Սահակա, որով հափշտակված է—այս պատճառով ալ, ինչպես բնական է, դեպքիս հանդիսավայրը հարկ է փոխադրել Հայաստան— և կողոպտել Մաշթոցեն փառաց պսակը, որուն արդյամբք արժանացած էր։ Ղազար արժանի է սաստիկ կշտամբանաց այս փորձին համար, զոր պետք ենք իբրև պատմական անպատկառ խարդախություն մը մատնանիշ ընել. յարեբախտաբար այս փորձը Կորյան տված հարազատ տեղեկության պահված ըլլալուն շնորհիվ ի դերև ելած էր»։

(Շարունակելի)



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ՝ ՄԱՍԻՆ 18-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ*

Ձեր այսօրվա դասախոսության նյութը, թերթերում տպագրված հայտարարություններին նայելով, պիտի լիներ «Նոր տվյալներ հայ ազատագրական շարժումների մասին», բայց, իրականում, մեր դասախոսությունը սահմանափակ մի շրջանակ է ընդգրկելու—հայ ազատագրական շարժումները 18-րդ դարի առաջին երեք տասնամյակներում միայն։

Դասախոսությանս նպատակը չէ, իհարկե, ներկայացնել ձեզ տվյալ շրջանի շարադասված ամբողջական պատմությունը. այդ շատ մանրամասն և հանգամանորեն տրված է պրոֆ. Եզյանի, պրոֆ. Լեոյի ու այլ պատմաբանների աշխատությունների մեջ։ Մեր խնդիրն է լինելու ծանոթացնել ձեզ հայ ազատագրական շարժումների մասին վերջերս հայտնի դարձած կարևոր նորությունների հետ, Սակայն, նկատի ունենալով, որ ունկնդրող հասարակության մեջ կան այնպիսիները, որոնք լավ ծանոթ չեն վերջին դարերի ազատագրական շարժումների պատմության հետ, ուստի և որոշել ենք նոր հայտնագործությունների մասին խոսել հայ ազատագրական շարժումների պատմության ընդհանուր պատատի վրա։

18-րդ դարը — հայ ժողովրդի պատմության կարևոր և ճակատագրական նշանակություն ունեցող դարաշրջաններից մեկն է։ Այդ դարը, մեր կարծիքով, կարելի է անգամ ազատագրական շարժումների զարթոնքի դար անվանել, զարթոնքի՝ այն իմաստով, որ այս շրջանում է, որ լայն ծավալ են ստանում հայ ժողովրդի ազատագրական շարժումները, նոր ձևավորում է ստանում ազատագրության գաղափարախոսությունը և բազմաշարշար հայ ժողովուրդը, իմաստնացած անցյալի դառը փորձով, սկսում է իր հայացքը որոշակի սևեռել դեպի հյուսիս, դեպի Ռուսաստան և այնտեղից ակնկալում իր ազատությունն ու անկախությունը։

Նյութի այժմեականությունն ու կարևորությունը, կարծում եմ, պարզ է ձեր բոլորի համար։

***

Շահական Պարսկաստանը և սուլթանական Թյուրքիան, ինչպես հայտնի է, երկարատև պատերազմներից հետո, 1555 թվականին համաձայնության եկան և Հայաստանը բաժանեցին իրար միջև. Հայաստանի արևելյան շրջանները ընկան պարսիկների տիրապետության տակ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Թյուրքիայի։ Այդ համաձայնությունը հետագայում վերահաստատվեց 1639 թվականի պայմանագրով։

Հայ ժողովուրդն իր անցյալի պատմության մեջ շատ վշտեր և դառնություններ է տեսել, բայց դրանցից ամենածանրը, ամենաողբերգականը նա տեսավ 16—18-րդ դարերում՝

---

* Վերջին տարիներս 18-րդ դարի ազատագրական շարժումների մասին հայագետները հայտնաբերել են մի շարք արժեքավոր վավերագրեր, որոնց մասին ընդհանուր գաղափար տալու համար անհրաժեշտ ենք համարում տպագրել պրոֆ. Ա. Աբրահամյանի Անթիլիասում կարդացած դասախոսության սղագրությունը։— ԽՄԲ։

պարսկա-թյուրքական բռնակալության արյունոտ ժամանակաշրջանում։

16—18-րդ դարերում հիմնովին քայքայվեցին Հայաստանի գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, և տիրակալների վարած նենգադավ քաղաքականության հետևանքով, հայ ժողովուրդը կանգնեց բացահայտ ֆիզիկական ոչնչացման վտանգի առաջ։

Ժամանակակից պատմիչները շատ են զանգատվում հայ ժողովրդից վերցվող հարկերի ծանրությունից. հարկերն ավելացել էին կրկնակի, եռակի չափով։ Հավաքում էին բազմատեսակ հարկեր՝ բաշ փուլի (գլխահարկ), ով փուլի կամ դուտի փուլի (ծխահարկ), չոփ փուլի (անասնահարկ), դին ի փակի (հավատքի հարկ), ռախտատ (մաքս), բեգյար և այլն և այլն։ Հարկահավաքները հաշվի էին առնում հայ աշխատավորության եկամտի բոլոր աղբյուրները և հարկերը գանձում չտեսնված դաժանությամբ։

Հարկահանության ծանրությունից բացի, ժամանակակից պատմիչները գանգատվում են պարսից և թյուրքերի մեծ ու փոքր պաշտոնյաների կաշառակերությունից։ Ըստ պատմիչների վկայության, Հայաստանում պաշտոնավարող պարսիկ և թյուրք պաշտոնյաները վերից վար նշանակվում էին կաշառքով։ Կաշառքով նշանակված ամեն մի պաշտոնյայի նպատակն էր լինում քամել ժողովրդին՝ իրեն վերադաս մարդուն տված կաշառքի գումարը կրկնակի, եռակի վերստանալու համար։

Թե ինչ վիճակում է գտնվել հայ գյուղացին այդ ժամանակ, կարելի է պատկերացնել մի նամակից, որը գրել է 1725 թվականի հունիսի 15-ին Հին-Նախիջևանի գյուղերից մի հայ կին Մոսկվայում գտնվող իր որդիներին։ Կարդում ենք մի հատված այդ կնոջ նամակից. «Այ Աստուծոյ բանտաք,— դրում է նա,— այս ի՞նչ է մեր քաշում շարշարանքն՝ ո՛չ մեռեալ ենք, ո՛չ կենդանի... ամա՛ն, Աստուծոյ խաթրին համար, եկի՛ք, հասի՛ք։ Աստուծոյ շարաթն մին անգամ թաւշի են անում.. Քրիստոսի շարշարանքն զմեզ տալիս, այլ իրեր սուրաթ չի մնացել... Ամա՛ն, ամենայն բան գրելն մուսպաթ չի, միթկ արիք, լիմացիք, այս ինչ կրակ այ վիլաեթիս վրայ, այլ գեղ աւադանլուղ (շենք) չի մնացել, ամենն յէսիր յազման ին արել (գերի են արել), մնացել այ միայն մեր գեղն, Աստուած փրկի, Տէրն ազատի, սարը քար ասկար կոխած է... Ոգն չի կայ, էհտիբար չի կայ, փող չի կայ թէ եղն առնինք, գեղումն տասը եղն չի կայ, ամենն տարած են, կորցրած։ Գեղին սօխախները չորս թարաֆն ամենն քուչարանտ է (պաշարված է), ո՛չ գիշերն ունենք դադար, ո՛չ ցերեկն, չիտակ որ չիպ փուչացել [ե]նք։

Պարսկա-թյուրքական ավատական իրականության մեջ լայն չափեր էին ընդունել միջավատական կռիվները, որից նույնպես տուժում էր ժողովուրդը։ Անդրկովկասի ժողովուրդների համար առանձնապես հարատև ոպառնալիք էին ստեղծել թյուրքական դրածո ֆեոդալները Դաղստանում, որոնք հաճախակի հարձակվում էին Անդրկովկասի վրա, կողոպտում էին ադրբեջանական, վրացական և հայկական քաղաքներն ու գյուղերը, գերեվարում բնակչությանը և հեռանում իրենց բնակավայրերը։ Տառապանքի թե ինչպիսի՛ աղբյուր էին ստեղծում աշխատավոր բնակչության համար այս ասպատակությունները, որոնք, մեծ մասամբ, կազմակերպվում էին Թյուրքիայի թելադրանքով, կարելի է պատկերացնել Մսկուրի 12 հայկական գյուղերի բնակչության Վրաստանի Վախտանգ թագավորին ուղղած մի դիմումից, որը հրատարակել է պրոֆ. Եղյանը. «ԷԲ (12) գեղ ենք, ԺԲ գեղում տասը, ձի, գոմէշ չի մնացել, շորեղէն, բընձեղէն, արծաթեղէն, արկաթեղէն չի մնացել. մեր օղուշաղի կեցէն (այսինքն՝ հագից) շոր[ն] հանել են, մեր օղուշաղն մեր ձեռքէն առել են, կիշեր ու ցերեկ իւրեանց մտն է, թէ մեք գնալիս կու տանենք։ Գարի, դարման, բրինձ, չալթուք չի մնացել։ Մեր տներ[ն] փուլ են ածել, այրել, եկեղեցիք թօվլայ են շինել, է՛, մեզանում սիրաթ չի մնացել, է՛յ մին իքմին չի մնացել, որ մին փող արժենայ...։ Մարդկոց վերայ կարմիր միս չի մնացել, շատ թակելէն. անտէր և անճար են մնացել...»։

Մենք չենք ուզում խոսել Թյուրքիայի տղայաժողովների մասին (փոքրահասակ տղաներին հավաքում էին, դավանափոխ անել տալիս և ենիչերիների զինվորական գնդերը համալրում նրանցով), Պարսկաստանի աղջկաժողովների մասին (գեղեցիկ աղջիկներին հավաքում էին շահի, խաների և նրանց մոտիկ բարձրաստիճան մարդկանց հարեմների համար), կրոնափոխության քաղաքականության մասին և այլն, որոնց մասին զայրալից խոսքեր ունի գրած անմահ Աբովյանը. «Աղջիկն ասես քաշում էին, տղան ասես տանում, շատ անգամ թյուրքացնում, հավատքից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում. ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղուշաղը»։

***

Հայ ժողովուրդը, սակայն, ստրկական հնազանդությամբ չէ, որ տանում էր իր հարստահարիչների անարգ լուծը. նա հերո-

սական պայքար էր մղում իր ազատության և քաղաքական անկախության համար։

Հայ ժողովրդի համար անհնար էր սակայն միայնակ թոթափել պարսկա-թյուրքական դաժան լուծը, ուստի և հայկական քաղաքական շրջանները հաճախ դիմումներ են կատարում քրիստոնյա պետություններին և խնդրում նրանց՝ օգնելու իրենց՝ դուրս գալու այս ծանր վիճակից։

Այդ դիմումներից ուշադրության արժանի է Հակոբ կաթողիկոս Ջուղայեցու դիմումը՝ ռուսական Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, որը հայտնաբերել է Ա. Հովհաննիսյանը և հրատարակել «Արարատ» ամսագրի 1915 թվականի № 9—10-ում։ Հակոբ Ջուղայեցին, իր այս դիմումի մեջ, նկարագրելով հայ ժողովրդի ծանր վիճակը, ցարից խնդրում է՝ որպեսզի նա կարգադրի Պարսկաստանի իր դիվանագետներին՝ ազդելու պարսից կառավարության վրա՝ որպեսզի վերջինս սահմանափակի հայերի նկատմամբ սկսած հալածանքը։

16—17-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությամբ զբաղվող մեր նրիտասարդ և շնորհալի պատմաբաններից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը իր «Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում» վերնագրով արժեքավոր աշխատության մեջ, Ջուղայեցու նշված դիմումի, ինչպես և 1667 թվականի հայ-ռուսական պայմանագրի և պատմական այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա եկել է այն եզրակացության, որ հայ-ռուսական քաղաքական կապերը սկսում են ո՛չ թե 18-րդ դարում, ինչպես ընդունված է պատմագիտության մեջ, այլ ավելի կանուխ։

Նույն պատմաբանը, պրոֆ. Վ. Պարսամյանի և Տեր-Ավակիմովայի հետ միասին, Մոսկվայի արխիվներից հայտնաբերել և նախանցյալ տարի հրատարակել են 17-րդ դարի հայ-ռուսական տնտեսական, կուլտուրական և քաղաքական կապերին վերաբերող մի ծավալուն ժողովածու՝ մոտ 100 վավերագրերով։ Այդ ժողովածուն, որ բազմաթիվ նորություններ է բերում մեր պատմության համար, դժբախտաբար, չի ստացվել այստեղ և դուք ծանոթ չեք նրա հետ։

***

Մեզ մոտ հայտնաբերված պատմական որոշ տվյալներ վերաբերում են հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչ Իսրայել Օրուն։

Իսրայել Օրու գործունեությամբ մեզ մոտ հանգամանորեն զբաղվել է և այժմ զբաղվում է Ա. Հովհաննիսյանը։ Նա գրել է ծավալուն մի աշխատություն, որը կհրատարակվի առաջիկայում։ 1945 թվականին մանկավարժական ինստիտուտների ուսանողության համար փոքրիկ մի աշխատություն հրատարակել է դոցենտ Համո Հարությունյանը՝ «Իսրայել Օրին» վերնագրով։

Դուք, անշուշտ, ծանոթ եք Օրու հետ և գիտեք նրա թափառումների տխուր պատմությունը Արևմուտքում, ինչպես և նրա հիասթափությունը և 1701 թվականին ռուսական արքունիքին դիմելը։

Օրին հայ ժողովրդի անունից Պետրոս առաջինին ներկայացրել է մի դիմում, որը պատմական խոշոր արժեք ունի։ Ցույց տալու համար հայերի Ռուսաստանից ունեցած ակնկալությունները, ցանկանում ենք փոքրիկ մեջբերում անել այդ դիմումից։ «Եկանք մենք այստեղ (այսինքն՝ Մոսկվա),— գրում է նա,— որպեսզի ընկնենք ձեր արքայական մեծության ոտները և մեզ այստեղ ուղարկողների կողմից խնդրենք ողորմություն՝ օգնելու մեր խղճուկ ժողովրդին, որ սաստիկ տանջվում է անհավատների բռնության տակ։ Ձեզ կասկածում, որ ձեր արքայական մեծությանը հայտնի է, որ հայոց երկրում սրանից առաջ, հին ժամանակներում, եղել են թագավորներ և քրիստոնյա իշխաններ, բայց հետո, նրանց անմիաբանության պատճառով տեղի ունեցավ այն, որ հայոց այդ ամբողջ թագավորությունը ընկավ անհավատների լծի տակ։ Եվ ինչպես Ադամի որդիները հուսով սպասում են Մեսիայի գալստյան, որ պիտի ազատեր նրանց հավիտենական մահից, այնպես էլ այս խեղճ ժողովուրդը միշտ ապրել է և այժմ ապրում է այն հույսով, թե օգնություն կստանա ձեր արքայական մեծությունից...»։

Պետրոս Մեծը խոստացավ Իսրայել Օրուն՝ օգնել հայ ժողովրդին ազատագրվելու, սակայն այդ հնարավոր չէր անմիջապես իրագործել, որովհետև Ռուսաստանը այդ ժամանակ կռվի մեջ էր Շվեդիայի հետ։ Բայց, այնուամենայնիվ, Պետրոս Մեծը անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկեց. 1707 թվականին, ինչպես հայտնի է, նա Իսրայել Օրուն, 50 հոգուց բաղկացած շքախմբով, ուղարկեց Պարսկաստան որպես դեսպան։ Օրուն հանձնարարված էր մոտից ուսումնասիրել Անդրկովկասի քաղաքական վիճակը, պարզել կարևոր ռազմական կենտրոնները և կապեր ստեղծել տեղի հայ, վրացի և ադրբեջանական շրջանների հետ, որը հաջողությամբ կատարեց նա։ Հայտնի է ձեզ Օրու վախճանը — նրա մահը Աստրախանում 1711 թվականին՝ իր փայփայած երազների իրագործումը չտեսած։

Օրուն վերաբերող մի քանի արժեքավոր վավերագրեր հայտնաբերել և հրատարակել

Լ. Ա. Հովհաննիսյանը իր «Հայկական օրիենտացիայի ծագումը» աշխատության մեջ, Օրուն վերաբերող երկու վավերագրեր, ճիշտ է՝ երկրորդական արժեքի, հայտնաբերել և հրատարակել ենք մենք «Էջմիածին» ամսագրի 1950 թվականի № 11—12-ում։ Այդ վավերագրերից մեկը— 1704 թվականի փետրվարի 2-ին Օրու՝ արտասահման մեկնելու նախօրյակին Պետրոս Մեծի արքունիքին ուղղված դիմումն է, ուր նա հայտնում է, որ իր բացակայության ժամանակ իրեն ներկայացուցիչ է նշանակում Մինաս վարդապետին, որը պաշտոն ունի միջնորդի դեր կատարել Հայաստանից եկած սուրհանդակների և կառավարության միջև։ Իսկ մյուս վավերագիրը— 1710 թվականի սեպտեմբերի 10-ին Նիաղովայում կազմված արձանագրությունն է՝ իր շքախմբի անդամ կապիտան Վիշտոկին դատելու կապակցությամբ։ Հետաքրքիրն այն է, որ այդ արձանագրության տակ ստորագրել են Գանձասարի Եսայի կաթողիկոսը, Ուդիների Եղիշե վանքի վանահայր Հովհան վարդապետը և այլ անձինք, որոնք գնում էին Պետրոս Մեծի մոտ՝ որպես կենդանի վկաներ՝ արտահայտելու հայ ժողովրդի զգացմունքները և ակնկալությունները, բայց կես ճանապարհից հետ էին վերադառնում։

***

Իսրայել Օրու մահվանից հետո, նրա սկսած գործը, ինչպես հայտնի է, շարունակեց նրա գործակից Մինաս վարդապետը՝ թեպետ ո՛չ այնպիսի սրտցավությամբ և գաղափարական նվիրվածությամբ, ինչ Օրին։

Հայտնաբերված մի շարք փաստաթղթերից երևում է, որ Մինաս վարդապետը գործուն մասնակցություն է ունեցել հայ-ռուսական հարաբերությունների մեջ։ Նա հատուկ սուրհանդակների միջոցով, պարբերաբար, տեղեկություններ է հավաքել Հայաստանում և հաղորդել ցարական արքունիքին։ Մինաս վարդապետը երկար ժամանակ հանդիսացել է ռուսական արքունիքի խորհրդատուն հայկական հարցում։

Մինաս վարդապետի գործունեության մասին ուշագրավ վավերագիր է նրա 1725 թվականի օգոստոսի 19-ին (Պետրոս Մեծի մահվանից հետո) գրած զեկուցագիրը ցարական արքունիքին, որը հրատարակել ենք մենք «Էջմիածին» ամսագրի 1950 թվականի № 11—12-ում։

Մինաս վարդապետն իր այդ զեկուցագրում նշում է, որ պարսկա-թյուրքական իշխանությունները թշնամացել են հայերի հետ, որովհետև իմացել են, որ հայերը բանակցել են ռուսական արքունիքի հետ և իրենց հպատակությունն են հայտնել նրան։ «...Ամենայն կողմանէ իմացել են, որ հայքն մեծ թագաւորի շքի տակումն են,— գրում է նա,— և հիմիկս այլազգիքն ամէն կողմանէ կոիւ գալիս են մեր ազգի վրայ, շատ նեղութիւն քաշում են թիւրքից և ամենայն այլազգեացս։

Ըստ Մինաս վարդապետի տեղեկության, չնայած հայերը հերոսաբար դիմադրում են պարսկա-թյուրքական հարստահարիչներին, բայց քանի որ չունեն գանձատուն, զինանոց, ուստի և չեն կարող մինչև վերջ դիմադրել թշնամու կազմակերպված բանակներին։ Մինաս վարդապետը գտնում է, որ ռուսական արքունիքը ջանք չպիտի խնայի հայ և վրաց ժողովուրդներին աջակցելու և հովանավորության տակ պահելու համար։ «Եթէ այն երկու ազգն ձեռաց գնան,— նախազգուշացնում է նա,— այլ յետոյ հնարք չէ տնչութիւն լինիս։ Նրա կարծիքով, եթե ռուսական զորքերը հարավում աջակցեն հայերին և վրացիներին, դրանով նրանք կամրացնեն Ռուսաստանի հարավային սահմանը, և Ռուսաստանը ո՛չ մի վտանգ չի ունենա ո՛չ ծովից և ո՛չ ցամաքից։

Մինաս վարդապետն իր այդ զեկուցագրում հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Գիլանի հայկական կամավորական զորամասի կազմման մասին։ Նրա տեղեկություններից երևում է, որ Հայաստանի զանազան շրջաններից այստեղ են գալիս եղել կռվի ընդունակ հայ տղամարդիկ՝ զենք վերցնելու և թշնամու դեմ կռվելու համար. «Եւ իւրեանց մահն չեն ափսոս գալիս, որ լինի Աստուծով, յաղթեն զդուշմանն։

Մինաս վարդապետն արքունիքից խնդրել է թույլ տալ հայկական զորամասին՝ ձեռք ձգած ավարը և գերիները սեփականացնել, քանի որ այդ կքաջալերի նրանց և կհզորացնի. «...Այնպէս հրաման լինի թագաւորէն, որ ինչ զինտր, ինչ թալան և գերի առեալն՝ իւրն լինի, ինչպէս որ անօրէնքն, այնպէս թալան առնելով զօրացան։

Մինաս վարդապետն այնուհետև խնդրում է արքունիքից հայերին քաջալերական մի հրովարտակ ուղարկել, որովհետև նրանք կլսեն Պետրոս թագավորի մահը, «շատ տրտմութիւն կու լինի նոցա, կու յուսահատին», և գտնում է, որ պետք է այնպես անել, որ «լուսայհոգի թագաւորին խոստացեալն և անչափ աշխատանքն զուր չէ կորիս։

***

18-րդ դարի ազատագրական պայքարի պատմության համար բացառիկ արժեք ունեն նորահայտ այն վավերագրերը, որոնք վերաբերում են Գանձակի ճակատամարտին, որ տեղի է ունեցել 1723 թվականի սեպտեմբեր ամսում հայ, ադրբեջանցի և վրաց ժողովուրդների միացյալ ուժերի և

թյուրքական բանակի միջև։ Այդ կարևոր իրադարձության պատմական վավերագրերը հայտնաբերել է երիտասարդ պատմաբան Ռաֆիկ Աբրահամյանը և հրատարակել հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» 1953 թվականի № 6-ում։

Ռ. Աբրահամյանի հրատարակած հոդվածից երևում է, որ թյուրքական բանակը 1723 թվականին խնդիր է ունեցել գրավել Անդրկովկասի ստրատեգիական կարևոր հանգույց Գանձակ քաղաքը և դարձնել այն ռազմական ճամբար՝ դուրս գալու ընդդեմ Կասպից ծովի ափերը շարժվող ռուսական բանակի։ Թյուրքական կազմակերպված 70.000-անոց հսկա բանակը այդ նպատակով հարձակվել է Գանձակի վրա։ Տեղի հայադարձեջանական բնակչությունը, ստանալով Սղնախների հայկական զորքերի և վրաց զորքի օգնությունը, հերոսական դիմադրություն է ցույց տվել։ Կռիվը տևել է 18 օր։ Անդրկովկասի երեք ժողովուրդները ո՛չ միայն կարողացել են քաջաբար պաշտպանվել, այլև հակահարձակման են անցել, շարդել են թյուրքական բանակը և խայտառակ փախուստի մատնել թշնամիներին։

Գանձակի ադրբեջանական քաղաքական ղեկավար անձինք Պետրոս Մեծին հասցեագրված իրենց նամակում գրել են. «Ձերդ արքայական արեգնափայլ մեծությանը զեկուցում ենք այն մասին, որ թյուրքական սուլթանը խախտելով նախկինում դոյություն ունեցող խաղաղության պայմանագիրը, առանց որևէ պատճառի և օրինական իրավունքի, Գանձակի և Ղարաբաղի շրջանները գրավելու նպատակով, մեզ վրա էր ուղարկել 70.000 զորաբանակ մի քանի փաշաների հրամանատարությամբ՝ մեզ ոչնչացնելու, մեր բնակարանները ավերակ դարձնելու, մեզ մեր տներից դուրս անելու և Ռուսաստանի վրա շարժվելու նպատակով։

Բայց մենք, ձեր հավատարիմ ծառաները, ամենակարող Աստուծու օգնությամբ և տեղիս լուսափայլ բարձրյալ բեկլարբեկի (այսինքն՝ վրաց Մահմադ-ղուլի խանի) աջակցությամբ, դրոհեցինք և գլխովին շարդեցինք նրանց, այդ մշտական անազնիվ և պորտաբուծ մարդկանց, շատերին կոտորեցինք։ Ովքեր կենդանի մնացին՝ մեր երկրից դուրս վռնդեցինք»։

Մի այլ զեկուցագրում Գանձակի ադրբեջանցի և հայ մի խումբ մարդիկ ռուսական արքունիք ուղարկած իրենց համախոսականում հավաստիացնում են Պետրոս Մեծին, որ տեղի բնակիչները «Ձեր մեծության բարեկամներ են և շարամիտ թյուրքերի թշնամիները. մենք թյուրք սուլթանի հրահանգները երբեք չենք կատարում և խույս ենք տալիս նրանից։ Ի՛նչ որ հրամայեք՝ պատրաստ ենք կատարելու»։

Գանձակի ճակատամարտի մասին երիտասարդ պատմաբան Ռաֆիկ Աբրահամյանի հայտնաբերած այս և մի շարք այլ վավերագրեր պատմական մեծ արժեք ունեն Անդրկովկասի մեր երեք բախտակից ժողովուրդների պայքարի պատմության համար ընդդեմ օտարերկրյա նվաճողների։

***

Հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության համար Հայրենի երկրում հրատարակված սկզբնաղբյուրներից կարևոր է 18-րդ դարի մատենագիր Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատությունը, որը ժամանակին հայտնաբերել էր Լեոն, բայց չէր կարողացել լույս ընծայել, և հրատարակվեց այն 1938 թվականին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի կողմից։

Աբրահամ Երևանցու պատմության մեջ պատմական մեծ արժեք ունի այն տեղեկությունը, որ վերաբերում է Երևանի բնակչության 1724 թվականին թյուրքական բանակին ցույց տված դիմադրությանը։

1724 թվականի գարնանը, ըստ Աբրահամ Երևանցու նկարագրության, թյուրքական մի խոշոր բանակ հարձակվեց Երևանի վրա և պաշարեց այն։ Տեղի բնակչությունը քաջաբար պաշտպանեց քաղաքը։ Թյուրքերը հաջողություն չունենալով, փոխեցին իրենց բանակի հրամանատարը, օգնության ուղարկեցին Պարսկաստանի և Վրաստանի իրենց բանակները, և երկու ամիս պաշարելուց հետո միայն կարողացան փշրել տեղացիների համառ դիմադրությունը և մտնել քաղաք։ «...Եւ այնչափ եղև հեղումն արեան,— գրում է Աբրահամ Երևանցին,— մինչև կարմրանալ Զանգու գետոյն և երկրին, որ առ գետովն. և հոտ արեանց և դիականց կոտորելոցն զքաղաքն բովանդակ մինչև ի հեռաւոր տեղիս լցին։ Եւ առաւ քաղաքն յեօթներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին 1173 հայկազեանս թուականի (1724 թ.)։ Կոտորեցան զորքն հայոց ի սուր սուսերի և գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ...»։

Նորահայտ վավերագրերից երևում է, որ Երևանի հերոսական պաշտպանությունից պակաս չի եղել նույն թվականի ապրիլ—մայիս ամիսներին Լոռիի պաշտպանությունը թյուրքական բանակից։

Լոռիի այդ մարտի մասին կցկտուր տեղեկություններ պահվել են երկու վավերագրում— Գյուլիստանի Եսայի և Սարգիս յուզբաշիների ցարական արքունիք ուղարկած 1724 թվականի հունիսի 5-ին գրված զեկուցագրում և Կախեթիայի թագա-

վոր Կոստանդինի ներկայացուցիչ իշխան Ռոզեպի Մոսկվայում, Արտաքին գործերի կոլեգիայում արած հայտարարության մեջ։

Եսայի և Սարգիս յուզբաշիները, խոսելով Թիֆլիսի թյուրքական բանակի մասին, գրել են. «Նույնպես, եթե կբարեհաճեք Թիֆլիսից տեղեկություն իմանալ, որոշ քանակությամբ զորք նստած է քաղաքում։ Եվ [թյուրք] հրամանատարը իր հետ վերցրեց որոշ թվով զորք և գնաց Լոռի քաղաքի վրա։ Եվ նա կանգ է առել. չի կարողանում վերցնել»։

Իսկ իշխան Ռոզեպը 1724 թվականի հունիսի 4-ին Մոսկվայում, Արտաքին գործերի կոլեգիայում հայտարարել է. «Թյուրքերը շատ օրեր է, ինչ կանգ են առել, բայց չեն կարողանում [Լոռին] վերցնել։ Եվ երեք անգամ թյուրքերը այս [քաղաքի] բնակիչներից պարտություն են կրել»։

Դժբախտաբար, մեզ չեն հասել քաջարի լոռեցիների թյուրքական բանակին ցույց տված դիմադրության մանրամասնությունները և զեկավարների անունները, քաջեր, որոնք երեք անգամ պարտության են մատնել թյուրքական կազմակերպված բանակին։

***

Վերջին տարիներս նոր հայտնաբերված նյութերի զգալի մասը կապված է Պետրոս Մեծի պատվիրակ (էլչի) հայազգի Իվան-Կարապետի գործունեության հետ։

Իվան-Կարապետի մասին որոշ փաստեր պատմագիտության հայտնի էին վաղուց, դեռևս պրոֆ. Եղյանի հրատարակությունից։ Նրա մասին, Պետրոս Մեծի հայ ժողովրդին ուղղված հրովարտակը 1723 թվականին Մոսվայից Հայաստան բերելու կապակցությամբ, բավականին ընդարձակ խոսել է պրոֆ. Լեոն իր Պատմության երրորդ հատորում։ Սակայն Իվան-Կարապետի գործունեությունը բազմակողմանիորեն պարզվեց վերջերս, երբ Մոսկվայի պետական արխիվներում հայտնաբերվեցին նրա գործունեությանը վերաբերող ամբողջական գործերը։ Պարզվեց, որ նա հայ ազատագրական շարժման պատմության մեջ պակաս անձնավորություն չի եղել, քան Իսրայել Օրին։

Հայտնաբերված այդ նյութերի մասին մենք հատուկ հաղորդում ենք տպել «Էջմիածին» ամսագրի 1946 թվականի փետրվար-մարտ համարում՝ «Նոր վավերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայ-ռուս բարեկամական հարաբերությունների մասին» վերտառությամբ։ Իսկ անցյալ տարի, Իվան-Կարապետի գործունեության հետ առընչվող վավերագրերի մեծ մասը, մենք հրատարակեցինք մեր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» խորագրով աշխատության հավելվածի մեջ, որն ստացվել է այստեղ և ծանոթ է ձեր շատերին։

Նշված վավերագրերը՝ Իվան-Կարապետի ռուսական արքունիքին Անդրկովկասից ուղարկած զեկուցագրերն են, նրա նամակագրությունը Անդրկովկասի քաղաքական աշքի ընկնող անձնավորությունների հետ։ Համառոտակի ուզում եմ կանգ առնել այն նորությունների վրա, որոնք բերում են նշված վավերագրերը մեր պատմագիտությանը։

Վավերագրերից երևում է, որ Իվան-Կարապետի գլխավոր խնդիրը Ղարաբաղում եղել է ծանոթացնել տեղացիներին Պետրոս Մեծի հրովարտակի հետ և հպատակության երդմնագրեր վերցնել նրանցից։

Պատվիրակը Ղարաբաղ ժամանելուց անմիջապես հետո, Գանձասարի վանքում ժողով է գումարել և հանդիսավոր իրադրության մեջ կարդացել հրովարտակը։ Տեղացիները սիրահոժար ընդունել են ռուսական հպատակությունը և ստորագրություններ տվել, որ իրենք հանձն են առնում հավատարիմ քաղաքացիներ լինել։

Իվան-Կարապետը ժամանելուց հետո, Եսայի կաթողիկոսը, Ավան յուզբաշին և մելիք Թամրազը նամակ են գրել Պետրոս Մեծին և հայտնել նրան, որ Իվան-Կարապետը հասել է Ղարաբաղ, և նրա ուղարկած հրովարտակն ընդունել են մեծ ուրախությամբ, գլխների վրա, իբրև «Աստուծուց առաքեալ ողորմություն և խնամք»։

Որպես «նորընծա» հպատակներ, նրանք նմանապես հայտնել են, որ չնայած իրենք չորս կողմից շրջապատված են զորեղ թշնամիներով, բայց առ այժմ ի վիճակի են քաջությամբ պաշտպանվել, և սպասում են այն երջանիկ օրվան, երբ թագավորի զորքերը կմոտենան իրենց սահմաններին և իրենք ընդառաջ կգան և հավատարմությամբ կծառայեն նրան։ Ըստ որում, հպատակության գրեր է տվել ո՛չ միայն Ղաղարաղի, այլև Դեղարքունիքի քաղաքական զեկավար շրջանը ևս, որոնց բնագրերը և ռուսերեն թարգմանությունն այժմ պահվում են Մոսկվայի արխիվներում։

Արխիվում հայտնաբերվել են Ղարաբաղի քաղաքական շրջանի կողմից ստորագրված և Պետրոս Մեծի պատվիրակին տրված հպատակության մի քանի գրեր։ Ձեզ որոշ պատկերացում տալու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել Դիզակի և Վարանդայի զեկավար շրջանի տված հպատակության գիրը. «Պատճառ գրոյս այս է, որ թվին Փրկչին 1724, յունվար ամսին չորսումն, մեք՝ Հայոց երկրիս, որ է Դիզակոյ և Վարանդոյ երկրիս ուղղաշէջքս, և մեք մեր թամամիյ մեծով և փոքրով, վարդապետով և քահանայիւք, մելիքով և քոդխոդէքով, քէվխով և ըռայաթով,

թամամի մեր ասկարովս, ներքոյ գրեալքս մեր կամօքն և մեր յօժարութեամբն ծառայ դարցանք վերոյգրեալ մեծին արքային, որ էս թարեղէն մինչի գալուստն Քրիստոսի կամք ներքոյ հրամանին, որ ինչ որ մեր թագաւորն մեզ հրաման առի, ուր հրամանքն կատարեմք։ Եւ եթէ ինչ որ հրաման առի, հրամանքն կատարեմք ոչ, դառնամք, և թէ խարեմք, մեր գլուխքն և մեր ապրանքքն թագաւորին լինի, առաջի Աստուծոյ թագաւորն անպարտ լինի և մեք պարտական լինեմք։ Հավատարմության այս գրի տակ իրենց ստորագրություններն են դրել Ավան և Միրզա յուզբաշիները և 18 այլ մելիքներ։

Այսպիսով, պարզվում է, որ ռուսական զորքերը դեռ հայկական շրջանները չմտած, հայ քաղաքական շրջանները ռուսական հպատակություն էին ընդունել և երդմնագրեր տվել այդ առթիվ։

Վավերագրերից երևում է, որ սկզբնական շրջանում պատվիրակին չի հաջողվել հպատակության հավատարմագիր վերցնել Ղարաբերթի և Գյուլիստանի մելիքներից։ Իր զեկուցագրերում պատվիրակն առանձնապես շատ է գանգատվում մելիք Բաղրից, որը, նրա ասելով, կապված է պարսկական արքունիքի հետ և անվերջ մատնություններ է անում։ Այդ դավաճան մելիքը, ըստ պատվիրակի մի հաղորդագրության, տարիներ առաջ, հյուրասիրության պատրվակով, իր տունն է հրավիրել Ղարաբաղի աչքի ընկնող 55 մելիքների, բոլորի գլուխը կտրել և ուղարկել պարսից արքունիք, որպես պարսից պետության դավաճանների։ Վերջ ի վերջո, պատվիրակին հաջողվել է այս դավաճան մելիքին, ինչպես և Ղարաբաղի մյուս չհնազանդվող մելիքներին և յուզբաշիներին հնազանդության բերել և հաշտեցնել իրար հետ։

Պետրոս Մեծի պատվիրակը հաստատվելով Ղարաբաղում, աշխատել է իրար մոտ բերել և հաշտեցնել ոչ միայն հայ մելիքներին և յուզբաշիներին, այլև հայ, վրացի և ադրբեջանցի քաղաքական անհամերաշխ շրջանակները։ Նա փորձել է կապ ստեղծել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ծավալված ազատագրական շարժումների միջև։

Այդ տեսակետից պատմական բացառիկ արժեք ունի Մոսկվայի արխիվներում հայտնաբերված վավերագրերից մի պայմանագիր, որը կնքվել է Ղարաբաղի հայ մելիքների և Գանձակի քաղաքական զեկավար շրջանի միջև։ Ըստ այդ պայմանագրի, եթե թյուրքական զորքերը հարձակում գործելու լինեն Գանձակի վրա, հայ մելիքները պարտավորվում են օգնության հասնել Գանձակի ադրբեջանցիներին, և, հակառակը, եթե թյուրքերը հարձակվելու լինեն Ղարաբաղի հայերի վրա, ապա Գանձակի ադրբեջանցիները պարտավորվում են օգնության հասնել հայերին։ Պայմանագիրը հասել է երկու լեզվով՝ ֆարսերեն և հայերեն։ Կարդում ենք պայմանագրի հայկական տեքստը.

«Պատճառ գրոյս այս է, որ թիւն Փրկչին 1724 մարտի ամսի ԻԱ-ումն (21-ին) մեք՝ Ղարաբաղի հայոց երկրի ազգս, կարապետով, մեծով և փոքրով, ուզբաշով, մէլիքով, քէվխով և քադխուդէքով, մեզ վաքիլ և ախտիար արարինք] էլչի Իվան Կարապետին, որ թէ մեր մէջն և գանջեցոց մէջն մինըզմինոյ հետ դոշմանութիւն ունինք, լուն էլչի բէկն արզ արարինք։ Էլչի բէկն գիր էր զրէլ Գանջու մեծի և փոքրին վերէն և Գանջոյ եղեալ մեծ և փոքրին] գիր ին գրէլ էլչի բէկին՝ թէ մեք էլ թագաւորին ծառայ անք և թարէ անք։ Էս ջահտան ես՝ Սսայի կաթողիկոսքս, և ես՝ Ներսէս կաթողիկոսքս, ես՝ Ավան ուզբաշիս, և ես՝ Միրզա ուզբաշիս, և ես՝ Թարխան ուզբաշիս, և ես՝ Բաղի ուզբաշիս, և ես՝ Սարգիս ուզբաշիս, և ես՝ Աբրահամ ուզբաշիս, և ես՝ մէլիք Թամրազքս, և ես՝ մէլիք Բազէրքս, և ես՝ մէլիք Գրիգորքս, և ես՝ մէլիք Դանելքս, և ես՝ մէլիք Եկանքս, մեր թարուն թալեղովս, քէվխով և քադխուդով, մեծով և փոքրով, էս գիրս տվինք էլչի բէկ Իվան Կարապետին։ Էս ջահտան, որ էլչի բէկն մեզ գանջեցոց հետ բարբրացնի, որ մինըզմինոյ հետ սէր մոհմաթ առնենք և մինըզմինոյ քսմակ առնենք։ Եւ էս ըլթզամս էլ տվինք էլչի բէկին, որ թէ գանջեցոց վերէն, թէ օսմանլուի և թէ լակզոյ զօշուն գայ, մեր հայոց ազգքս, թամամի վերոյգրեալքս, գնանք գանջեցոց քսմակ, լուն Գանջայ էլ մեր թագաւորին թարէ այ (այսինքն՝ Պետրոս Մեծին հպատակ է)։ Եւ թէ մեզ վերէն օսմանլու կամ լազգի գայ, գանջեցիք գան մեզ քսմակ։ Եւ թէ մեր հայոց ազգքս գանջեցոց խաբենք, գնանք ոչ քսմակ, և թէ գանջեցոց խաբենք, կամ գանջեցոց մին մարդի, կամ շատ փոքր բռնենք, կամ սպանենք, կամ թալանենք, մեր գլուխքն և մեր ապրանքքն թագաւորին լինիս։

Անդրկովկասի բախտակից երեք ժողովուրդները իրենց դարավոր պատմության ընթացքում հաճախ են ձեռք-ձեռքի տված հանդես եկել օտար նվաճողների դեմ և, հարկավոր դեպքում, կնքել փոխօգնության դաշնագրեր։ Սակայն այդ դաշնագրերից և ոչ մեկը մեզ չի հասել։ Այս միակ պայմանագիրն է, որ հասել է մեզ և, այս տեսակետից, այն պատմական բացառիկ արժեք ունի։

Այսպիսով, պատվիրակը Ղարաբաղում գտնված առաջին օրերից, ամեն կերպ աշխատել է Անդրկովկասի անհամերաշխ քաղաքական շրջանակներն իրար մոտ բերել, հաշտեցնել և միասնական քաղաքական ու-

ժեղ բռունցք ստեղծել ընդդեմ պարսկական և թյուրքական սպառնալիքի։

Ղարաբաղի հայ մելիքական թշնամական շրջանը հաշտեցնելուց հետո, պատվիրակը մեծ աշխատանք է տարել նաև կազմակերպելու տեղի զինված հարկական ուժերը, որոնց թիվը, ըստ պատվիրակի տեղեկության, հասել է մինչև 40.000-ի։

Պետրոս Մեծի պատվիրակը, ինչպես երևում է, խնդիր է ունեցել զբաղվել ո՛չ միայն Ղարաբաղով, այլև բուն Հայաստանով՝ կազմակերպելու այնտեղի հայությունը։ Պատվիրակը առաջին հերթին աշխատել է պարզել Հայաստանի քաղաքական վիճակը. նա այդ նպատակով հատուկ սուրհանդակներ է ուղարկել Երևան և Հայաստանի մյուս շրջանները։

Իվան-Կարապետի հետ կապված և բուն Հայաստանին վերաբերող նորահայտ վավերագրերից ուշադրության արժանի է Էջմիածնի կաթողիկոսական տեղակալ Հովասափ վարդապետի 1724 թվականի մարտի 13-ի նամակը՝ հասցեագրված Ղարաբաղի մելիքներին, որը հանձնվել է պատվիրակին, իսկ վերջինս ուղարկել է այն Պետրոս Մեծի արքունիքին։ Այդ նամակում Հովասափ վարդապետը մելիքներից խնդրում է հաղորդել իրեն Ռուսաստանից Ղարաբաղ պատվիրակ գալու լուրի հավաստիությունը։

Հովասափ վարդապետի այս նամակը պատմական կարևոր նշնակություն ունի այն տեսակետից, որ որոշակի պատասխան է տալիս այն հարցին, թե քաղաքական ինչ կողմնորոշում է ունեցել այդ ժամանակ պատմական Այրարատի բնակչությունը։ «Առհասարակ,— գրում է նա,— թե՛ մեր, թե՛ սոցա (այսինքն՝ տեղի ադրբեջանցիների) ակնկալությունն հիսիսայինն է, նորա գալըստեանն և ճանապարհին են սպասում։ Դապուլ են հիսիսայնոց գալստեանն, այլոց նման չեն համարում... Սոքա այլոց ակնկալություն չունին, այլ միայն հիսիսայնոցն կու սպասեն»։ Նամակագիրը ցանկություն է հայտնում, որ «դոցա (այսինքն՝ հյուսիսայինների) օգնությունն և գալուստն շուտով լինի, քանի որ թշնամաց ձեռն չեմք մատնվել, դերի և աւար չեն հարկաներ, շուտով գայցեն, մեզ այցելությունն և ազատությունն լիցի»։

Իվան-Կարապետը Արևելյան Հայաստանի մասին մանրամասն տեղեկություններ հավաքելուց հետո, հայտնել է Պետրոս Մեծին և վստահացրել, որ «Հայոց ազգն հրամանոցդ գլուխ կտան», այսինքն՝ հայ ժողովուրդը իր հպատակությունն է հայտնում, միայն խնդրում է շուտափույթ օգնություն ուղարկվի։

Պատվիրակի զեկուցագրից երևում է, որ նա ցանկացել է անձամբ գնալ Երևան, Էջմիածին, սակայն այդ նրան չի հաջողվել, որովհետև թյուրքական բանակը, ինչպես հայտնի է, 1724 թվականի գարնանը հարձակման անցավ և Երևանը, երկու ամիս հերոսական պաշտպանությունից հետո, ընկավ թյուրքերի ձեռքը։

***

18-րդ դարի հայ ազատագրական շարժումների պատմության մասին հայտնաբերված նյութերից արժեքավոր են առանձնապես այն վավերագրերը, որոնք վերաբերում են Սյունիքի ազատագրական շարժումներին և նրա քաջարի ղեկավարին՝ մեր ազգային հերոս Դավիթ-բեկին։

Անշուշտ դուք ծանոթ եք Բաֆֆու «Դավիթ-բեկ» պատմական վեպի և ազգագրագետ Ե. Լալայանի Դավիթ-բեկի մասին «Ազգագրական հանդէսի» 12-րդ գրքում տպված աշխատության, ինչպես և Լեոյի «Հայոց պատմության» 3-րդ հատորի հետ։

Հայրենի մեր գիտնականներից Սյունիքի ազատագրական շարժումով հանգամանորեն զբաղվել է պատմական գիտությունների թեկնածու Արմենակ Միրզոյանը իր «Հայ ազատագրական շարժումները Սյունիքում» խորագրով մենագրության մեջ, որը հրատարակվել է Հայաստանի Պետական պատմական թանգարանի աշխատություններիի 2-րդ հատորում 1950 թվականին (էջ 99—191)։ Այնուհետև, Սյունիքի ազատագրական շարժումների և Դավիթ-բեկի մասին ուսումնասիրություններ են հրատարակված պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի և մեր կողմից։

Նորահայտ նյութերից պարզվում է, որ Պետրոս Մեծի պատվիրակ Իվան-Կարապետը գալով Ղարաբաղ, աշխատել է կապ ստեղծել Սյունիքի հետ, և 1724 թվականի ապրիլի 15-ին անձամբ է այցելել Սյունիք։ Նա Սյունիք է գնացել Ղարաբաղի Հայկական զորքով և ղեկավարել Նախիջևանի պարսիկ խանի և Բարգուշատի սուլթանի դեմ տեղի ունեցող կռիվները։ Սյունիքից վերադառնալիս պատվիրակը հատուկ զեկուցագիր է ուղարկել ռուսաց արքունիք իր ճանապարհորդության մասին, որը հայտնաբերված է և հրատարակված։

Պատվիրակի այդ զեկուցագրից երևում է, որ նա Սյունիք գնալիս իր հետ տարել է Պետրոս Մեծի հրովարտակը՝ հայ ժողովրդին իր հովանավորության տակ վերցնելու մասին և ցույց տվել տեղացիներին։ Այստեղ նա, ինչպես Սղնախներում, հայերը սիրահոժար իրենց հպատակությունն են հայտնել ռուսաց արքունիքին։ «Եւ ես թագաւորին ուրագն նշանց տվի, —գրում է նա վերև հիշված զեկուցագրում,— կարդացին, ոխչ միաբերան

ասում ան թէ, մեր թագաւորին ծառայ անք» (այսինքն՝ թագավորին հպատակ ենք)։

Այս վավերագիրը պատմական մեծ արժէք ունի։ Ենդիրը նրանումն է, որ անցյալում Սյունիքի ազատագրական շարժումը կտրրված, մեկուսացված ձևով էր ներկայացվում Ղարաբաղի և Հայաստանի մյուս շրջանների ազատագրական շարժումներից։ Մեզ հայտնի չէին նաև Պետրոս Մեծի հրովարտակը բերելու և այլ փաստեր, որոնք հայտնի են դարձել այժմ։

Նորահայտ վավերագրերը լուսաբանում են մինչև այժմ մութ բազմաթիվ հարցեր։ Այսպես, մեր պատմագիրներից ոչ ոք չի հետաքրքրվել այն հարցով, թե Դավիթ-բեկի զորքը ո՞րտեղից էր ստանում իր հրազենը։ Ռուսական հրամանատարության թավրիզից ստացած մի հաղորդագրությունից երևում է, որ սյունեցիներն իրենց հրազենը ստանալիս են եղել Թավրիզից, և մի անգամ, 30 սյունեցի, Թավրիզից արճիճ և վառոդ տանելիս, բռնվել են պարսիկ իշխանության կողմից և պատժվել։

Իվան-Կարապետի ռուսական արքունիք ուղարկած հայատառ ռուսերեն զեկուցագրերից մեկի մեջ արժեքավոր տեղեկություն է պահվել Դավիթ-բեկի 1725 թվականին Սյունիք արշավող թյուրքական բանակի դեմ տարած հաղթանակի մասին։ Այդ տեղեկությունը, ծածկագրելու նպատակով, գրված է հայատառ ռուսերեն։ Այնտեղ հետևյալն է ասված. կարդում ենք տեքստի հայերեն թարգմանությունը. «Դավիթ-բեկն... այժմ ապրում է Ղափանի երկրում, այնտեղի հայերին հավաքել է իր շուրջը։ Թյուրքերը հարձակվել են. Դավիթ-բեկը ճակատամարտ է տվել և նրանցից շատ մարդկանց կոտորելու։ Ի դեպ, նոր տրվյալները գալիս են լիովին հաստատելու պատմական այն տեղեկությունները, որը հաղորդել է Դավիթ-բեկի անանուն պատմիչը, որի հավաստիության շուրջ անտեղի կասկածանքներ են եղել հայագիտության մեջ։

Սյունիքի ազատագրական շարժումների մասին արժեքավոր է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» № 9-ում տպագրված մի վավերագիր, որը Սյունիքի ռազմական ղեկավար շրջանի 1726 թվականին գրած դիմումն է ռուսական արքունիքին՝ օգնություն ուղարկելու մասին։ Այդ դիմումի տակ ստորագրել են Սյունիքում գործող բոլոր այրի ընկնող ռազմական ղեկավարները։ Բացակայում է Դավիթ-բեկի ստորագրությունը։ Վավերագրի հրատարակիչը՝ դոկտ. Պ. Հարությունյանը, Դավիթ-բեկի ստորագրության բացակայության հիման վրա եզրակացրել է, որ իբր թե Դավիթ-բեկը մինչ այդ մահացել էր։ Նրա կարծիքով, անախրոնիզմ գոյություն ունի նաև Մխիթար սպարապետի մահվան տարեթվի մեջ—նա մահացել է ոչ թե 1730 թվականին, այլ՝ 1728 թվականին։ Դոկտ. Պ. Հարությունյանի այս եզրակացության դեմ համոզեցուցիչ փաստերով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Ա. Միրզոյանը «Տեղեկագրի» հաջորդ համարներից մեկում և մերժեց այդ անհիմն եզրակացությունը։

Եվ, վերջապես, Դավիթ-բեկի անձնավորությանը վերաբերող նորահայտ վավերագրերից արժեքավոր է նրա թոռան՝ փոխ-գնդապետ Ստեփանոս Դավուդովի համար Գրիգորիոպոլսի մագիստրատի կազմած տեղեկանքը՝ նրան ազնվականական կոչում շնորհելու մասին։ Գրիգորիոպոլսի մագիստրատը այդ տեղեկանքում հաստատում է այն մասին, թե ովքեր են եղել փոխ-գնդապետ Դավուդովի նախնիքները։ Վավերագրից պարզվում է հետևյալը. ա) Դավիթ-բեկը ծագումով ո՞չ թե սյունեցի է, ինչպես կարծում էինք, այլ՝ բայազետցի՝ Գեղարքունիքի Ծմակ կոչվող շրջանից։ բ) Սխալ է այն կարծիքը, թե Դավիթ-բեկը ամուսնացած չի եղել (այդպես ենթադրել են Բաֆֆին իր «Դավիթ-բեկ» վեպի մեջ, ազգագրագետ Ե. Լալայանը՝ «Ազգագրական հանդեսում» հրատարակած հոդվածում և ուրիշները). պարզվում է, որ Դավիթ-բեկը ամուսնացած է եղել և ունեցել է Մխիթար անունով մի որդի, որն սկզբում զինվորական է եղել, կռվել թյուրքերի դեմ, իսկ հետագայում հոգևոր կոչում է ընդունել և քահանա ձեռնադրվել։ գ) Դավիթ-բեկի որդին՝ Մխիթարը, ունեցել է երկու որդի, որոնցից մեծը՝ Գրիգորիոպոլսի մագիստրատի կողմից ազնվականական կոչման ներկայացրած փոխ-գնդապետ Ստեփանոսն է, իսկ կրտսերը՝ Էջմիածնի միաբանության անդամ Իսահակ եպիսկոպոսը։

Դավիթ-բեկի անձնավորությանը վերաբերող այս վավերագիրը հրատարակված է մեր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության հավելվածում, նորահայտ վավերագրերի շարքում։

***

Նորահայտ վավերագրերի մի մեծ խումբը վերաբերում է 1725—1729 թվականների Ղարաբաղի հերոսամարտերին։ 1725 թվականին, ինչպես հայտնի է, թյուրքական հրամանատարությունը, Գանձակը գրավելուց հետո, հարձակում սկսեց Ղարաբաղի վրա՝ նպատակ ունենալով հնազանդեցնել լեռնային այդ խիզախ ժողովրդին և դուրս գալ Կասպից ծով։ Ղարաբաղցիները անօրինակ հերոսությամբ դիմադրեցին թյուրքական բանակներին։ Անհավասար այդ մարտերը զարմացրել էին նույնիսկ Կասպից ծովի ափերը

հաստատված ռուսական հրամանատարությանն այն աստիճան, որ գեներալ Դոլգորուկովն իր արքունիք ուղարկած զեկուցագրերից մեկում իր զարմանքն է հայտնել զարարաղցիների անօրինակ քաջագործության համար։ Նա իր զեկուցագում գրել է. «Միայն Աստված է պահպանում հայերին, թե չէ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թէ ինչպես են մինչև այժմ նրանք դիմանում այդքան զորեղ թշնամու առաջ։

Վավերագրերից երևում է, որ 1725—1729 թվականների այդ հերոսամարտերի ընթացքում լինում են ծանր րոպեներ, երբ հայերը հարկադրված են լինում նահանջել, բայց երբեք նրանք չեն հուսահատվում և զենքը գետին չեն դնում։ Հայտնի է, որ 1725 թվականի գարնանը թյուրքական բանակը հանկարծակի հարձակումով մխրճվում է երկրի ներսը և դժվարացնում ճակատային պաշտպանությունը։ Ղարաբաղի կռվող զինվորականությունը տեսնելով, որ անհնար է դիմադրությունը, կեղծ հպատակություն է ցույց տալիս, ընդունում է թյուրքական բանակին, բաժանում գյուղերի վրա և կես գիշերին կոտորում բոլորին, այդ թվում նաև դեկավար երկու փաշային, իսկ մեկին կենդանի թողնելով, զեկուցագրի հետ միասին ուղարկում ռուսական հրամանատարություն։ Ղարաբաղցիները Պետրոս Մեծին ուղարկած իրենց այդ զեկուցագրում, որը հրատարակել է պրոֆ. Եղյանը, լակոնական ոճով գրել են հետևյալը. «Այժմս, որ մեր թվականս ՌՃՀԳ է (1725 թ.), մարտի ամսոյ մէկումն, ԴՌԷՃ (4. 700) հեծեալ սայ զօշուն եկին մեզ վերայ, երեք փաշայ էր՝ Շահին, Սալահ և Ալի անուն։ Մեք էլ տեսանք, որ զատէն կռվելով չի լինել, յառաջ գնացինք, զօնաղ արինք, մեր գեղերանց վերայ բաժանեցինք, որն երկու հարիւրով, երեք հարիւրով, չորս հարիւրով, հինգ հարիւրով, տեղն ու տեղ կոտորեցինք, երկու փաշան ևս սպանեցինք, Սալահ փաշան ողջ պահած ունիմք։ Ապա մէկ հարիւր յիսուն մարդ փախան բրծան։ Երկու հարիւրէ աւելի քրիստոնեայ եսիր կալար, ազատեցինք։

Նորահայտ մի վավերագրից երևում է, որ նույն թվականի վերջերին թյուրքական հրամանատարությունը պատվիրակություն է ուղարկել զարարաղցիների մոտ և առաջարկել նրանց հնազանդվել և վճարել հինգ տարվա հարկը։ Քաջարի զարարաղցիները պատասխանել են. «Մենք դրամ չունենք, մեր ունեցածը մեկական հրացան է և սուր, եթե կամենում եք գալ, հրամեցե՛ք, մենք պատրաստ ենք, Աստուծու օգնությամբ, ձեզ դիմավորելու։

Ղարաբաղի այս հերոսամարտի մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնել ռուսական արքունիքին ռուսական բանակի գեներալ Լևաշովը իր 1726 թվականի օգոստոսի 1-ի ծածկագիր զեկուցագրում։ «Թյուրքերը մեծ դժվարությամբ,— գրում է նա,— բազմաթիվ անգամներ, հայերի վրա են գնացել, բայց ամեն անգամ մարտերում պարտվել են. մինչև այժմ հայերը թյուրքերին դիմադրում են։ Թյուրքերը բազմաթիվ անգամներ գնացել են նաև մուղանցիների վրա (խոսքը վերաբերում է Մուղանի Շահսեան կոչվող ադրբեջանական քոչվորներին), բայց չեն կարողացել տիրել նրանց։

Ղարաբաղի այս հերոսամարտերի ընթացքում, զարարաղցիներին համախմբելու և զեկավարելու գործում, առանձնապես աչքի են ընդունում Գանձասարի Եսայի կաթողիկոսը, Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը և Ավան յուզբաշին։

***

Դասախոսության վերջում ես ցանկանում եմ նորից վերադառնալ Հայրենիքի գիտնականների հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության վերաբերյալ կատարած հայտնագործությունների արժեքավորմանը։

Մեր գիտնականների հայտնաբերած նոր տվյալները, ամենից առաջ, լրացնում են հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության բաց էջերը և նորից փաստում այն իրողությունը, որ հայ ժողովուրդը 18-րդ դարում հերոսական դոյամարտի էր դուրս եկել օտարերկրյա նվաճողների դեմ և պայքարում էր հանուն իրեն ազատության և քաղաքական անկախության։

Այնուհետև, պատմական նոր տվյալները հաստատում են Անդրկովկասի մեր երեք բախտակից և բարեկամ ժողովուրդների՝ հայերի, ադրբեջանցիների և վրացիների միջև գոյություն ունեցող սերտ համագործակցությունը ընդդեմ ընդհանուր թշնամու՝ օտարերկրյա հարստահարիչների։

Եվ, վերջապես հայտնաբերված նոր փաստերը անվիճելի ապացուցում են, որ հայ ժողովուրդը 18-րդ դարում, որոշակի, իր հայացքն ուղղել էր դեպի հյուսիս, դեպի Ռուսաստան և այնտեղից էր ակնկալում իր փրկության հույսը։

Գուցե ո՛չ մի ժողովուրդ իր անցյալի պատմության մեջ այնքան չի փնտրել հավատարիմ բարեկամի, անշահախնդիր հովանավորողի, որքան հայ ժողովուրդը։ Նա շատ է փնտրել, որովհետև դրա կարիքն ավելի է զգացել քան ուրիշ մեկը։ Գտնվելով Արևելքի և Արևմուտքի խաչաձև քառուղու վրա, Հայաստանը հաճախ է ենթարկվել նվաճողական հարձակումների։ Ծանր իրադրության մեջ, սրտացավ բարեկամ գտնելու հույսով,

մեր միամիտ պապերը հաճախ են դիմել քրիստոնյա Արևմուտքին. նրանք դիմել են հույսով, հավատքով, բախել են արևմտյան պետությունների դռները և օգնություն խնդրել նրանցից։ Բայց արևմտաևրոպական երկրները ո՛չ միայն չեն օգնել հայ ժողովրդին, այլև ամենաանխիղճ ձևով շարաշահել են հայկական իրավունքը։ Երկար և անօգուտ որոնումներից հետո հայ քաղաքական շրջանները հիասթափվել են Արևմուտքից և ընտրել ազատագրական ճիշտ ուղի — դիմել են Ռուսաստանին։ Միայն ռուս ազնիվ և վեհանձն ժողովուրդն է, որ օգնության ձեռք է մեկնել մեզ մեր պատմության ծանր, ճակատագրական օրերին։

Ահա քե ինչո՞վ պիտի բացատրել, որ մեր ժողովուրդը, ո՛ւր էլ նա գտնվելիս լինի՝ Մայր Հայրենիքում, քե հեռավոր Հնդկաստանում, արաբական աշխարհում, քե Արևմտյան Եվրոպայում — աշխարհի բոլոր ծայրերում, երախտագիտական խորը զգացմունքով է համակված դեպի ռուս ժողովուրդը, դեպի ազնիվ և վեհանձն այդ մեծ ազգը, որը կյանք, արև է շնորհել հայ ժողովրդին և զարգացման ու բարգավաճման լայն ճանապարհներ բաց արել նրա առջև։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 3-ին, Ծաղկազարդի կիրակի օրը, Մայր Աթոռում արարողությունները կատարվեցին ավանդական շքեղությամբ։

Առավոտյան արարողություններին տաճարը լեփ-լեցուն էր հավատացյալների բազմությամբ։ Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, տոնականորեն զգեստավորված, մասնակցում էր արարողություններին։ Ս. Հռիփսիմեի տաճարը զարդարված էր ուռենու թարմ ճյուղերով։ Ուրախ ու զվարթագին հնչում էին Ծաղկազարդի հայկական հոգեպարար շարականները։ Հավատացյալների խուռն բազմությունը տաճարից դուրս էր գալիս ուռենու թարմ ճյուղերը ձեռքներին։

Ծաղկազարդի հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Հավատացյալների համար կրկնակի ցնծության ուրախալի օր էր այդ օրը. գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը պատարագի պահին կատարեց երկու երիտասարդների քահանայական ձեռնադրությունը։

Նորընծաներից առաջինը՝ Մայր Աթոռի կրտսեր միաբան Տիգրան սարկավագ Մարտիկյանը, ձեռնադրվեց կուսակրոն քահանա, իսկ երկրորդը՝ Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցու տիրացու Ռուբեն Իլխազյանը՝ քահանա։ Տիգրան սարկավագը վերանվանվեց Տ. Տիրայր աբեղա, իսկ տիրացու Ռուբենը՝ Տ. Գրիգոր քահանա։

Ձեռնադրությունից հետո սրբազանը շնորհավորանքի սրտառուչ խոսք ասաց երկու նվիրյալներին։

«Հայր մերից առաջ քարոզեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, նկարագրեց Քրիստոսի Երուսաղեմ մուտքը, վեր հանելով Փրկչի կատարած հեղաշրջող դերը համայն մարդկության հոգեկան և բարոյական կյանքում։

Երեկոյան տեղի ունեցավ հանդիսավոր «Գոնյացէքի նվիրական արարողությունը։ Տաճարում անհնարին էր շարժվել, հավատացյալների մեծ մասը մնացել էր բակում։

Ժամերգության վերջում կատարվեց Տ. Տիրայր նորընծա կուսակրոն քահանայի վեղարի տվչության հուզիչ արարողությունը։ Մայր Աթոռի միաբանությունը, հանձին նորընծա Տ. Տիրայր աբեղայի, իր շարքերն ընդունեց նվիրված և գիտակից մի հոգևորականի։ Միաբանակից ընկերները նորընծային ցանկացան հոգևոր կյանքի նորանոր հաջողություններ՝ իր նոր ասպարեզի սեմին։

***

Ապրիլի 7-ին, Ավագ հինգշաբթի, «Յիշատակ ընթրեցաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Յերեկը տեղի է ունենում հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն է բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը։ Բազմաթիվ հաղորդվողներ կան։ Ավագ շաբաթվա այս նվիրական օրում կրկնապատկվել է հավատացյալների կրոնական ջերմեռանդությունը։ Հաղորդվեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերակացուների և դասախոսների հետ միասին։

Երեկոյան կատարվում է Ոտնալվայի հանդիսավոր կարգը, հանդիսադրությամբ Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի։ Հավատացյալների մի չտեսնված բազմություն լցվել է տաճարի ներսը։ Շրջակա քաղաքներից, գյուղերից Ս. Էջմիածին են եկել հազարավոր ուխտավորներ։ Նորից են հնչում Ոտնալվայի հիասքանչ տաղերն ու երգերը և հանդիսավորապես

կատարվում է սրտառուչ արարողությունը։ Դավական է կանգնել տաճարի դռանը և նայել, թե ինչպիսի՞ երկյուղած հավատով հայ հավատացյալը տանում է օրհնված յուղի մասնիկը, նրա մեջ խտացնելով իր հավատը, իր հոգու ամենանվիրական ջերմեռանդ ապրումները։

Գիշերը տեղի է ունենում հսկում։ Սևերով են ծածկված սեղանները և ամեն ինչ։ Մատնության ահավոր գիշերն է...։ Սարսռազդեցիկ խավարի միջից լսվում են շարականներն ու ավետարանի ընթերցումները։ Մինչև ուշ գիշերը տաճարը չի դատարկվում ջերմեռանդ հավատացյալների բազմությունից։

***

8 ապրիլի, «Յիշատակ շարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Սգավոր տոնով կատարվում է Հիսուսի մատնության, չարչարանաց և խաչելության կարգը։ Նույն սգավոր հանդիսությամբ կատարվում է և թաղման կարգը։ Հնչում են թաղման մելամաղձիկ շարականները։ Երգվում է «Պարգևատուն ամենեցունցը, Ս. Սահակ Պարթևի գրած այդ սքանչելի շարականը։ Տաճարը լիքն է աղոթող հավատացյալների բազմությամբ։

***

9 ապրիլի, Ավագ շաբաթ, Հարության ճրագալույցի երեկոն է։ Դանիելի գրքի հանդիսավոր ընթերցումից հետո բացվում է սեղանի վարագույրը և սկսվում ճրագալույցի երեկոյան հանդիսավոր սուրբ պատարագը։ Պատարագիչն է բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Տաճարով մեկ հնչում է «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»։

Փա՛ռք Տիրոջ հրաշափառ Հարությանը։

Արձակվում է սուրբ պատարագը, բազմությունը դուրս է հորդում եկեղեցուց։ Ամենուրեք լսվում են շնորհավորանքի խոսքեր՝ «Շնորհավոր Ս. Զատիկ», «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»։

***

10 ապրիլի, կիրակի, «Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Ս. Հռիփսիմյանց տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագին երգում էր Մայր Աթոռի քառաձայն երգեցիկ խումբը։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ «Հայր մերոյ առաջ, սրբազան հայրը, շնորհավորելով հավատացյալների Հարության մեծ տոնը, ցանկացավ նրանց հավատի մեջ ավելի զորացում, առողջ կյանք և բարի աշխատանք։

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց», ձեզ և մեզ մեծ ուրախություն, մեծ ավետիս, սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր։

***

Ապրիլի 11-ին, Ս. Զատկի մեռելոց հիշատակի երկուշաբթի օրը, մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագից հետո եկեղեցում, ողջ միաբանության մասնակցությամբ, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

Զատկական տոնակատարությունների առթիվ, Գերագույն Հոգևոր խորհրդի որոշման համաձայն, Մայր Աթոռի միաբան Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը մեկնեց Վրաստանի թեմը, Թբիլիսի։ Տոնակատարությունից հետո (հին տոմարով) հայր սուրբը վերադարձավ Ս. Էջմիածին։

***

Ապրիլի 17-ին, Կրկնազատկին («նոր կիրակէ»), Ս. Հռիփսիմեի տաճարում տեղի ունեցավ հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը։ Սուրբ պատարագից հետո, Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ նվիրված «բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց»։ Քարոզեց Տ. Սահակ եպիսկոպոսը։

Տաճարը լի էր հավատացյալներով։

***

Գերագույն Հոգևոր խորհրդի որոշմամբ, բարձրապատիվ Տ. Կոստանդին վարդապետ Թառլանյանը նշանակվեց Խոր Վիրապի վանքի վանահայր։ Նշանակումից անմիջապես հետո հայր սուրբը մեկնեց իր պաշտոնատեղին։

***

Գերագույն Հոգևոր խորհրդի որոշմամբ, Ս. Գեղարդի վանքի վանահայր Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը ազատվեց նույն վանքի վանահայրությունից և նշանակվեց Էջմիածնի Ս. Հռիփսիմեի վանքի վանահայր։

Ս. Գեղարդի վանքի վանահայր նշանակվեց Մայր Աթոռի միաբան նորընծա Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը, որը ազատվելով Հոգևոր Ճեմարանի վերակացության պաշտոնից, մեկնեց իր նոր պաշտոնատեղին։

❋❋❋

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ ժամանեց Հելսինկի քաղաքի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Խաչիկայնե Տաուռոն։

Հարգելի հյուրը այցելեց Մայր Տաճարը և նրան կից հնագիտական թանգարանը, ուր մանրամասն և հետաքրքիր բացատրություններ լսեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանից։

Հարգելի հյուրը եղավ նաև գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի մոտ։ Հետաքրքիր զրույցի ժամանակ պատվարժան այցելուն հետաքրքրվեց իրեն հուզող մի շարք հարցերով։ Զրույցից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն։

Պատվարժան հյուրը Մայր Աթոռից մեկնեց միանգամայն գոհ և բավարարված՝ իրեն ցույց տրված վերաբերմունքից և հյուրընկալությունից։

ՀՈԳԵՇՆՈՐՀ ՏԻՐՈՅՐ ՍԲԵՂԱՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Տիրայր աբեղա Մարտիկյանը (Տիգրան սարկավագ Մարտիկյան) ծնվել է 1930 թվականի մայիսի 24-ին Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում։ Իր նախնական կրթությունն ստացել է տեղի ազգային Սահակյան և Արգարյան նախակրթարաններում։ Նախնական ուսումն ավարտելուց հետո, 1944 թվականին, նա ընդունվել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանը, որտեղ սովորել է մինչև Հայրենիք վերադառնալը։

1947 թվականին նա եկել է Հայրենիք և իր ծնողների հետ միասին հաստատվել Երևանում։ Նույն տարին ընդունվել է Երևանի Օտար լեզուների ինստիտուտի անգլիական բաժնում և սովորել մի քանի ամիս։ Սակայն, իր ծնողների (Տիգրանի և Հակոբի) ցանկությունն է եղել, որ իրենց որդին ստանա հոգևոր կրթություն, ուստի և նա թողել է ինստիտուտը, դիմել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որտեղ և ընդունվել է ու սովորել։

1951 թվականին, Հոգևոր Ճեմարանի գ լսարանում եղած ժամանակ, նա ներկայացրել է դիմում հանգուցյալ Վեհափառ Հայրապետին, խնդրելով շնորհել իրեն սարկավագի հոգևոր կոչում. իր այդ դիմումի մեջ նա գրել է Վեհափառին. «Ձերդ Վեհափառություն լավագույն օրինակը, որպես հայրենասեր, եկեղեցասեր և ժողովրդանվեր անձնավորություն, և իմ ուսումնական տարիների ընթացքում Ձեր կողմից ինձ արված այդօրինակ դաստիարակությունը իմ մեջ արթնացրին նվիրաբերման անկեղծ զգացմունքներ։ Նրանք ինձ թելադրում են մտնել հոգևոր ասպարեզ։ Ուստի, Վեհափառ Տէ՛ր, խնդրում եմ ընդունեք և շնորհեք ինձ հոգևոր կոչում։ Վեհափառը հարգել է նրա դիմումը. 1951 թվականի նոյեմբերի 1-ին, հինգշաբթի օրը, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը կատարել է ձեռնադրությունը։

1952 թվականին նա ավարտել է Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը բացարձակ գերազանցիկ, որից հետո երջանկահիշատակ Հայրապետը նշանակել է նրան Հոգևոր Ճեմարանի քարտուղար։

1955 թվականին Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշում է ընդունել Տիգրան սարկավագին ձեռնադրել աբեղա։

Ձեռնադրությունը տեղի ունեցավ ապրիլի 4-ին, Մաղդաղարդի օրը, Ս. Հռիփսիմեի վանքում, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի ձեռքով, և Տիգրան սարկավագը վերանվանվեց Տիրայր աբեղա։

Ձեռնադրությունից հետո, Գերագույն Հոգևոր Խորհուրդը Տիրայր աբեղային պաշտոնի նշանակեց Ադրբեջանի թեմում և գործուղեց Բաքու։

ԿՅԱՆՔԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՀԻՆԳ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ՍՏԱՑԱՆ ՈՒՐԱԲԱԿԻՐ ԴՊՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Ընդառաջելով Հոգևոր Ճեմարանի վերատեսչության առաջարկին, Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը արտոնեց ուրբաթակիր դպրության աստիճան շնորհել Հոգևոր Ճեմարանի Բ դասարանի ուսանողներ Հովհաննես Դանիելյանին (Թբիլիսիից—Վրացական ՍՍՌ), Սանդրո Բեհբուդյանին (Նուխուից— Ադրբեջանական ՍՍՌ), Գեղամ Տալյանին (ներգաղթած Հալեպից—Սիրիա), Կարապետ Բենլիյանին (ներգաղթած Բեյրութից—Լիբանան) և Գառնիկ Ծառուկյանին (ներգաղթած Հունաստանից)։

Տվյալությունը տեղի ունեցավ Ս. Հռիփսիմեի վանքում, ապրիլի 2-ին զուգադիպող Ղազարոսի Հարության շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, ձեռամբ Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, ի ներկայության բազմաթիվ հավատացյալների։

ՁԱՏԿԻ (ԳԱՐՆԱՆԱՅԻՆ) ԱՐՁԱԿՈՒՐԴ

Հոգևոր Ճեմարանի ուսանողները սրտեռանդն մասնակցեցին ամբողջ Ավագ շաբաթվա և Քրիստոսի Հարության տոնական արարողություններին և իրենց հոգևոր պարտականությունները կատարելուց հետո, Զատկի առթիվ, մի շաբաթ արձակուրդ ստացան դնալու իրենց ծնողների մոտ։

Ապրիլի 18-ին, արձակուրդից վերադառնալով, ուսանողները եռանդով լծվեցին իրենց ուսումնական աշխատանքին։

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՕՐԸ—ԱՊՐԻԼԻ 24-Ը

Հոգևոր Ճեմարանի ուսանողները նշեցին Հայ մարտիրոսագրության սգաորիթ թվականը՝ Ապրիլի 24-ը։

Վերատեսուչը ուսանողության բացատրեց օրվա խորհուրդը և եղրափակելով հայկական նահատակության տխուր պատկերագրությու-

նը, ասաց. «Ավերակ և ամայի է այժմ Արևմտյան Հայաստանը, բայց շեն է, ապրում, ծաղկում, բարգավաճում է Արևելյան Հայաստանը, ամբողջ Հայության Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը՝ շնորհիվ մեծահզոր Սովետական Միության։ Կեցցե՛ սովետական բազմազգ ժողովուրդների սրբազան և անխորտակելի բարեկամությունը»։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎ (ԷՔՍԿՈՒՐՍԻԱ)

Ապրիլի 26-ին, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, ղեկավարությամբ վերատեսուչ Մարտիրոս Տեր-Ստեփանյանի, պատմության դասախոս Արթուն Հատիտյանի և վերակացու Արմենակ Տերտերյանի, արշավ կատարեցին դեպի Կարմիր բլուր, ուր նրանք ծանոթացան ուրարտական հնագույն քաղաքակրթության բեկորներին։ Ապա շարունակելով արշավը, վանքի ավտոմեքենան ուսանողներին տարավ Արտաշատի ճանապարհով դեպի Արարատյան դաշտը, որտեղ հայրենի զմայլելի գարունը իր գեղեցկագույն պաճուճանքովն էր փռվել, ծաղիկների բույրովն օծուն։

Արարատյան դաշտից Երևան վերադարձող ուսանողները սրտագին պարտականություն համարեցին այցելել նաև Հայկական պանթեոնը։

Ստալինի անվան ընդարձակ, ստվերախիտ և հիանալի զբոսայգու մի խորհրդավոր անկյունում են գետեղված հայ անմահներից ոմանց շիրիմները։ Ահա մեծ թատերագիր Շիրվանզադեն, դերասանապետ Հովհաննես Արելյանը, առակագիր Խնկո Ապերը, պատմաբան Լեոն, երաժշտագետ Ռոմանոս և Սպիրիդոն Մելիքյանները, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, և մանավանդ անմոռանալի Կոմիտաս վարդապետը։

Հայկական պանթեոնից հետո ուսանողներն առաջնորդվեցին Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, որտեղ Համիկ Գևորգյանը մանրամասն բացատրություններ



Հոգևոր Ճեմարանի մի խումբ ուսանողներ իրենց վերատեսչի հետ Կոմիտասի շիրմի մոտ

տվեց մեծահամբավ բանաստեղծի գրական ու հասարակական օրինակելի կյանքի մասին։ Ուսանողներն անմոռանալի տպավորության ներքո բաժանվեցին սիրելի բանաստեղծի տուն-թանգարանից։

Հիասքանչ տեսարան ունի Հրազդանի հովիտը։ Ահա Հայրենական պատերազմի հերոսների աղբյուր-հուշարձանների շարքը, Մանկական երկաթուղու գեղակերտ կայարանը, դրախտանման զբոսայգին, ջրառատ ջրանցքները, բարաժը, Երևանգէսը, հանդիպակաց Միծեռնակաբերդը և մանավանգ բարձրակառույց կամուրջը, որի տակից ահեղամռունչ հոսում է վարարուն Զանգուն, ճեմարանի ավտոմեքենան սահում է ասֆալտապատ ճանապարհով, ուսանողները ակնատես են լինում հայրենի բնության հրաշալիքներին, և վերադառնում են Մայր Աթոռ գոհ ու երջանիկ։

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր ճեմարանի ուսանողները նախապատրաստվում են տարեվերջի քննություններին, որոնք տեղի են ունենալու մայիսի 23-ից սկսած։ Ճեմարանը 1954—1955 ուսումնական տարին փակելու է հունիսի 12-ին, Ս. Էջմիածնի տոնի օրը։

Ըստ հավաստի տեղեկությունների, կարգադրություններ են արվում առաջիկա 1955—1956 ուսումնական տարեշրջանի համար նոր ուսանողներ ընդունելու մասին։ Ուսանողներ պիտի ընդունվեն ոչ միայն Մայր Երկրի, այլ նաև արտասահմանի արժանավոր թեկնածուներից։

ՃԵՄԱՐԱՆԱՍԵՐ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՍԵՍԻԱՆ.— Ապրիլի 5—6-ին Երևանում տեղի ունեցավ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության չորրորդ գումարման Գերագույն Սովետի առաջին սեսիան։

Սեսիան քննարկեց և հաստատեց Սովետական Հայաստանի 1955 թվականի պետական բյուջեն և 1954 թվականի բյուջեի կատարողականը։

Հանրապետության 1955 թվականի պետական բյուջեն հաստատված է եկամուտների գծով՝ 1.220.350.000 ռուբլի և ծախսերի գծով՝ 1.206.364.000 ռուբլի ընդհանուր գումարով։ Բյուջեի եկամուտների ավելի քան 60 տոկոսը ստացվելու է պետական և կոոպերատիվ ձեռնարկություններից ու կազմակերպություններից։

Ծախսերի համար նախատեսված ընդհանուր գումարից 543.000.000 ռուբլի հատկացված է ժողովրդական տնտեսության հետագա զարգացման կարիքներին, ըստ որում՝ ավելի քան 197.000.000 ռուբլի արդյունաբերության և ավելի քան 120.000.000 ռուբլի՝ գյուղատնտեսության զարգացմանը։ Կոմունալ շինարարության հատկացումները կազմելու են 108.652.000 ռուբլի։

Պետական բյուջեի ծախսերի մեծ մասը, այն է՝ 808.500.000 ռուբլի, հատկացվում է սոցիալ-կուլտուրական միջոցառումներին։ Այդ թվում մոտ 538.000.000 ռուբլի հատկացվում է լուսավորության և կուլտուրայի զարգացմանը, ավելի քան 197.000.000 ռուբլի առողջապահության և 73.296.000 ռուբլի՝ սոցիալական ապահովությանը։

Սեսիան ընտրեց օրենսդրական առաջարկությունների և բյուջետային մշտական հանձնաժողովներ, յուրաքանչյուրը 11 հոգուց բաղկացած, ընտրեց Հայկական ՍՍՌ Գերագույն դատարանի կազմ, հաստատեց Գերագույն Սովետի Նախագահության կողմից ընդունված Հրամանագրերը։

Ընտրվեց նաև Գերագույն Սովետի Նախագահություն բաղկացած 12 հոգուց։ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ ընտրվեց Ե. Մ. Առուշանյանը։ Այնուհետև սեսիան հաստատեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի կազմը։ Մինիստրների Սովետի նախագահ և Արտաքին գործերի մինիստր հաստատվեց Ա. Ե. Քոչինյանը։

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին Հայաստանի աշխատավորները մեծ սիրով նշեցին Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի ծննդյան 85-ամյակը, որը լրացավ անցած թվականի ապրիլի 22-ին։ Այդ նշանակալից տարեթվի առթիվ հանրապետության բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում, խոշոր ձեռնարկություններում և հիմնարկներում տեղի ունեցան հանդիսավոր ժողովներ, դասախոսություններ, կազմակերպվեցին Լենինի կյանքը և գործունեությունը պատկերող ցուցահանդեսներ։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 1955 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ.— Ապրիլի 25-ին կայացավ Երևանի քաղաքային Սովետի հերթական սեսիան, որտեղ քննարկվեց և հաստատվեց մայրաքաղաքի 1955 թվականի բյուջեն։ Ընթացիկ տարվա բյուջեն հաստատված է եկամուտների գծով 177.321.000 և ծախսերի գծով՝ 177.133.000 ռուբլի գումարով։

Ծախսերի համար նախատեսված ընդհանուր գումարից ավելի քան 80.000.000 ռուբլի հատկացվելու է քաղաքային արդյունաբերության զարգացմանը։ Սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար հատկացվում է մոտ 125.000.000 ռուբլի, որից շուրջ 68.000.000 ռուբլի՝ լուսավորության և կուլտուրական կարիքների և ավելի քան 53.000.000 ռուբլի՝ առողջապահության կարիքների համար։

Զգալի միջոցներ են հատկացված քաղաքային շինարարության և բարեկարգման նպատակներին։ Այս տարի քաղաքային Սովետի գծով կառուցվելու և գործադրման են հանձնվելու 10 խոշոր բնակելի շենքեր, ավարտվելու է Հրազդանի երկրորդ մեծ կամուրջի կառուցումը, 4 կիլոմետրով երկարացվելու է տրամ-

վայի գիծը, ընդարձակվելու է կայուղու և ջրմուղի գծերը, ավելացվելու է շուրջ 150.000 քառակուսի մետր տարածություն, կառուցվելու է 2 դպրոց, ավարտվելու է 2 հիվանդանոցային նոր շենքերի կառուցումը։

ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ՏՈՒՆ.— Երևանում, Պուշկինի անվան փողոցում կառուցվում է Երաժշտագետների տուն։ Դա չինելու է քաղաքի խոշորագույն և գեղեցիկ շենքերից մեկը։ Այն կունենա դասեր, դրատարան, ստեղծագործական աշխատանքի համար առանձին սենյակներ, ինչպես նաև 23 առանձին բարեկեցիկ բնակարաններ իրենց բոլոր հարմարություններով։ Այս շենքումն է տեղավորվելու նաև Հայաստանի երաժշտագետների միության վարչությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԸ.— Հայաստանի բուժավայրերում և առողջարաններում նախապատրաստական աշխատանքներ են տարվում ամռան համար։ Նորոգվում և բարեկարգվում են Արզնիի, Դիլիջանի, Կիրովականի առողջարանները։ Ջերմուկում կառուցվում է նոր առողջարան։ Բարեկարգվում են Սևանի, Ծաղկաձորի, Ախտալայի, Ստեփանավանի հանգստյան տները և նրանց շրջակայքը։

Այս տարի ռեսպուբլիկայի առողջարաններում և հանգստյան տներում բուժվելու և իրենց հանգիստն են անցկացնելու ավելի քան 16.000 աշխատավորներ։ Մեծ թվով հիվանդներ և հանգստացողներ են սպասվում Սովետական Միության դաշնության վայրերից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայաստանի պետական պատկերասրահում բացվել է 13-րդ և 14-րդ դարերի հայ ականավոր մանրանկարիչների աշխատանքների ցուցահանդես, որի կազմակերպմանը գործուն մասնակցություն ցույց տվեց նաև Պետական մատենադարանը։

Ինչպես հայտնի է, միջին դարերում դրքի նկարազարդման արվեստը խոշոր տեղ է գրավում նկարչության մեջ։ Հայ մանրանկարիչները այդ բնագավառում ստեղծել են մեծ քանակությամբ արժեքավոր գործեր։

Ցուցահանդեսում ներկայացված են հայկական նկարազարդ ձեռագրերի 117 պատճեններ։ Դրանց թվումն են միջնադարյան հռչակավոր հայ մանրանկարիչներ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Գրիգոր Տաթևացու, Ռստակեսի և ուրիշների գործերը։ Ցուցադրված են նաև 17-րդ դարի ականավոր նկարիչ Հովհաննես Ջուղայեցու գործերը։

Ցուցահանդեսը այցելուների կողմից դիտվում է մեծ հետաքրքրությամբ։

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՋՎԱՐԹՆՈՑՈՒՄ.— Վերջին տարում Ծարտարապետական գործերի վարչության կից Հուշարձանների պահպանության կոմիտեն Ջվարթնոցում կատարում էր պեղումներ։ Աշխատանքները ղեկավարում էր պատմական գիտությունների թեկնածու Հ. Ներսիսյանը։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հին կաթողիկոսարանի պատկանող մի քանի տնտեսական շինություններ, որոնք անցյալում հայտնի չէին։ Տաճարի արևելյան կողմում հայտնաբերվել են ավելի ուշ շրջանի պատկանող շինությունների պատեր։ Բացված է տաճարի ցոկոլի (սանդարամի) որոշ մասը։ Պեղումների ժամանակ գտնվել են մեծ թվով կավե ամանեղեն, էմալով (կիսովածով) պատած մոզաիկայի բեկորներ և այլ զարդեր։

ԼԵՆԻՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Ապրիլի կեսերին Երևան այցելեց Լենինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի էներգետիկների պատվիրակությունը՝ էներգետիկայի մինիստր Բ. Ցաշչուկի գլխավորությամբ։ Հյուրերը մանրամասն ծանոթացան Հայաստանի մի շարք էլեկտրակայանների, ինչպես նաև Երևանի շինարարության հետ։ Մեկնելուց առաջ պատվիրակության ղեկավարը հայտարարեց, որ իրենց ուսանելի շատ բան տեսան Հայաստանի էլեկտրակայանների տեխնիկական շահագործման բնագավառում, որոնք արժանի են ընդօրինակման։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԸ.— Բազմերանգ տուֆից և բազալտ քարից բացի, Հայաստանը հարուստ է նաև այլ տեսակի շինարարական նյութերով։ Դրանց թվում մեծ տեղ է գրավում հրաբխային ապակին կամ պեմզան։ Սովետական Միությունում պեմզայի ամենաշատ հանքավայրերը գտնվում են Հայաստանում, Արագած լեռան ստորոտներում։ Աղացած պեմզան լայն կերպով օգտագործվում է շինարարության մեջ և շատ դեպքերում փոխարինում է ցեմենտին։ Կտոր վիճակում այն օգտագործվում է մետաղի, փայտի, կաշվի հղկման համար։ Բացի այդ, պեմզան օգտագործվում է նաև քիմիական արդյունաբերության մեջ։

Անիի և Պեմզաշենի հանքերը տարեկան տալիս են մի քանի հարյուր հազար տոննա պեմզա, որի խոշոր մասը արտահանվում է ռեսպուբլիկայի սահմաններից դուրս, մի մասը աղացվում և դարձվում է ցեմենտ, իսկ որոշ մասը տրվում է Երևանի և Արզնիի ապակու գործարաններին, որպես հիմնական հումք։

Անսահման են կրաքարի պաշարները։ Կրաքարի հիմնական հանքերը գտնվում են Արարատի (Դավալուի) մոտ, Ջաղուռում և Համամլուում։ Հայաստանում կրաքարը հիմնականում օգտագործվում է ցեմենտի և կարբիդ-կալցիի արտադրության համար, ինչպես նաև այրված վիճակում՝ որպես շինանյութ։

Հայաստանը հարուստ է մարմարով։ Վերջին տարիներին մարմարի արդյունահանումը մեքենայացվել է։ Երևանում գոյություն ունի հատուկ գործարան, որտեղ մարմարից պատրաստվում են զանազան իրեր, շենքերի համար քառակոսի սալեր և սալեր, որոնց մի մասն օգտագործվում է ռեսպուբլիկայի ներսում, իսկ մյուս մասն ուղարկվում է Սովետական Միության տարբեր վայրերը։

Ռեսպուբլիկայի տարբեր վայրերում կան շինարարական կավի հանքավայրեր։ Այդ հանքավայրերը հումք են մատակարարում Երևանի և Կիրովականի ալյումինի գործարանի, Թումանյանի հրակայուն ալյուրի և Երևանի հախճապակու գործարաններին, որոնց արտադրանքը օգտագործվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

ՆՇԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Նուշը մերձարևադարձային տրանքավոր կուլտուրա է։ Հայաստանում, ինչպես երկրի խիստ կլիմային, որոշակի հնարավորություններ կան այդ կուլտուրայի զարգացման համար։

Այդ ուղղությամբ արվում են առաջին քայլերը։ Նրանից ոչ հեռու, Երևանի ամայի հողերում, արա մի քանի տարի է, ինչ ստեղծված է նշենու առաջին պետական տնտեսությունը։ Այն գրավում է 240 հեկտար տարածություն։ Տնտեսության աշխատողները մեծ բանք են քաշում ուսումնասիրելու այդ կուլտուրայի զարգացման հետ կապված հարցերը։ Հատուկ ուսումնասիրության առարկա է նշենու ցրտադիմացկուն, տեղական կլիմայական պայմաններին հարմարեցված տեսակներ ստանալու հարցը։ Տարիների ընթացքում կատարված փորձերի հետևանքով առաջացել են մի քանի տեսակներ, որոնց ավելի ցրտադիմացկուն են։ Դրանց մեջ կան նաև տեղական հայկական տեսակներ, որոնց այս տարի կտան առաջին բերքը։

ԴԵՂՈՐԱՑՔԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.— Երևանի բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների թվում կա մի ուրուշ, հետաքրքիր ձեռնարկություն՝ դեղորայքի գործարանը։ Գործարանը թողարկում է ավելի քան 50 տարբեր տեսակի դեղորայք՝ դանդաղ դեղահատեր, փոշիներ, ամպուլներ և այլն։ Աշխատողների մեծ մասը հայ կանայք են, որոնց ունեն դեղագործի մասնագիտություն։ Գործարանը ղեկավարում է Ռեսպուբլիկայի հնագույն դեղագործներից մեկը՝ Ա. Լազարյանը, որի ծննդյան 70-ամյակը և աշխատանքային գործունեության 50-ամյակը վերջերս նշեցին Հայաստանի առողջապահության բնագավառի աշխատողները։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԹՎԵՐ.— Սովետական Հայաստանի բնակչության կուլտուրական վերելքի հիանալի չափանիշ են հանդիսանում ստորև բերվող հետաքրքիր թվերը։

1921 թվականից մինչև 1955 թվականի հունվարի 1-ը Հայաստանում հրատարակվել է ավելի քան 17.000 անուն գիրք (չհաշված գրքերի ամսագրերը) շուրջ 93.000.000 օրինակ տպաքանակով։ Միայն 1954 թվականին հրատարակվել է 476 անուն գիրք, մոտ 4.000.000 օրինակ ընդհանուր տպաքանակով։

Ռեսպուբլիկայի թատրոնները 1954 թվականին տվել են 2.918 ներկայացում, որոնց մեջ կա մոտ 950.000 հանդիսականներ։ Հայկական ֆիլհարմոնիայի արտիստական խմբերի ուժերով տրվել է 1.867 համերգ։ Մոտ 8.000.000 մարդ հաճախել է կինոթատրոնները։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ.— Անցյալ տարի ռեսպուբլիկայի հիվանդանոցներում եղած մահճակալների թիվն ավելացավ 575-ով։ Մի շարք շրջաններում գործարկվեցին գյուղական 10 նոր հիվանդանոցներ։ Ավելացավ բուժարանների և բժշկական աշխատողների թիվը։

Այս տարի հիվանդանոցներում մահճակալների թիվը կավելանա 600-ով։ Դիլիջանի, Ապարանի, Իջևանի, Արտաշատի, Բասարգեչարի, Նոր-Բայազետի, Հանրապետական, Սևանի, Սիսիանի, Թալինի և Էջմիածնի շրջաններում գործվելու են 11 նոր բուժարաններ և հիվանդանոցներ։ Երևանում կստեղծվի 2 նոր հիվանդանոցների վերակազմակերպում։

Ժողովրդական առողջապահության համար 1955 թվականին ծախսվելու է մոտ 200.000.000 ռուբլի կամ 15.000.000 ռուբլով ավելի, քան 1954 թվականին։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՑ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԸ ԿԱԼԿԱԹԱՑՈՒՄ.— Այս տարվա ապրիլ—մայիս ամիսներում, երբ Երուսաղեմի Տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը գտնվում էր Կալկաթայում, տեղիս հայ կանանց Բարեգործական միությունը, ի պատիվ սրբազան հոր, մասնավոր թեյասեղան էր կազմակերպել Մարգասիրական ճեմարանի սրահում։ Սրբազան հայրը նախ իր գոհունակությունը հայտնեց Բարեգործական միության, իր շինարար և ազգօգուտ գործունեության համար, ապա մանրամասն կերպով խոսեց Երուսաղեմի պատմական վանքի փառավոր գործունեության մասին։ Բարեգործականի նախագահուհի տիկին Սանդուխտ Առաքելյանը կարդաց հետևյալ ճառը.

«Կալկաթայի հայ կանանց Բարեգործական միության կողմից բարի գալուստ եմ մաղթում Ձերդ Սրբազնության և ի սրտե շնորհակալություն հայտնում, որ հակառակ Ձեր այնքան բազմազբաղ հանգամանքին, հանձն եք առել գալ այս հեռավոր ու պատմական գաղութը՝ տեսնելու Ձեր հարազատներին, մեր տարագիր բեկորներին և Ձեր հայրական խոսքն ասելու ու հոգևոր կերպով մխիթարելու Գանգեսի այս հեռավոր ափերին ապրող հայերի սրտերը միշտ էլ տաք ու բաբախուն են եղած դեպի իրենց ազգային սրբությունները, Հայրենիքն ու հոգևոր կենտրոնները։

Սրբազան հա՛յր, ուրախ պիտի լինեք լսելու, որ տեղիս հայ կանանց Բարեգործական միությունը մի քանի տարի է միայն, որ կյանքի է կոչվել։ Այդ կարճ ժամանակամիջոցում միշտ էլ իր բարոյական ու նյութական աջակցությունն է բերել տեղիս կարոտյալներին։ Նկատի ունենալով Ս. Երուսաղեմ վանքի նյութական ծանր կացությունը և առհասարակ մեր հարազատների նեղ պայմանները, միությանս ընդհանուր ժողովն իր վերջին նիստում որոշեց իր սիրահոժար մասնակցությունը բերելու Ձեր ձեռնարկած հանգանակության։

Այժմ բարի եղեք, սրբազան հա՛յր, ընդունելու այս փոքրիկ նվերը (2.000 ռուփի), և երբ Աստուծով վերադառնաք Ձեր Ս. Աթոռը, մեր բոլորիս կարոտի ողջույններն ու բարևները հայտնեք Ս. Հակոբյանց միաբանության և առհասարակ մեր հայրենակիցներին ու հարազատներին»։

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՈՐԾԻ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ.— Այս տարի ևս նոյեմբերին մեծ շուքով տեղի ունեցավ Մարգասիրական ճեմարանի բակում հայ կանանց Բարեգործական միության տարեկան ձեռագործի վաճառման հանդեսը, բարոյական ու նյութական մեծ հաջողությամբ։

Այս տարվա ձեռագործների բազմազանությունը իրենց նուրբ ճաշակով՝ բոլորի ուշադրության և հիացմունքի առարկա դարձավ։ Կերուխումի հատկացրած վրանները, իրենց խնամքով պատրաստած անուշեղենների և տարբեր ազգերի համով ու ախորժելի կերակուրների շնորհիվ՝ իրական վայելք էին պատճառում բոլորին։

Իրենց կազմակերպած հանդեսներն ևս նղել են հաջող, ստեղծելով գրավիչ ազգային մթնոլորտ ու տրամադրություն։

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ.— Հոգեկան մեծ հաճույքով ու խանդավառ ուրախությամբ տեղեկանում ենք, որ պարոն Մար-

գար Մարգարյանը Հայոց Մարդասիրական ճեմարանի այժմյան հնագարյան և անհարմար շենքը ալքի առաջ ունենալով՝ սիրահոժար կերպով հանձն է առել իր և տիկնոջ կողմից նվիրելու 100.000 ռուբի՝ արդիական ամեն դյուրություններով օժտված մի նոր դպրոցական շենք կառուցելու օգտին։

Մեր ճեմարանի նախկին աշակերտի այդ ազնվագույն նվիրատվությունը արժանի է իսկապես բոլոր գաղութի սրտագին հարգանքին ու երախտագիտության։

Երկար տարիներից հետո, այս առաջին անգամն է, որ մեր գաղութում մեկը՝ դեռ գործի ու կյանքի ասպարեզում պետք եղած կերպով չհաստատված ու հարստացած, սրտաբուխ ու ինքնաբերաբար մի այդպիսի խոշոր գումար է տրամադրում հայ մատաղ սերնդի դաստիարակության վեհ գործի համար։

Սիրում ենք հավատալ, որ պարոն Մարգարյանի այս գնահատելի օրինակը խրախուսանքի աղբյուր է հանդիսանալու իրենից ավելի տարիքավոր, գործով ու նյութապես բարգավաճ վիճակում գտնվող հայրենակիցներին՝ օր առաջ կատարելու իրենց սրբազան պարտականությունը հայ ազգի ու նոր սերնդի վերելքի ու հարատևության համար։

ԴԵԼԻԻ ԶԵՌԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ.— Այս տարի Հնդկաստանի մայրաքաղաք Դելիում տեղի ունեցավ ձեռագործների միջազգային ցուցահանդես։

Կալկաթայից մի քանի հայ կանայք իրենց ձեռագործներով մասնակցեցին այդ հանդեսին։ Առաջին նվերը շահեց տիկին Մերջան Մարգարյանը, երկրորդը՝ տիկին Մերի Ավետումյանը, իսկ քաջալերության ընծան՝ տիկին Աննա Խաչատրյանը։ Հիշյալ տիկինը շահել է նաև Բարեգործական միության ցուցահանդեսի առաջին ընծան, իսկ տիկին Սանդուխտ Առաքելյանը՝ երկրորդը։

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՀՈԿԻԻ ԽՄԲԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ.— Կալկաթայի մարզական ակումբի հոկիի խումբը այս տարի մի շարք մրցումների մեջ պատուությունն մատնելով տեղական ուժեղ խմբերին՝ շահեց Lagden Memorial Shield-ը։ Առաջին անգամն է, որ հոկիում այդպիսի մի նշանավոր հաղթանակ են ունենում։

«ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ.— Խանդավառող երևույթ մըն էր կալկաթահայ գաղութի համար 29 դեկտեմբեր 1954-ի երեկույթը, նվիրված անմահ Շիրվանզադեի «Պատվի համարն» պիեսի ներկայացման, Հայկազյան արվեստասիրաց միության կողմե։

Նպատակը զայն ձեռնարկողներուն՝ պետք է եղած ըլլա հայ թատրոնը սիրելի ընծայել հայ ունկնդիրներուն և ծանոթացնել հայ մշակույթը անոնց, որոնք դժբախտությունը ունին օտար մշակույթներու տեսական համազարկին տակ ըլլալու։ Քաջալերել որևէ այսպիսի ձեռնարկ, հոգեկան դոհունակության հետ ունի նաև ազգապահպան տեսակետեն ամենախոշոր արժեք։

Ինչ որ ընծայվեցավ բեմեն մեզի, բավական հաջող և արվեստի առաքինություններով օժտված պատկեր մըն էր։ Դերասանները, որոնք սիրողներ էին անշուշտ և ընտրված փոքրաթիվ գաղութի քիչ ընտրելիներու մեջեն, կթվեին թափանցած ըլլալ իրենց ներկայացուցած տիպարներու նկարագրին և դրամայի ոգիին և կփոխադրեին ականջ հաջող կերպադրությամբ՝ ունկընդիրներու հոգեկան ընկալչության։ Այդ կրացատրե 3 ժամվան եթե ոչ հեիհև, գեթ լուրջ և լարված հետաքրքրությունը ժողովուրդին։ Անմիջական կյանքեն առնված դրաման կուգար իր խորհուրդը բանալ բոլորին։ Շիրվանզադեի տիպարները, կյանքի ակոսներուն վրա, խղճմտանքի հերկերուն մեջեն, հոգեբանական արագ, բայց ճշմարիտ վերլուծումներու ներքև, աստվածային շունչ կառնեին՝ վերակենդանանալու և օրվան հանձնվելու համար նորեն։

Թատրոնը, իբրև դաստիարակիչ գործոն, մասնավոր դեր ունի մարդուն կյանքի հասկացողության և նպատակամիտության աշխատանքին մեջ։ Իբր այդ լավագույն ընտրված պիես մը կներկայանա «Պատվի համարը», ուր ճշմարիտ, բարի և ազնիվ զգացումներու կհակադրվին մարդուն ամենօրյա ճղճիմ, անարդար, անազնիվ հաշիվները, որոնք պիտի շինեն միշտ կյանքին ողբերգությունը։

Դերասանությունը տարբեր կյանքի մը ապրումներուն մեջ մտնելու և զայն հարազատորեն վերբերելու շնորհն է անհատին մեջ, ուրեմն արվեստ մը ինքնին։ Այդ շնորհը, առավել կամ նվազ չափով, ո՛չ մեկ դերասանին պակսեցավ այդ օր։ Խաղարկությունը ոմանց քով առավ բնական և հաճելի այն ձևը, որ բեմը կյանքի կկոչե իսկույն և ունկնդիրը հաղորդ կընե դրամայի ընդհանուր ոգիին։

Ինչ որ մասնավորապես նկատելի էր ամբողջ թատրեգրության ընթացքին, հայ լեզվի տիրականության պակասն էր կարգ մը դերակատարներու մոտ։ Բայց ամեն ճիգ գնահատելի է, եթե ան ըլլա դեպի կատարյալը ձգտելու սկզբնավորություն։ Կսիրենք հուսալ, որ հետագա ընծայումները ըլլան ավելի վարժ և վճիտ հայերենով, որ ունկընդիրը ո՛չ միայն ավելի դյուրահաղորդ պիտի դարձնե հայ մշակույթի գեղեցկու-

թյուններուն, այլ նաև զայն պիտի լիացնեն մեր լեզվի քաղցրություններով։

Մեծ զոհողությամբ և աշխատանքով արդյունավորված այս ձեռնարկը իրրև հաջողություն և նպատակ, արժանի է բոլորի լուրջ քաջալերանքին և գնահատության։

(Կալկաթա, «նոր ալբարաք», № 14—16, 1954 թ.)

ՄԱՆՈՒՇՅԱՆ ԽՈՒՄԲԻ ԱՆՈՒՆՈՎ ՓՈՂՈՑԻ ՄԸ ԲԱՑՈՒՄԸ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Փարիզի 20-րդ թաղամասին մեջ, անցած կիրակի, բացման արարողությունը տեղի ունեցավ փողոցի մը, որ թաղապետական խորհուրդին որոշումով կոչվեցավ «Գրուպ Մանուշյան» փողոց, նախապես «էմբաս Ֆլյորիա»։

Արարողության ներկա էին ֆրանսական կուսակցությանց ներկայացուցիչներ, քաղաքական անձնավորություններ, օտար դիվանագիտական մարմնի անդամներ։

Առողջապահության նախարար և քաղաքապետ բժիշկ Բեռնար Լաֆեի ճառեն հետո խոսք առավ պարոն Ժյուատեն Գոտառ, Օտար տարագիրներու պաշտպանության կոմիտեի նախագահի հանգամանքով և երկարորեն անդրադառնալե հետո ֆրանսական օտարներու գործունեության՝ գերմանական գրաման դեմ, ֆրանսացի հայրենասերներու հետ ձեռք-ձեռքի, արդարություն պահանջեց նախկին ռեզիստաններ Ա. Կոստանդինյանի և Մ. Մավիյանի համար, որոնք դատապարտված կմնան բանտարկյալ ընակության մեկը՝ Իրենոբլի, մյուսը՝ Կլերմոն Ֆերանի մեջ։

Պարոն Ժյուատեն Գոտառեն հետո խոսք առին նախկին մարտիկներու և ռեզիստաններու միության ներկայացուցիչներ։

(Թեյրուք, «ԱՐԱՐԱՏ» օրաթերթ, 27 մարտի 1955 թ.)

ՀԱՅԵՐԸ ՄԱՐՍԵԼԻ ՄԵՋ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԸ

Մարսել և շրջակայքը, որ այժմ իր մեջ կհաշվի շուրջ 30.000 հայություն, ունի իր շաբաթական միօրյա դպրոցները, եկեղեցիները և հանդեսները, որոնք կոգնորեն ու կենդանի կպահեն հայության բեկորները։

Հոս ալ բոլոր եկեղեցիներու մեջ հետ սուրբ պատարագի՝ տեղի կունենան հոգեշմայլ Արևագալի արարողությունները։ Զգալի պարապմություն մըն է բացակայությունը վարդապետ քարոզիչներու, որոնց պակասը կլանան լրացնել մեր համեստ քահանա հայրերը՝ ընթերցումով բարձրաստիճան եկեղեցականներու քարոզագրքերեն՝ օրվան համապատասխան էջերու։

Բոմոնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո հոգաբարձությունը հաջողեցավ այս տարի առաջին անգամ տոնախմբել Վարդանանց հիշատակը իր ընդարձակ և գեղեցիկ սրահին մեջ, մասնակցությամբ Հայ Ավետարանական Եկեղեցիին և համարիքին։

Սեն Լուի արվարձանը, ուր ունինք Ս. Գեվորգ վորավար եկեղեցին, վերջերս Ելքովանյան ընտանիքի նվիրատվությամբ օժտվեցավ զանգակատունով մը, բայց թաղը մնացած է առանց հոգևոր հովիվի, Բաբգեն քահանա Ասլանյան վախճանած ըլլալով։ Մարսելի քահանաներ փոխնիփոխ երբեմն կայցելեն։ Եկեղեցվո կից՝ վարժարանի շենքը, ուր ամենորյա մանկապարտեզ է. կուսանին 60 երկսեռ փոքրիկներ։

Սեն Ժերոմ արվարձանը, ուր ունինք Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, ան ալ անցյալ տարի օժտվեցավ, հոգաբարձության ջանքերով, զանգակատունով և կոշնակով։ Իսկ այժմ ձեռնարկված է կարգ մը նորոգությանց և ներկումին։ Հոգևոր հովիվն է Տ. Սահակ քահանա Շամլյան։ Ունի դպրոցի ընդարձակ սրահ մը, որ նույն ատեն կծառայե թաղային համախոմբ ձեռնարկներու։ Հինգշաբթի և շաբաթ օրերը կուսանին 80 երկսեռ աշակերտներ։

Սենտ Անտուան-Գամբաներ Պերիե արվարձանին մեջ ունինք Ս. Թադեոս առաքյալ եկեղեցին, որուն հոգևոր հովիվն է սսեցի Տ. Ներսես քահանա Կատարինյան։ Անցյալ տարի եկեղեցին ընդարձակվեցավ և օժտվեցավ վերնատունով ու զանգակատունով, որուն կոշնակը ամեն օր կհնչե՝ թաղեցի հայերը գիտակցության հրավիրելով համայնակուլ օտարության մեջ։

Նույն կենսունակությունը և նույն խանդավառությունը Սեն Լուի, Սենտ Մարգրիտ, Գամբաներ Ֆրեշ արվարձանները, նույնիսկ քիչ մը ավելի հեռու՝ Գարդան, Տուլոն, Լա Սիոտա գյուղաքաղաքները և քիչ մը ավելի հեռու՝ Նիս, ուր նոր եռուզեռ կտիրե շնորհիվ Ս. Աստվածածնի նորընտիր հոգաբարձության և իր կոչումին գիտակ ու նվիրյալ հոգևոր հովիվ Տ. Ատոմին։

(Թեյրուք, «ԱՐԱՐԱՏ» օրաթերթ, 30 մարտի 1955 թ.)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՕԹՈՒՄՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ ՇԱՐԺԱՆԿԱՐՎԱԾ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նյու-Նորք.— Փետրվար 25, ուրբաթ երեկո ժամը 8-ին, տեղի ունեցավ նախացուցադրությունը «Կաթողիկոսի օծումն ու թաղումը» շարժանկարին։ Կհուսամ, որ մոտ ատենեն ամբողջ ամերիկահայությունը պատեհություն պիտի ունենա դայն դիտելու։

Ֆիլմը շարժանկարային փաստանկարն է այն մեծ դեպքին, որ սուրով համակեց հայությունը ի սփյուռս աշխարհի։ Սովետական Հայաստանի կինոյի վարչությունը պատրաստած է այս ֆիլմը, որպեսզի գաղութները ևս կարենան հոգևին մասնակից դառնալ այն մեծ հարգանքին, զոր Հայաստանի կառավարությունն ու ժողովուրդը մատուցանեցին Մեծ Հայրապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Նախ՝ շարժանկարը կսկսի ցուցադրել արտասահմանեն Երևան հասնող հայ և օտար եկեղեցական պատվիրակությունները, որոնց մեջ կարելի է զանազանել Ամերիկայեն Երևան ժամանած ծանոթ եկեղեցական դեմքերը։ Կդիտես Երևանի համայնապատկերին մեկ մասը։ Հարյուրավոր ատոներ Լենինյան հրապարակի և Հաղթանակի կամուրջի վրայով, ծառազարդ ուղիով կսուրան դեպի Ս. Էջմիածին։

Ս. Էջմիածնա բակը խռնված է հազարավոր հավատացյալներով, որոնց ամենուն դեմքին վրա թախիծ և սրտերուն մեջ վիշտ կա։

Ահա Վեհարանեն դուրս կուգա եպիսկոպոսներու, վարդապետներու, քահանաներու և սարկավագներու թափորը, որոնց ուսերուն վրա է ողբացյալ Գեորգ Զ. Հայրապետին դագաղը։

Այժմ Ս. Էջմիածնա մեջ ենք։ Դագաղը կհանգչի սուրբ խորանի առաջ։ Պատարագիչն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ Խադ արքեպիսկոպոսը, որուն կօժանդակեն 12 եպիսկոպոսներ, մեծ թվով վարդապետներ և քահանաներ։

Ս. Տաճարը խռնված է, մեծ մասով օտար հյուրերով, պետական մարդոցմով և հասարակական հայտնի դեմքերով՝ ինչպիսին է մեծ Վարպետ Ավետիք Իսահակյանը։ Պատկերահան մեքենայի աչքը այնքան մոտիկեն դիտած ու նկարած է, որ բոլոր տեսարաններու ամենափոքր մանրամասնությունները կարելի է տեսնել այնպես, ինչպես եթե անձամբ հոն գտնվեիր։ Շարժանկարը դիտելու պարագային այնպես կզգաս, որ դուն ինքդ ալ արդեն հոն ներկա ես։

Եվ ահա դագաղը կրկին ուսամբարձ է։ Այս անգամ Տաճարեն դուրս, Էջմիածնա բակը, ուր կհանգչին իր նախորդները։

Ահա նոր դամբան մը, թարմ ծաղիկներով, Գեորգ Զ. Կաթողիկոսի վերջին հանգրվանը, Աշտարակեցի և Խրիմյան Հայրիկ կաթողիկոսներու դամբարաններուն քով։

Թախիծդ ու վիշտդ կփարատին, հոգիդ կթեթևնա, որովհետև կզգաս, որ անմահներու կողքին անմահ մը ևս ավելցավ։

(Նյու-Յորք, ՎՐԱԲԵՐ օրաթերթ,
7 ապրիլի 1955 թ.)

ԿԱԼԻՖՈՐՆԻՈ ԹԵՄԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ՄԵՋ*

Այս տարվան Կալիֆորնիո թեմին հոգևորականներու համագումարը, եկեղեցասիրաց տիկնանց պատգամավորական ժողովը և երեսփոխանական ժողովը տեղի ունեցան Սան-Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես եկեղեցիին մեջ, մարտ 24, 25, 26 և 27, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը։

Ս. Հովհաննես եկեղեցվո հոգաբարձությունը, եկեղեցասեր տիկնանց միությունը, Առաջնորդարանի օժանդակը, Երիտասարդ տիկնանց միությունը մեղվաչան աշխատանքի լծված էին, մեր հյուրերուն ընդունելության համար։

Ժողովի օրերը տրվեցան ճաշկերույթներ ի պատիվ պատգամավորներու, եկեղեցականներու և կեդրոնական վարչության։

Եկեղեցասեր տիկնանց պատգամավորական ժողովի ատենապետուհին՝ տիկին Նրվարդ Շաղոյան—Ճիվելեկյան և ատենադպրուհին՝ տիկին Մերի Քյուրքճյան ձեռնհասորեն կատարեցին իրենց պաշտոնները։ Որքա՜ն հետաքրքրական և որքա՜ն տպավորիչ էր տեսնել ժողովներուն մասնակցող տիկիններուն խոսակցությունները։ Խոսելու, արտահայտվելու շնորհներով օժտված, սիրալիր և հարգալիր մթնոլորտի մը մեջ, մեր տիկինները ամբողջ օրը ծրագիրներ մշակեցին, որոշումներ անցուցին Կալիֆորնիո մեր թեմին եկեղեցական գործերը ավելի եռանդով առաջ տանելու և արդյունավորելու համար։

* Տպագրվում է որոշ կրճատումներով— ԽՄԲ.։

ժողովին կմասնակցեին Թեմիս բոլոր եկեղեցիներու Տիկնանց միութիւնները։

Երեկոյան ժամը 7-ին փակվեցաւ Տիկնանց համաժողովը՝ նախագահ առաջնորդ հոր օրհնութիւններով։

Դասախոսութիւն.— Երեկոյան Ճաշեն հետո, մեծ բազմութեան մը ներկայութեան, Լոս-Անջելոսի Ս. Հակոբ եկեղեցւոյ հովիվ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյան տվաւ խիստ հետաքրքրական դասախոսութիւն մը։ Հայր սուրբին նիւթն էր «Եկեղեցւոյ հատկանիշները կամ ստորոգելիները, Նիկիական հանգանակը կամ Հավատամքը», որ կարտասանվի ամեն կիրակի պատարագի միջոցին և թվեց այդ հատկանիշները, որոնք են՝«Մի, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցի»։ Դասախոս հայր սուրբը բացատրեց յուրաքանչյուր ստորոգելիի իմաստը և եզրակացուց, թե Հայաստանյայց Եկեղեցին ալ մեկ ճյուղն է Քրիստոսի Մի, Ընդհանրական, Առաքելական Սուրբ Եկեղեցիին, որուն ծառայության մեջ կգտնվինք ամենքս, որ հոս հավաքված ենք մեր համագումարներն ունենալու համար, Հայաստանյայց Եկեղեցւոյ պայծառության համար։

Ներկաները խոր ուշադրությամբ հետևեցան հոգեշնորհ Տիրայր վարդապետի բանախոսության և եղած հարցումներուն, որոնց պատասխանվեցաւ։ Բուռն ծափերով գնահատվեցաւ դասախոսը։

Երեսփոխանական ժողով.— Շաբաթ օրը սկսաւ Երեսփոխանական ժողովը։ Կնախագահեր Թեմիս առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք ծայրագույն վարդապետ Գալուստյան։ Դիվանի ընտրություն կատարվեցաւ և արդյունքը եղաւ՝ պարոն Խորեն Դավիթյան՝ ատենապետ, պարոն Հակոբ Ատրունի՝ ատենադպիր։

Ազգայիններու հետաքրքիր բազմություն մը հավաքված էր եկեղեցին, ներկա ըլլալու և մոտեն հետևելու Երեսփոխանական ժողովի խորհրդակցությանց։ Առաջին անգամն էր, որ Երեսփոխանական ժողովը կգումարվեր Սան-Ֆրանցիսկոյի մեջ և բնականաբար շատերու համար հետաքրքրական էր։

Գիշերվան մինչև ժամը 11 տևող այս Երեսփոխանական ժողովը խաղաղ և սիրալիր մթնոլորտի մը մեջ՝ գրավականն էր, թե այս ժողովը պիտի ըլլար արդյունավոր։ Ներդաշնակություն և փոխադարձ հարգանք, այս էր որ տեսանք ժողովի սկիզբեն մինչև վերջ։ Ժողովին կմասնակցեին Թեմիս բոլոր եկեղեցիները իրենց հովիվներով, բացի Տ. Պետրոս ավագ քահանա Հակոբյանե և Տ. Պսակ քահանա Սարդիսյանե, որոնք տկարության պատճառով կրացակայեին։

Ուրախալի երևույթ մըն էր տեսնել երեսփոխաններու շարքին կին երեսփոխաներ՝ տիկին Մ. Փոլոյան, օրիորդ Ն. Արզարյան՝ Բիտլիսեն և տիկին Ս. Թորոսյան՝ Ֆրեզնոյեն։

Առաջնորդ հայր սուրբը՝ գերաշնորհ Տ. Շնորհք ծայրագույն վարդապետ Գալուստյան, ներկայացուց ժողովին իր տարվան մը աշխատության համարատվությունը, որմէ հետո ներկաները միաձայնությամբ և հոտնկայս իրենց շնորհակալությունը և գնահատությունը հայտնեցին առաջնորդ հոր կատարած գործունեության համար։

Կեդրոնական վարչության ատենապետ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ և փոխ-գանձապահ պարոն Հաճի Քենտիրյան ներկայացուցին Կեդրոնական վարչության բարոյական և նյութական համարատվությունը։ Ներկաներ միաձայնությամբ իրենց գնահատանքը հայտնեցին կատարված աշխատանքներուն և հաջողություններուն համար։

Թեմիս մեջ գտնվող եկեղեցիները,— Լոս-Անջելես, Պեսեդինա, Եդեմ, Բիտլի, Ֆաուլեր, Ֆրեզնո, Սակրամենտո, Օկլենդ և Սան-Ֆրանցիսկո ունեցած են եռանդուն գործունեություն և արդյունավոր շրջան մը։

«Էջ Մի Վայ Օ»-ի նահանգային նախագահը՝ պարոն Կոշկարյան տվաւ իրենց գործունեության միամյա տեղեկագիրը, որը գնահատության արժանացավ։

Օրակարգի բոլոր հարցերը լուծվեցան հանդարտ և սիրալիր մթնոլորտի մը մեջ և տրվեցան որոշումներ, որոնց գործադրումը վստահ ենք թե առաջիկա տարին պիտի դարձնե ավելի արդյունավոր շրջան մը, Կալիֆորնիոյ մեջ Հայ Եկեղեցիի և հայ համայնքներու պայծառացման ու զարգացման տեսակետեն։

Կիրակնօրյա պաշտամունք.— Կիրակի օր տեղի ունեցավ բաց պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարյան, Կապասարկեին արժանապատիվ Տ. Պետրոս քահանա Գասարճյան և Տ. Թաթոյ քահանա։ Ջուլդ թուրմառակիրներն էին Տ. Տիրայր վարդապետ և Տ. Շահե քահանա Սեմերճյան։

Դասին մեջ էին Կալիֆորնիոյ Թեմին առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք ծայրագույն վարդապետ, անակնկալորեն նույն առավոտ քաղաքս ժամանած Անթիլիասի Ճեմարանին տեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյան, արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Գալֆայան և Տ. Ներսես քահանա Օտյան։

Առաջին անգամն էր, որ Սան-Ֆրանցիսկոյի մեջ տեղի կունենար այսքան փառաշուք պատարագ մը։

Դպրաց դասին զմայլելի երգեցողությունները, առաջնորդությամբ դպրապետ բարեշնորհ ավագ սարկավագ Անտոն Ջիրեղյանի

և երգեհոնահար օրիորդ Ալիս Էհրամճյանի, մեծ փայլ մը ավելցուցին տպավորիչ պաշտամունքին։

Ամբողջ եկեղեցին և վերնատունը խուռն բազմություն մը լեցված էր և ոմանք ալ ոտքի վրա երկյուղածությամբ հետևեցան աննախընթաց սուրբ պատարագին։ Հպարտությամբ լեցված էին հայ հավատացյալներուն սիրտերը, իրենց փառավոր եկեղեցիով։

Ըստ հայտարարության՝ պիտի քարոզեր առաջնորդ հայր սուրբը, սակայն օգտվելով գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի ներկայությենեն՝ հրավիրեց, որ սրբազանը խոսի օրվան քարոզը։

Սրբազան հայրը իր քարոզին ընտրած էր՝ ան վերայ Աչոյն և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կանոն։ Խոսեցավ օրվան տոնին մասին, որ Ս. Գրիգոր Լուսավորչի վիրապ մտնելն էր։ Տվավ տոնին պատմականը, շեշտեց Ս. Լուսավորիչ հոր դերը մեր պատմության մեջ և անոր ազդեցությունը հայ ժողովուրդի հոգևոր և մշակութային զարգացման վրա։ «Ս. Գրիգոր Լուսավորչի Աչը հայ ժողովուրդի և Հայաստանյայց Եկեղեցվո միասնականության գաղափարը կխորհրդանշե։ Անիկա հայուն հավատքին, հույսին, անսասանության գերագույն դրավականն է, մեր գոյության պատվանդանը և մեր փրկության փարոսը։ Ան իր քարոզը լրացուց սա խոսքերով. «Երեսփոխանական ժողովի այս գումարումին առթիվ և Ս. Գրիգոր Լուսավորիչ հոր տոնին առթիվ, բոլոր երեսփոխաններ և ներկաներ պետք է ուխտեն սիրել Հայաստանյայց Եկեղեցին, մեր ավանդությունները, մեր մշակույթը, հավատարիմ մնալ անոնց և լավագույնս ծառայել անոնց անսասանության համար։

Հոր տպավորության տակ ներկաներ իջան եկեղեցվո մեծ սրահը՝ մասնակցելու համար համագաղութային ճաշին։

(Ֆրեզնո, «ՆՈՐ ՕՐ» թերթ, 15 ապրիլի 1955 թ.)

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՑԸ ՍԱՆՏԻԱԳՈ

Սանտիագո, մայրաքաղաքը Չիլիի հանրապետության, գտնվում են շատ քիչ թվով հայախոս ընտանիքներ։ Գաղութի ցանկության ընդառաջելով գերաշնորհ Սիոն սրբազանը այցի է գնացել մեր ազգասեր հայրենակիցներին՝ ընկերակցությամբ հոգեշնորհ Հարություն վարդապետ Մուշյանի։

Սրբազան հայրն ուսումնասիրել է հայ գաղութի վիճակը, կազմակերպել է դասախոսություններ, անգլիական եկեղեցիի մեջ պատարագել ու քարոզել է, տեղեկություններ է տվել արգենտինահայ գաղութի և Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի մասին։

Իր այս կարճ այցելության ընթացքին մեծ օգուտներ է տվել սրբազան հայրը Չիլիի հայ գաղութին։ Հաջողվել է ի մի հավաքել բոլորը, կազմել է վարչություն՝ նախագահությամբ ծանոթ վաճառական պարոն Ե. Քեռնթեճյանի, որպեսզի ծրագիր-կանոնագիր պատրաստի և կառավարության վավերացման ենթարկելուց հետո, հող գնի՝ հայկական եկեղեցի ու դպրոց շինելու համար։

Սրբազան հայրը, Հարություն վարդապետ Մուշյան և անոնց հետ ազգայիններ Պ. Կոտյան և Պալապանյան վերադարձել են արդեն Բուենոս-Այրես։

Սանտիագոյում հայ ընտանիքների թիվը հաշվվում է 25, գրեթե բոլորն էլ բարեկիցիկ, իսկ արաբախոս հայրենակիցներն էլ միասին առնելով՝ ավելի քան 1.000 անձ։

***

Վերջացնելուց առաջ 1955-ի այս իմ առաջին հապճեպով գրած թղթակցությունս, հիշեմ, որ Ս. Զատկի առիթով սրբազան հայրը մեկնել է Սան-Պաուլո, Բրազիլիա, ուր մնալու է մոտ երկու ամիս։

***

Ապրիլի վերջին կիրակին Հայ մշակութային միությունը հրապարակով կնշի Միքայել Նալբանդյանի 125-ամյակը։

(Նյու-Յորք, «ԱՐԱՔԵՐ» օրաթերթ, 19 ապրիլի 1955 թ.)



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՔՆՆՈՒԹԻՒՆ 1941-Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱ „ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ“»

ՇԱՎԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(Ռիյատ, 1955 թ., տպ. Ղ. Տոնիկյան, 127 էջ)



Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ և ընտրյալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Շավարշ վարդապետ Դույումճյանը, այս տարի մարտ ամսին, լույս է ընծայել մի հետաքրքիր երկասիրություն՝ «Քննություն 1941-ի Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիո «Կանոնագրության խորագրի տակ։

Հոգեշնորհ հեղինակի կանոնագիտական այդ կուռ երկասիրությունը իրապես ազգօգուտ, լուրջ ու առողջ դատումի արդյունք է, որը իրավագիտական և կանոնագիտական տեսակետից քննության է առնում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական այսպես կոչված 1941 թվականի «Հունվարյան կանոնագրությունը։

Օրշանկահիշատակ և հոգելույս Գարեգին Վեհի մահից հետո Կիլիկյան Աթոռը դեռևս թափուր է։ 1954 թվականի Նոյեմբերին նշանակված ցանկալի ընտրությունը տեղի չունեցավ մի շարք ներքին և արտաքին արգելիչ պատճառների հետևանքով, և Հայրապետական Աթոռի վրայից չի վերացել օգի շղարշը։

Հոգեշնորհ Տ. Շավարշ վարդապետը, ահա, շատ ժեռնհատորեն և հանգամանորեն քննության է առնում 1941 թվականի «Կանոնագրությունը» և գտնում է, որ այն «Կանոն ըլլալն ավելի կարկտան մրն է կանոնագիտության վրա փակցված Սահմանագրությունով (էջ 105), ուրացումն ու ժխտումը սահմանագրության։ 1941 թվականի «Կանոնագրությունը» արդարություն չէ բրած Հայ Եկեղեցվո երկհազարամյա կանոնագիտության, անոր կարգաց և կանոնաց, ավանդությանց... իրավանց, նվիրապետության և եկեղեցական պատժության (էջ 122)։

Հոգեշնորհ հեղինակի այս այլաբանությունը ցույց է տալիս Տ. Շավարշ վարդապետի գովելի նախանձախնդրությունը մեր ազգային-եկեղեցական արժեքների նկատմամբ, նրա խորը հարգանքն ու նվիրվածությունը՝ «Օրենքի, կարգի, կանոնի հանդեպ բոլորանվեր պատկառանքը հայ ժողովրդի և նրա Ազգային Եկեղեցու հանդեպ նրա սրդիական սերը (էջ 10)։

Շավարշ վարդապետը ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. Հակոբյանց միաբանության երիտասարդ ու զարգացած միաբաններից մեկն է, որը ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ աշակերտել է հոգելույս Տ. Եղիշե Դուրյան Պատրիարքին, ապա հետևել է Լոնդոնի համալսարանի աստվածաբանական դասընթացքներին, իսկ հուսկ ուրեմն հետևելով իրավաբանության՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ իրավաբանական վարժարանում, անդամ է ընտրվել Պաղեստինի օրենսգիտական կաճառին։ Որպես ձեռնհաս, կարող և աչքի ընկնող վկայալ և արտոնյալ իրավաբան։

Շավարշ վարդապետը, որպես մեր հայրենաթեր և հավատավոր հոգևորականներից մեկը, իր համալսարանական կրթությամբ, բազմակողմանի զարգացումով, իրավաբանական պատրաստությամբ, լեզվական բարձր կուլտուրայով (նա անթերի տիրապետում է մի շարք եվրոպական և արևելյան լեզուների) իր ուրույն տեղն է գրավում մեր Սիլիցիոյի հոգևորականության շարքերում։

Լինի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի, լինի մեր մյուս նվիրապետական Աթոռների գահակալների ընտրությունները, դրանք միշտ էլ հանդիսացել են պատմական իրադարձություններ մեր ազգային-եկեղեցական կյանքում։ Կաթողիկոսության ընտրությունների առթիվ միշտ էլ ժողվել է ընտրապայքար. և այս անգամ էլ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ընտրությունը, որը հուզվում է «այնքան հրատապ կերպով, արժանի է խոր ուշադրության, անկեղծ մատուցմանց (էջ 9), որովհետև «այժմեականություն վայելող այդ խնդիրը, ընտրելի անձն, անոր պաշտոնեն վեր կենդանի լայն ծավալով և խոր դատողությամբ գոյավիճակ մը հայ իրականության մեջ (էջ 10) և այն «եկեղեցական ցանկով մը հարակից հարցերու, որոնք նույնքան կենսական են ազգային և եկեղեցական տեսակետներով» (էջ 9)։

Համաձայն ենք հոգեշնորհ հեղինակի հետ, որ այսօր մանավանդ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական

ընտրությունը լոկ տեղական հարց չէ. Կիլիկյան միաբանության, Կիլիկյան թեմերի և ժողովրդի մասնակի հարցը չէ, այլ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Մայր Հայրենիքի և բովանդակ հայությունը հետաքրքրող հարց, որից «կախում ունի, հոլակ ուրեմն, սա օրերուս հայության համար իր պատմության փիլիսոփայության վճիռ ներկայացող նշանաբանը՝ ժողովրդական միության և եկեղեցական միաձայնության» (ընդգծումը մերն է.— Ա. Հ.) (էջ 9).

Եպիսկոպոս Գարեգին Նժդեհ

Եպիսկոպոս Գարեգին Նժդեհ

Եպիսկոպոս Գարեգին Նժդեհ

միջազգային դաշինքներով և պետական օրենքներով. Հայ Ազգային Սահմանադրության հիման վրա Լիբանանում և Սիրիայում հայ համայնքների գոյավիճակը երաշխավորված է Լիբանանի 1926-ի Սահմանադրությամբ և Սիրիայի 1928 թվականի Սահմանադրությամբ։

Նույնիսկ 1935 թվականին Սիրիայում հրատարակված է Հայ Ազգային սահմանադրությունը։ Բայց Հայ Ազգային այդ Սահմանադրության մեջ, մի շարք լրացումներ կատարելով չի կարելի նոր կանոնադրություն կազմել Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին համար։ 1941 թվականին Կաթողիկոսական տեղապահ Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանի օրով գումարված կաթողիկոսական ընտրության պատգամավորական ժողովը կազմելով «Կանոնադրություն Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ և Ազգային Սահմանադրության հիման վրա կաթողիկոսի ընտրության նոր կանոններ մշակելով, և Կիլիկիո Կաթողիկոսությունը «Կոստանդնուպոլսո Պատրիարքության սատիճանին իջեցուցած» լինելով, «իրավագիտական, կանոնագիտական և ամեն տեսակետներով սխալ և գործել պատգամավորական ժողովը, մինչդեռ, եզրակացնում է Շավարշ վարդապետը (էջ 37), «կանկալվեր որ մարդիկ Հայ Եկեղեցվո արքության հանդեպ բարենախանձ ոգով պատկառ կենային, պահպանեին հայրապետական գոյավիճակը, և դայն պահեին դիրքին և դերին մեջ, կանոնադրություն մը մշակելով Ս. Էջմիածնա Հայրապետության գոյավիճակին համաձայն»։

Կարելի չէ այս սուղ էջերի մեջ կանգ առնել Շավարշ վարդապետի այս հույժ արժեքավոր և բովանդակալից գրքի ամեն մի գլխի վրա։

Շավարշ վարդապետի աղեխիզ ձգտումն է եղել «համադրական ու վերլուծական» բաղդատությամբ, ցույց տալ 1863 թվականի Հայ Ազգային Սահմանադրության և 1941 թվականի կանոնադրության տարբերությունը, և հասնել այն եզրակացության, որ «վերջինս ուրացումն է ժխտումը առաջնության»։

Այս գիրքը խմբագրելիս հոգեշնորհ հեղինակը առաջնորդվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նկատմամբ սիրով և գովեցի նախանձախնդրությամբ, «հավատարիմ մնալով մեր Ազգային Եկեղեցու իրավանց, սովորույթներին, առաքելահիմն ու հայրապետահաստատ կարգ ու կանոնին, և մեր Եկեղեցու ժողովրդական ոգուն»։

Բովանդակ հայության սրտագին բաղձանքն է արտահայտում Շավարշ վարդապետը գրելով. «Վեց հարյուրամյա ստրկության և կենդանվույն մարտիրոսացման շրջանեն ետք, տեղական պետությանց բարեխնամ և խաղաղասեր հովանիին ներքև, ազգային և կրոնական աճման և բարգավաճման սա օրերուն, որքա՜ն պիտի փափագեինք Կիլիկյան Աթոռը տեսնել իր արժանի բարձրության վրա, կազմակերպչական, կրթական, կրոնական և հոգևոր դաստիարակության վրա, մեր պահպանողական պատվանդանի վրա այտանակած, մեր որդիական անխառն սիրով և զոհաբերության ոգիով շրջապատված...»։

Այսօր բովանդակ հայ ժողովրդի համար, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար, չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր քան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրության և միասնականության շահերը, քան հայ ժողովրդի և նրա պատնեշի՝ Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի գերագույն շահերը։ Ով այդպես չի մտածում և չի գործում, այնպիսին առատ չուր է մատակարարում հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու թշնամիների չրաղացին։

Ահա այն հետևությունը, ինչ ընթերցողն առանում է կարդալուց հետո հոգեշնորհ Շավարշ վարդապետի այս «զգոնում, լուրջ և բովանդակալից գիրքը»։

Շավարշ վարդապետը գովելի և օրինակելի աշխատանք է կատարել՝ հայ հավատացյալ ընթերցողներին ներկայացնելով զուտ իրավաբանական արժեք ներկայացնող մի աշխատություն, որը թելադրված է օրինականության ոգով և ժողովրդական սկզբունքներով։

Շավարշ վարդապետը իր այս գրքով զբաղվում է հայ ազգային եկեղեցական իրավունքի մի՝ քանի շատ կարևոր հարցով։ Հայ ազգային-եկեղեցական իրավունքում կան շատ հարցեր, որոնց կարող են լուսաբանություն, դիտական մեկնության և մեկնության։ Հայաստանյայց Ազգային Եկեղեցական իրավունքը հետաքրքիր է նաև նրանով, որ նա մի մասնիկն է Իրավունքի համաշխարհային պատմության։ Հայ իրավունքը մեզ չի հասել ինչպես հռոմեական Corpus juris -ը կամ բաբելոնական օրենքների համմուրաբիի ժողովածուն։ Ահա քանի՞ հայ ազգային-եկեղեցական իրավունքի ուսումնասիրությունը ունի ո՞չ միայն իրավաբանական, այլ նաև պատմական արժեք։ Հայ ազգային-եկեղեցական իրավունքի պատմությամբ շատերն են զբաղվել, քա՜ հայ քա՜ օտար գիտնականներից, բայց մինչև այժմ գիտականորեն և ամբողջական ձևով մշակված չէ հայ ազգային-եկեղեցական իրավունքի պատմությունը, մեկնաբանությունն ու ժողովրդականացումը։

Շավարշ վարդապետը ունի բոլոր տվյալները՝ զբաղվելու հայ ազգային-եկեղեցական իրավունքի վերաբերյալ մի շարք կարևոր հարցերի լուսաբանությամբ։ Առաջին իրավաբանական այդ գիրքը իրավունք է տալիս մեզ հոգեշնորհ հեղինակից սպասելու ավելի մնայուն և արժեքավոր երկեր հայ իրավունքի պատմության և մեկնության վերաբերյալ։

Ա. Հ.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՈՒ ԱՐՄԱՇԱՆ, „ՆԵՂՈՍԻ ՀՈՎՏՈՒՄ"

(Հայպետհրատ, Երևան, 1954 թ., 438 էջ)

Վերջերս Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ հայրենադարձ գրող Հակոբ Արամյանի «Նեղոսի հովտում» վեպը։

Հեղինակը իր վեպի համար հետաքրքիր և լայն կտավ է ընտրել՝ պատկերել և գեղարվեստորեն արտացոլել Եգիպտոսում — Նեղոսի հովտում — տեղի ունեցող նախապատերազմյան և պատերազմի շրջանի գեպքերը, Եգիպտոսի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները։

Վեպում խոսվում է նաև մի շարք հայ առաջադեմ գործիչների և անհատների գործուն մասնակցության մասին այդ պայքարում։

Հեղինակը քաջածանոթ է Եգիպտոսի քաղաքական-հասարակական կյանքին, եգիպտահայ գաղութի ազգային-եկեղեցական իրականությանը և վարպետ գրչով կարողացել է պատկերել փարավոնների երկրի քաղաքական կյանքը, նրա պայքարն ու առաջխաղացումը։

Վեպում գործող եգիպտացի, թե հայ կերպարները վերցվել են այդ կյանքի զանազան շրջաններից. հասարակական-քաղաքական տարբեր խավերից։ Հեղինակը աշխատել է տիպականացնել այդ միջավայրից վերցրած իր հերոսներին, կենդանի ու խոսուն անձնավորություններ դարձնել նրանց, իրենց ուրույն հոգեբանությամբ, մտածելու և գործելու եղանակով և ուղղություններով։ Այդ բոլոր մարդիկը պայքարում են հանուն ազատ ու երջանիկ կյանքի, հանուն ապագայի, հանուն մարդկային արժանապատվության։

Վեպի գլխավոր հերոսներից է Եավասպ Այդունին, ռոմանտիկ խառնվածքով մի երիտասարդ, որն ունի ազնիվ սիրտ, պարզություն, անհաղթահարելի ոգի՝ կյանքի ազատագրող ամենադարձությունների նկատմամբ։ Վեպի սկզբնական մասերում նա գիտ չի գտել իր կյանքի ուղին, նա դեռ որոնման մեջ է և խարխափում է անորոշության մեջ։ Բայց արդեն կյանքի ընթացքում նա կոփվում է, առանձնանում և կյանքում տեսած անարդարություններն ու շահագործումը նրան բերում են այն համոզման, որ անարդար է նորկա հասարակական կյանքը, ուր ժողովրդի բոլոր անիրավությամբ և սականգով են վեր բարձրանում։

Աղքատ ծնողների զավակ, բայց ընդունակ Եավասպը համալսարանական կրթություն է ստանում միլիոնատեր մի ոմն Աբրահամյանի փոգով և դառնում նրա աղջկա՝ Հիլդայի փեսայացուն, և ապա ծանոթանալով մի շարք հեղափոխական բանվորների՝ Աշոտ Ասրյանի և Սև Սերոբի, ինչպես նաև դեմոկրատական «էլ-Կամահիրի» թերթի խմբագիր Նասր էդ-Դին էլ-Բաքիանու հետ, խզում է իր կապերը Աբրահամյաններից, հրաժարվում է այդ կյանքի բարիքներից և ընտրում է հեղափոխականի փոտ և դժվարին ուղին։

Այս է ահա վեպի հիմնական գաղափարական բովանդակությունը, որի շուրջ դառնում են վեպի գործողությունները ու անհատները։

Վեպում հայտնված և կենդանի կերպարներից են Աշոտ Ասրյանը և Սև Սերոբը։ Աշոտը մի բանվոր արհեստավոր է, կենսուրախ, գիտակից և լավատես։ Նա անհաշտ է ամեն մի անիրավության ու կեղծիքի նկատմամբ։ Նա զուրկ է մնացել բարձր կրթությունից, բայց փոքրանկրթությամբ ձեռք է բերել բավարար գիտելիքներ և դրանով կարողանում է հասկանալ «քաղաքը ու վատը», կյանքը, և իր ուղին հարթել կյանքի դժվարությունների միջով։ Հեղինակը Աշոտին ներկայացնում է նուրբ և զգայուն գծերով։ Նա գիտի ազնվորեն և անկեղծ սիրել, հարգել ընկերոջը, զոհել իր անձնականը ընդհանուրի շահերին։ Աշոտը վեպի ամենահաջող և կենդանի կերպարներից մեկն է։

Հեղինակին հաջողվել է նաև հայ աշխատավորների կողքին ստեղծել մի քանի եգիպտացի աշխատավորների դրական համակրելի կերպարներ, ինչպիսիք են Նուրին, Ֆաթմային, Սոլիմանը և ուրիշները։

Վեպում լայն տեղ է հատկացված եգիպտացի մտավորականությանը, որն իր ողջ գիտությունն ու կյանքը նվիրել է ժողովրդի լուսավորության նվիրական գործին։ Այդպիսիներից է պրոֆ. Ադլի էլ-Շաֆաաանին։ Մագնուսով մի հասարակ ֆելլահի որդի է նա. կյանքի խորդուբորդ ճանապարհն անցած, ժողովրդին և

հայրենիքին ծառայելու մեջ է նա գտնում մտավորականի բարձր կոչումը, և իր հոգու բոլոր թելերով կապված է զգում իրեն իր ժողովրդին, որից նա քաղում է՝ ուժ, և՝ ներշնչում՝ ապրելու և ստեղծագործելու համար։

Վեպում խոսվում է եգիպտացի և հայ մտավորականի դժվարին, բայց պատվավոր դերի մասին, գրականության, լրագրության, ժողովրդին ծառայելու մասին։

Վեպում գրական կերպարներին զուգընթաց հեղինակին հաջողվել է պատկերել բացասական կերպարների մի ամբողջ շարք։ Եթե գրական կերպարները համակրելի են և ազնվագույն, ապա բացասականները անմարդկային են ու վանողական։ Եթե առաջիններին նկարագրելիս հեղինակը օգտվում է պայծառ գույներից, ապա վերջիններին տիպականացնելու համար գորշ գույներ չի խնայում։

Ժորժ Բուսթանին բացասական կերպար է, ապազգայնացած, մարդկային խիղճը կորցրած մի ձեռնարկատեր, որի սրբությունն արբացը փողն է, շահը։ Ամեն ինչի վրա նա նայում է շահի տեսանկյունով, և որի հարբությունն մի շյուղն անգամ ձեռք չի բերված արդար քրտինքով և ուղիղ ճանապարհով։ Բուսթանին հայ է, բայց ապազգայնացած, հայերեն գրել-կարդալ անգամ չգիտե։ Եթե վեպի գրական հերոսները բուռն հայրենասերներ են և հպարտ են իրենց հայրենասիրությամբ և Հայրենիքով, ինչպես օրինակ Եավաշը, Աշոտը և ուրիշները, որոնք գաղափարանքով, ազգային արժանապատվության զգացումով են խոսում իրենց Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին, ապա Բուսթանու և նրա նմանների համար միանգամայն խորթ է այդ զգացումը։ Նրա համար կյանքում ունայ է միայն շահը և եթե այդ շահը պահանջի, նա ակտիվորեն կգնի նաև իր Հայրենիքի թշնամիներին։

Բուսթանու ընտանիքում ընտանեկան հարաբերությունները ևս հիմնվում են փողի վրա. Մարգարիտը՝ նրա կինը, այլասերված է քարոզապես, ինչպես սնանկացած են հոգևոր իր ամուսինն ու ամբողջ շրջապատը։ Բուսթանիների և նմանների ընտանիքները բարոյական հիմքից զուրկ են. նրանց խարխլված են շահի, ոսկու և կեղծ զգացմունքների վրա։

Վեպի բացասական կերպարներից է նաև Բարունակ Աբրահամյանը։ Մի միլիոնատեր է նա և քաղաքական հայացքներով էլ «լիբերալ», կրթված, ազգային բարեբարի քողամիզ հագած, կողմնակից է Սովետական Հայաստանին, «հայաստանյան» է, ինչպես ասվում է վեպում, բայց նրա հայրենասիրությունն էլ յուրահատուկ է, սահմանափակ։

Վեպում հեղինակը ստեղծել է նաև մի շարք լիրիկական կերպարներ (Շողիկը, Լեյլան), օժտելով նրանց կանացի մուրբ գեղեցիկությամբ ու հայրերով։

Վեպի ընդհանուր արժանիքներից պիտի նշել նաև այն, որ հեղինակը մոտիկից ծանոթ լինելով Եգիպտոսին, նրա կլիմային, բնությանը, պատմական վայրերին, ժողովրդի կյանքի առանձնահատկություններին, կարողացել է գեղագեղ վարպետ գրչով տալ բնության հրաշալի նկարագրություններ՝ եգիպտական փարավոնների փառահեղ բուրգերը, Նեղոսը իր փարթամ պուրակներով և այլն։ Վեպում տեղ են գտել ժողովրդական-ֆոլկլորային երգերի մի շարք գեղեցիկ նմուշներ (էջ 58, 226, 334, 341, 342)։ Դրանց, ինչպես միշտ ընդունված են հեղինակների մոտ, արևելյան էկզոտիկ պատկերներ և սիրերգերի նմուշներ չեն, այլ տանջալի, չարքաշ աշխատանքի ծանր լծի տակ կքած անազատ արևելյի աշխատավորի մշտի ու տանջանքի երգերն են։

Կարդում ես վեպը և քո աչքի առաջ կանգնում է Արևելքը իր ողջ փարթամությամբ և ծայրահեղ աղքատությամբ, իր դասակարգային հակասությամբ. մի կողմից Արևելքի հիանալի բնությունը, եգիպտական գեղեցիկ գիշերները, բուրգերը, սֆինքսները, հարուստների թաղամասերը իրենց հեյլակապ, լուսերից շողշողուն պալատներով, մյուս կողմից խարխուլ, մգլոտած հյուղեր, սով, տառապանք, աղքատություն։ Եվ այդ հազար ու մեկ գիշերների պատրանքը ստեղծող հեքիաթային երկրում իրար են խառնվում եվրոպական «առանգոն ու սֆոկս-արուտոր և հարավի դարերի մեքամաղնոտ ու հրազային «ալա-ֆելլեն»։

«Նեղոսի հովտումն» վեպը, լմնելով հեղինակի առաջին լուրջ գեղարվեստական գործը, զերծ չէ և մանր թերություններից։

Ամփոփելով մեր խոսքը կասենք, որ Հակոբ Արամյանի «Նեղոսի հովտումն» վեպը մնում է արտասահմանյան կյանքը պատկերող ամենահաջ գրականության վերջերս լույս տեսած հաջողված երկերից մեկը։ Ինչպես ասում են՝ «լավը մնայուն է»։ Արամյանի վեպը կարդալուց հետո երկար ժամանակ չի հեռանում հիշողությունից նրա լավն ու գեղեցիկը։ Արամյանի վեպը շնորհնակալ գործ է և գրաբար հատարակությունը սիրով կընթերցի այն։

Գիրքը կազմված է մաքուր և խնամքով։

Ռ. Մ.